1188

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԷՄԻԼ ՕԹՈՅԻ ՈՃՈՎ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ (ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ)

ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1931

45
Հ - 87

2010

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԻՏԱԼԵՐԷՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

45
Հ-87

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԷՄԻԼ ՕԹԹՈՅԻ ՈՃՈՎ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
(ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ)

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ
1931

ԱՄԷՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ

57570-ակ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅՍՏԱՆ
Ս. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

2917-71

2002

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՍ

Գրականութեանս առաջին տպագրութեան յառաջաբանին մէջ շեշտած էի, թէ, Տանդէներու եւ Դասոներու խօսած լեզուին բանալին էր զոր կը ներկայացնէի Ազգիս, որով պիտի կարենար մտնել գեղարուեստական, բանաստեղծական ճոխ գրականութեան մը դռնէն ներս։

Այս քսան եւ երեք տարիներու շրջանին մէջ շատ ու շատերը փորձով հասու եղան անշուշտ ճշմարտութեանս, եւ կ'երաշխաւորեն անոր՝ ապագայ սերունդին առջեւ. եւ արդէն առաջին տպագրութեան սպառումն ալ պերճախօս ապացոյցներէն մին չէ՞։

Գլուխ գործոց մ'իսկ բնաւ կատարեալ չէ, եւս աւելի լեզուի հատորիկ մը։ Այս պատճառաւ սիրով ընեցի համեստ դիտողութիւններն ու ըմբռնաճիւ համեմատ՝ հատորս սրբագրած, ճոխացուցած ու յապաւած ըլլալ կը կարծեմ, առանց դարձեալ Օթթոյի ոճէն շեղելու, որ ցարդ դեռ ընտրելագոյն եանապարհը կը նկատուի լեզուի ուսուցման։

Եթէ բաղդն ունենամ երրորդ տպագրութեան սրբագրութիւնն եւս ընելու, լիուլի վարձատրուած պիտի զգամ ինչին՝ բայց բարեացակամ նուիրած քրտինքս յօգուտ մեր ուսումնասէր մանկտւոյն։

Հ. Ա. Ա. Յ.

§ 1. — Ա.ՅԲՈՒԲԵՆՔ

Ամէն հնչուած բառ մէկ կամ աւելի ձայներէ բաղադրուած է, ու ամէն ձայնի՝ համապատասխան նշան մը կայ գրուած բառին մէջ։

Նախնական ձայներու նշանները՝ գրերն են որ այբբուբենը կը կազմեն։

Իտալերէն լեզուի գրերը 21 հատ են։

A,	a	ա	N,	n	էննէ
B,	b	պի	O,	o	օ
C,	c	ջի	P,	p	բի
D,	d	տի	Q,	q	գու
E,	e	է	R,	r	էռռէ
F,	f	էֆֆէ	S,	s	էսսէ
G,	g	ճի	T,	t	դի
H,	h	ա՛քքա	U,	u	ու
I,	i	ի	V,	v	վի
L,	l	էլլէ	Z,	z	ծիթթա
M,	m	էմմէ			

K, գա՛բբա, X, իքս, Y, ի՛փսիլոն, W, վի (կրկին)։

Ասոնցմէ հինգը a, e, i, o, u ձայնաւոր են, միւսները բաղաձայն։ Իսկ K, X, Y, W, գրերն իտա-

լերէն լեզուն չունի, սակայն զանոնք կը գործածէ մի քանի լատիներէն և օտար բառերու մէջ[1]։

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամբողջական և կատարեալ այբուբեն մը, կը պահանջէ, որ ամէն ձայնի՝ այբուբենական նշան կամ գիր մը համապատասխանէ. այս կը պակսի իտալերէնի մէջ, և ստուգիւ e և o գրերէն իւրաքանչիւրն ունի երկու ձայն (e բաց և e գոց, o բաց և o գոց). այսպէս s և z գրերն (s խիստ և s քաղցր, z խիստ և z քաղցր), և c ու g գրերը (c հագագային և c՝ քնային, g հագագային և g՝ քնային). ասոր համար իտալերէնի 21 տառերն 27 և աւելի ձայներ հանելու պէտք են ծառայել, առանց հաշուելու հագագային ձայներն որ կը գրուին այսպէս, gn՝, gl՝, sc՝.

§ 2. — ՇԵՇՏ

Իտալերէն լեզուի իւրաքանչիւր բառ շեշտ ունի՝ որ կը կոչուի ձայնական շեշտ (accénto tónico)[2]. որ է ըսել վանկերէն մին կը հնչուի աւելի զօրաւոր ձայնով քան միւսները։ Բացառութիւն կը կազմեն, ընդհանրապէս յօդերը, յարաբերական դեր. նախադրութիւններն ու շաղկապներն։ Օրինակ.

Italiáno իտալացի. Pietà բարեպաշտութիւն, գթութիւն. Léttera նամակ։

1. Ինչպէս են Kan խիսան, Yacht Զբօսանաւ. Tramway Տրամուայ...։

2. Ձայնական շեշտն երկու է, ծանր կամ բաց շեշտ (accento grave, կամ aperto (`) և սուր կամ գոց շեշտ (accento acuto, կամ chiuso) (´)։ Առաջինը կը գործածուի ընդհանրապէս բառի մը վերջին ձայնաւորին վրայ. իսկ երկրորդը՝ միջին ձայնաւորներու վրայ. բայց երկուքն ալ իրենց զարտուղութիւններն ունին, ըստ բաց կամ գոց e և o ի։ Օր. E բաց rèsto, գոց réstàre։ O բաց pòpolo, գոց pópolàre..., Գրութեանց մէջ, ծանր շեշտը միայն կը գործածուի, վերջին վանկերու վրայ։

Շեշտն որ յաճախ վերջընթեր վանկին վրայ կը դրուի, գործածութեան մէջ նիւթական նշան մը չունի։ Ի բաց առեալ երբ վերջին ձայնաւորի մը վրայ կ՝իյնայ. ինչպէս virtù (առաքինութիւն), metà (կէս), parlò (խօսեցաւ), և այլն[1]։

Շեշտն ընդհանրապէս չորս վանկէն անդին չանցնիր։ Վերջին վանկէն սկսելով, եթէ առաջին վանկին վրայ է, այն բառերը կը կոչուին paróle trónche (կրճատուած բառեր) և այս կրճատումը կ՝ըլլայ միշտ վերջին վանկին վրայ. ինչպէս, bontà (te), pietà (te), virtù (te).

Եթէ երկրորդին՝ կ՝ըսուին paróle piáne (երկար բառեր). օր. pòrta դռան, libro գիրք.

Եթէ երրորդին՝ sdrúcciole (սահուն). օր. vísita, այցելութիւն, ámano կը սիրեն, ridícolo ծիծաղական.

Եթէ չորրորդին՝ bisdrúcciole (կրկնասահուն) օր. críticano կը քննադատեն, dítemelo[2], ըսէք ինձ.

Այս շեշտերուն գործածութիւնը վարժութեամբ կը ստացուի։

§ 3. — ԲԱՂԱՁԱՅՆ ԳՐԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆ ՀՆՉՈՒՄՆԵՐԸ

C գիրն a, o, u ձայնաւորներուն քով k (կամ g) ի ձայն կը հանէ[3]. իսկ e և i գրերէն առաջ չ ի ձայն կը հանէ։

1. Ինչպէս շեշտը կը գործածուի դարձեալ՝ շատ մը միավանկ բառերու վրայ, կրկին իմաստները զանազանելու համար. ինչպէս è–է, e–և. nè–ոչ, ne–անկէ. dà–նա կու տայ, da–բացառականի նշան. sè–իրեն, se–եթէ. di–օր di–սեռական հոլովի նշան, կամ յօդ։

2. Այս գլխուս և առաջին երկու դասերուն մէջ միայն շեշտ պիտի դրուի ամէն բառերու վրայ, հնչման վարժութիւն ստանալու համար, իսկ յաջորդ բոլոր դասերուն մէջ՝ մերթ դժուարանչիւն բառերուն վրայ։

3. Թէ որ c գրքին և e, i ձայնաւորներուն մէջ h, կամ ուրիշ բաղաձայն գիր մը մտնէ, դարձեալ k (կամ g) ի ձայն կը հանէ. ինչպէս, chéto հանդարտ. cleménza գթութիւն։

Օրինակ

Cloáca	Cáne	Cóno	Cúbo	Crósta
գլօա–գա	գանէ	գոնոյ	գուպոյ	գռուդա
աղբանոց	շուն	կոն	խորանարդ	կեղև

Céra	Címa	Ciárla[1]	Ciélo	Cistérna
չէ–սա	չի–մա	չիառ–լա	Չիէ–լոյ	չի–ստէռ–նա
մոմ	գագաթ	շատախօսութիւն	երկինք	Չրամբար

G *գիրը՝ a, o, u ձայնաւորներէն առաջ կ ի ձայն կը հանէ. իսկ e և i գրերէն առաջ ձ ի ձայն կը հանէ Օրինակ.*

Gállo[2]	Góla	Gústo	Gládio	Gráve
կալ–լօ	կօ–լա	կուս–տօ	կլա–տիօ	կռա–վի
աքաղաղ	կոկորդ	ճաշակ	սուր	ծանր

Giálo	Gélo	Giústo	Gióve	Giro
ձիալ–լօ	ձէ–լօ	ձիուս–տօ	ձիօ–վի	ձի–ռօ
դեղին	սառ	արդար	Արամազդ	շրջան

GL *գրերուն առջև եթէ i հանդիպի, g ին ձայնը կը կորսուի և տեղը մեղմ ձայն մը կը մտնէ, գրեթէ մեր յ ին պէս։ Օրինակ.*

Àglio	Véglia	Miglio	Móglie	Lúglio
ա–ղիօ	վէ–ղիա	մի–ղիօ	մօ–ղիէ	լուս–ղիօ
սխտոր	արթնութիւն	կորեակ	ամուսին	յուլիս

1. I հետևեալ վանկերու մէջ մտած է, (cia, gia, cie, gie), միայն՝ c և g տառերը քաղցրացնելու համար, և գրեթէ համր է։
2. Կրկնուած բաղաձայններն աւելի սաստիկ կը հնչուին։

Gn *կը հնչուի գրեթէ նյի, և այս ձայնն աւելի կ'որոշուի յաջորդող ձայնաւորին հետ միասին հնչելով։ Օրինակ.*

Campágna	Montágna	Rigágnolo	Prúgne
գամբա–ղնիա	մոնդա–ղնիա	ռիկա–ղնիոլոյ	բրուռ–ղնիէ
գիւղ	լեռ	առուակ	սալորներ

H *գիրը՝ յինքեան ձայն չի հաներ, բայց երբեմն կը գործածուի c և g գրերուն ձայնը e և i ի առջև խստացնելու համար։ Օրինակ.*

Chéto	Chína	Chiésa	Ghétto	Ghísa
քէ–թօ	քի–նա	քիէ–զա	կէդ–դօ	կի–զա
հանդարտ	զառիվայր	եկեղեցի	հրէից թաղ	թափծու երկաթ

Q *կը գտնուի միշտ* U *գրէն առաջ և քու կը հընչուի։ Օրինակ.*

Quádro	Quésto	Qui	Quóta	Quási
քուռա–տռօ	քուէ–ստօ	քուի	քուօ–թա	քուա–զի
շրջանակ	այս	հոս	բաժին	գրեթէ

SC *մասնիկը՝ e և i գրերէն առաջ մեր շ ի ձայնը կը հանէ։ Իսկ երբ he և hi մասնիկներէ առաջ հանդիպի սք ի ձայն կը հանէ։ Օրինակ.*

Scémo	Sciaráda	Scípido	Schéma	Schiáffo
շէ–մօ	շիա–ռա–տա	շի–փի–տօ	սքէ–մա	սքիաֆֆօ
անմիտ	բառեղծուած	անհամ	ծրագիր	ապտակ

Հրահանգք ընթերցմանց եւ անոնց Հայ· թարգմանութիւնք·

1. — Fáma, véne, tíni, móro, múso; záino, láuro, réuma, scuóla, guísa; bárca, dóte, fórma, látte, métro, náso, pórto, ráso, sáno, tétto, váso, vérza; cápo, córno, cúna, clásse, crédo, céffo, cífra, ciálda, ciúrma; gátto, gómma, guádo, gléba, gráto, giácca, gétto, Giúda, Gióbbe, gíta; tíglio, méglio, fíglio, fóglia, gúglia; chetáre, chímica, chiáve, ghétto, ghígno, quadrúpede, quesíto, quívi, quoziénte, quándo; scéttro, sciáme, scísma, schérno, schiéna.

2. — La láma di quésto coltéllo non táglia. La vita dell'uómo è bréve. Non fáte ágli áltri quéllo che non voléte che gli áltri fácciano a vói. L'Itália e la Fráncia sóno sorélle. Gli Antíchi Románi fúrono sággi e valorósi. Chi non vuol studiáre non impára núlla. Nel bisógno si conóscono gli amíci. Gli alliévi sono spésso puníti dai lóro maéstri.

3. — *Alessándro il Gránde.* - Un giórno che Alessándro si sforzáva di conciliársi con delle larghézze la benevolénza di alcúni Macédoni, Filíppo gli parló in quésti términi: «Spéri tu, o mio fíglio, vedérti restár fedéli colóro che tu avrái guadagnáto con del denáro? Impára che si compéra l'affétto con delle virtù, non con dell'óro».

4. — *L'agricoltóre ed i suoi fígli.* - Un rícco agricoltóre, senténdo la mórte vicína, féce chiamáre i suói fígli e lóro dísse: Nel cámpo che vi láscio c'è un tesóro; non so béne il síto, ma un po' di corrággio ve lo farà ben présto trováre. Appéna si sarà mietúto, smuovéte il vóstro cámpo, scaváte, frugáte, vangáte, non lasciáte nessún pósto óve la máno non pássi e non ripássi. Il pádre mórto, i figli dissódano il cámpo si béne, che in cápo dell'ánno ébbero dóppio raccólto. Il pádre fù sággio d'insegnár lóro che il lavóro è un tesóro.

1. — Համբաւ, երակներ, հնձաններ, թթենի, կնճիթ. պայծառակ, դափնի, յօդացաւութիւն, դպրոց, կերպ. նաւակ, օժիտ, ձև, կաթ, մեռր, քիթ, նաւահանգիստ, սնդուս, առողջ, տանիք, անօթ, կաղամբ. գլուխ, եղջիւր, օրօրոց, դաս, կը հաւատամ, ցուրկ, թուանշան, ծաղ (խմորեղէն), ցկանաւի գերիներ, կատու, խէժ, հուն, հողակոյտ, ախորժելի, բաճկոնակ, ցայտուն, Ցուդա, Ցովբ, չրջան. սուրի բերան, լաւագոյն, որդի, տերև, կոթող. խաղաղել, տարբաբանութիւն, բանալի, թաղ Հրէից, հեգնական ծիծաղ, չորքոտանի, խնդիր, հոն, քանորդ, երբ. թագաւորական գաւազան, գունդ, մեղուաց, հերձուած, կատակաբանութիւն, թիկունք:

2. — Այս դանակին բերանը չի կտրեր. Մարդու կեանքը կարճ է: Մի ընէք ուրիշներուն այն բանը՝ զոր չէք ուզեր որ ուրիշները ձեզի ընեն: Իտալիա և Գաղղիա քոյրեր են: Հին հռովմայեցիները քաջ և իմաստուն եղան: Ով չուզեր սովրիլ՝ բան չի գիտնար: Կարօտութեան մէջ կը ճանչցուին բարեկամները: Ծոյլ աշակերտները միշտ պատժուած են իրենց վարժապետներէն:

3. — Մեծն Աղեքսանդր. — Օր մը, երբ Մեծն Աղեքսանդր կը ջանար առատաձեռնութեամբ իրեն շահիլ մի քանի Մակեդոնացիներու բարեսրտութիւնը, Փիլիպպոս իրեն այսպէս խօսեցաւ. «Կը յուսաս, ով որդեակ իմ, տեսնել քեզ հաւատարիմ մնալ անոնք՝ զորս դու դրամով պիտի շահիս: Սովրէ՛ որ սէրը առաքինութիւններով կը գտնուի, ոչ ոսկւով»:

4. — Հողագործն և իւր որդիքը. — Հարուստ հողագործ մը, իր մահը մօտալուտ զգալով, կանչել տուաւ որդիքն ու ըսաւ իրենց. Այս արտին մէջ զոր ձեզ կը թողում՝ գանձ մը կայ. տեղը լաւ չեմ գիտեր, բայց քիչ մը քաջասրտութիւն շուտով զայն ձեզի գտնել պիտի տայ: Հունձքը եղածին պէս, փորեցէք ձեր արտը, խորցուցէք, փնտռեցէք, դարձեալ փորեցէք, տեղ մի թողուք որ ձեռքէ վրիպի և կրկին չփորուի: Երբ հայրը մեռաւ, որդիքը դաշտն այնպէս տակնուվրայ ըրին՝ որ տարեգլխուն կրկին հունձք ունեցան: Խելացի եղաւ հայրը, որ իրենց սովրեցուց թէ աշխատութիւնը գանձ մ'է:

§ 4. — ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Տասն և մէկ տեսակ կէտ[1] *կայ.*

1. Púnto, (.) *կէտ.* = *հայ. վերջակէտ* (։)
2. due punti, (:) *երկու կէտ* = *միջակէտ* (.)
3. punto e virgola, (;) = *կէտ ստորակէտ* (.,)
4. virgola, (,) *ստորակէտ* (,)
5. punto interrogativo (?) *հարցական* (՞)
6. punto esclamativo *կամ* ammirativo (!) *զարմացական* (՛)
7. parèntesi, () *փակագիծ* ()
8. vìrgolétte, (« ») *չակերտ* (« »)
9. puntíni di sospensióne (...) *կախման կէտ* (...)
10. accénto, *շեշտ* (՝), (՝)
11. apóstrofo, (') *ապաթարց* (')։

Այս կէտերէն զատ Իտալերէնի մէջ կայ նաև ուրիշ նշան մը որ կ'ըսուի Երկարանայ կամ տողադարձ (Divisióne) (-), *որ կը ծառայէ բառերու բաժանման՝ տողադարձի պահուն։*

1. Ch, gh, gn, gl, sc (e), sc (i), sc (a), sc (o) *մասնիկները բնաւ չեն բաժնուիր իրարմէ՝ տողադարձի ժամանակ։*

Օր. *չըլլար* poc-hi, *այլ* po-chi...

2. Cch, ggh, cc, gg, cq, *և բոլոր կրկնուած բաղաձայններն ալ իրարմէ կը բաժնուին հետևեալ կերպով։*

Օր. spéc-chio, *հայելի*, các-cia, *որսորդութիւն*...

3. Bis, cis, dis, es, in, mis, per, pos, sub, tras, trans, *նախադաս միավանկներն պէտք չէ բաժնել ըստ օրինի, բայց այս կանոնը միշտ պահուած չէ, որ ստէպ կը տեսնուի։*

---

1. *Դասընթացքի ժամանակ ընթերցումներուն ուշադրութիւն դնելով աւելի դիւրաւ կը սովրուի կէտադրութեան կանոնը քան թէ ուսմամբ։*

Օր. ci-sal-pi-no... *ոչ թէ* cis-alpino.

4. *Գիծ մը ապաթարցով չի վերջանար. ինչպէս չըլլար* dell'-amore, *այլ* del-l'amore.

5. *Երկու բառից մէջ միութեան գիծ կը դրուի՝ միայն այս կերպ ձևերուն մէջ։*

Grammática francése-italiána, *Գաղ-իտալ. քերականութիւն.*

L'armáta anglo-francese, *Անգղ-գաղղիական բանակը։*

Յարդ սովրեցար մըտաղիր՝
Շեշտերն անուշ իտալեան.
Յառաջ քալէ անձանձիր՝
Ժողուելով միշտ վարդ բուրեան։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ՅՕԳ

Իտալերէնի մէջ երկու տեսակ սեռ կայ, արական և իգական. և երկու յօդ, որոշեալ և անորոշ։

Որոշեալ յօդն (articolo determinativo) *է il կամ lo արականի համար, la իգականի համար։ Իսկ յոգնակիի մէջ i կամ gli արականի համար, le իգականի համար։ Օրինակ.*

Եզակի	*Յոգնակի*
Il – pádre, *հայրը*	I – pádri, *հայրերը*
lo – schiávo, *գերին*	gli – schiávi, *գերիները*
la – cása, *տունը.*	le – cáse, *տունները.*

Ծանօթութիւն. — *Պէտք է գիտնալ որ il և lo չեն կրնար անտարբեր կերպով գործածուիլ։* Il *կը գրուի այն անուանց վրայ, որոնք բաղաձայն գրով մը կը սկսին։* Lo *կը գրուի երբ բառ մը խառն* s *ով կը սկսի և երեն անմիջապէս բաղաձայն մը կը յաջորդէ, ինչպէս* lo spécchio, *հայելին։ Իսկ* z *ով սկսող ար. բառերուն վրայ՝ զարտուղութեամբ մը եզակիի մէջ կը դրուի* lo, *յոգնակիի մէջ* gli, *փոխանակ* il *և* i *ինչպէս* lo zío, *քեռին,* gli zii *քեռիները։*

Ձայնաւորով սկսող բառերէն առաջ, յօդը կը կրճատուի (elídere), *ի բաց առեալ իգական յոգնակիին, որ զրեթէ բնաւ չկրճատուիր արձակի մէջ, ոտանաւորի մէջ ներելի է։*

2917.71
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՈՒ-ԱՅՍՐ ՍՍՌ
Ս. ԱՄ. Ա. ՄԱՇՏՈՑԻ
Ս. ՄԱՍՏԻՈՑԻ ԱՆՎԱՆ

Օրինակ

L'ánno, տարին	Gli[1] ánni, տարիները
l'ingégno, հանճարը	gl'ingégni, հանճարները
l'ánima, հոգին.	le ánime, հոգիները.

Անորոշ յօդն (articolo indeterminativo) է *un* արականի համար, (uno խառն s ով սկսող բառերէն առաջ), *una* իգականի համար։ Օրինակ.

Un pádre, հայր մը	Una cása, տուն մը
úno schiávo, գերի մը.	una scála, սանդուխ մը.

ԲԱՌԱՐԱՆ

Pádre, ար. հայր	Abito, ար. զգեստ
mádre, իգ. մայր	amíca, իգ. բարեկամուհի
fanciúllo, ար. տղայ, մանուկ	giardíno, ար. պարտէզ
líbro, ար. գիրք	uccéllo, ար. թռչուն
caválло, ար. ձի	fióre, ար. ծաղիկ
rósa, իգ. վարդ	onóre, ար. պատիւ
spécchio, ար. հայելի	fratéllo, ար. եղբայր
péra, իգ. տանձ	zía, իգ. հօրաքոյր, մօրաքոյր
cappéllo, ար. գլխարկ, փեղոյր	schióppo, ար. հրացան
álbero, ար. ծառ	ciliégia, իգ. կեռաս
scéttro, ար. թագ. գաւազան	stúdio, ար. ուսում
páne, ար. հաց	sí, այո
pénna, իգ. գրիչ	no, ոչ
pècora, իգ. ոչխար, գառնուկ	mío, ար. իմ
regína, իգ. թագուհի	mía, իգ. իմ
cáne, ար. շուն	e (ձայնաւորէ մ'առաջ ed) և

1. Gli յօդը կը կրճատուի միայն i ով սկսող բառերէն առաջ կա-կուզ հնչուելու համար։

Io ho[1], ես ունիմ	Hó io? ունի՞մ
tu hái, դու ունիս	hái tu? ունի՞ս
égli há, նա ունի	há egli? ունի՞ (ար.)
ella há, » » (իգ.)	há élla? ունի՞ (իգ.)
Noi abbiámo, մենք ունինք	Abbiámo noi? ունի՞նք
vói avéte, դուք ունիք	avéte voi? ունի՞ք
églino hánno, անոնք ունին	hanno églino? (ար.) } ունի՞ն
élleno » » » (իգ.)	» élleno? (իգ.) }

ՀՐԱՀԱՆԳ 1.

Io ho la rósa. Io ho úna rósa. Voi avete il libro. Avete voi un libro? Egli ha uno specchio. Il padre ha il giardino. La madre ha il pane. Il fanciúllo ha lo specchio. Il fanciullo ha una penna. La zia ha una pécora. Mio fratéllo ha un cáne. Il re ha lo scéttro. Noi abbiamo un fióre ed una péra. Voi avete l'uccello. Avete voi un fiore? Io ho l'abito. Ha egli un ábito? Ella ha un cáne. Il fanciullo ha un fratello ed una zia.

ՀՐԱՀԱՆԳ 2.

Ես ունիմ գիրքը։ Ես ունիմ վարդ մը։ Դուք ունիք գլխարկը։ Ունի՞ք շուն մը։ Ունի՞ք հայելի մը։ Նա ունի զգեստը։ Հայրս ունի թռչուն մը։ Նա (իգ.) ունի՞ տանձ մը։ Դուք ունիք հրացանը։ Անոնք ունին պարտէզ մը։ Անոնք (իգ.) ունի՞ն գիրքը։ Ունի՞ն հրացան մը։ Ունի՞ հացը։ Մենք ունինք գլխարկ մը։ Մենք ունի՞նք հրացան մը։ Ունի՞ն (իգ.) ձի մը։ Անոնք ունի՞ն կեռաս մը։ Տղան ունի գիրք մը։ Թագուհին ունի վարդ մը։ Մօրաքոյրս ունի թռչունը։ Եղբայրս շուն մ'ունի։ Իմ մայրս բարեկամուհի մ'ունի։

1. Կը գրուի նաեւ այսպէս, io ò, tu ài, égli à, և այլն. բայց այս ձեւը չատ չի գործածուիր։

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

ՍԵՌ

1. Կանոնաւոր եւ զարտուղի սեռ անուանց

Իտալերէնի մէջ սեռը երկու է, արական և իգական։ Այն բառերն որ o կը վերջանան՝ արական են[1], *իսկ անոնք որ a կը վերջանան իգական են*[2]։ *Այն բառերն ալ որ e կը վերջանան, ոմանք արական են, ոմանք իգական*[3]։

Ար.	*Իգ.*
Il caválло, *ձին*	La caválla, *մատակ ձին*
il cugíno, *հօրեղբօրորդին, հօ-* [*բաքեռորդին*	la cugína, *հօրեղբօրաղջիկը,* [*քեռւոյն աղջիկը*
il paése, *երկիրը, գաւառը*	la párte, *մասը, կողմը*
il látte, *կաթը.*	la tósse, *հազը.*

Այն ար. բառերն որ o կը վերջանան, իրենց իգ. կը կազմուի ընդհանրապէս o փոխելով a ի։ Օրինակ.

Il ragázzo, *տղան*	La ragázza, *աղջիկը*
il sérvo, *ծառան.*	la sérva, *աղախինը.*

1. Այս երկու բառերը միայն բացառութիւն կը կազմեն *mano* ձեռք, և *éco* արձագանգ։

2. Ի բաց առեալ քանի մը բառերէ՝ որոնք յունարենէ ածանցեալ են, ինչպէս, il *poéta* բանաստեղծը, *téma* հրահանգ, և ուրիշ քանի մը մարդ նշանակող բառեր. *dúca* դուքս, *scríba* գրիր, գրագիր, և այլն։

3. Այժմէն կը նշանակեմ որ *ore* վերջացող բառերն, ինչպէս *errôre* երկիւղ, *dolôre* ցաւ, բոլոր արական են. իսկ *i* և *u* վերջացողներէն ոմանք արական են, ոմանք իգական. ինչպէս, il *brindisi* որ կը նշանակէ, մեկուս մը կենդանութեան խմել կամ բարեմաղթել. la *crisi* ճգնաժամը. il *Perù* Բէրու, la *servitù* ծառայութիւնը. բայց սոնց թիւը շատ քիչ է։

Այն բառերն ալ որ e կը վերջանան, իրենց իգ. կը կազմուի e *գիրը* a *փոխելով։ Օրինակ.*

Il padróne, *տէրը*	La padróna, *տիրուհին.*
lo scoláre, *աշակերտը.*	la scolára, *աշակերտուհին.*

Ի բաց առեալ ese *վերջացող ազգ ցուցնող անունները, անց. դերբայ՝ (գոյականաբար առնուած) որ* ente *կը վերջանայ. դարձեալ* èfice *վերջացող և ուրիշ մի քանի ազգականութեան վերաբերեալ բառեր։ Օրինակ.*

Lo artèfice, *արհեստաւորը*	La artèfice, *արհեստաւորուհին*
il Danése, *Դանիացին*	la Danése, *Դանիացի կինը*
il conoscénte, *ճանչուորը*	la conoscénte, *ճանչուորուհին*
il nipóte, *թոռը, եղբօրորդին*	la nipóte, *թոռը, եղբօրաղջիկը*
il consórte, *ամուսինը (այր).*	la consórte, *ամուսինը (կին).*

Այն ար. բառերն որ a կը վերջանան, իգ. կ'ըլլան ընդհանրապէս a *ի տեղ* essa *մասնիկն աւելցնելով։ Օրինակ.*

Il proféta, *մարգարէն*	La profetéssa, *մարգարէուհին*
il poéta, *բանաստեղծը*	la poetéssa, *բանաստեղծուհին*
l'arcidúca, *արքիդուքսը.*	l'arciduchéssa, *արքիդքսուհին.*

Հետևեալ երեք անունները ina *մասնիկը կ'առնուն իգականի համար։ Օրինակ.*

Eróe, *դիւցազն*	Ero*ína*, *դիւցազնուհին*
gállo, *աքաղաղ*	gall*ína*, *հաւը*
re (reg–e), *թագաւորը.*	reg*ína*, *թագուհին.*

Ծանօթութիւն. — *Նոյնպէս քանի մը անձնական յատուկ անուններ կ'առնուն* ina *մասնիկը՝ իգականի համար, սակայն առանց նուազական իմաստի.*

Օրինակ

Andre-*a*, — Andre-*ina*, Անդրէաս, Անդրէուհի
Carl-*o*, — Carl-*ina*, Կարոլոս, Կարոլոսուհի
(Carl-*otta*) » »

Tore վերջացող ար. անուններն, իգ. կ'ըլլան *trice* մասնիկով։ Օրինակ.

L'imperatóre, կայսրը — L'imperatríce, կայսրուհին
il cantatóre, երգիչը. — la cantatríce, երգչուհին.

Sione, zione վերջացողներն բոլոր իգ. են։ Օրինակ.

La missióne, առաքելութիւնը
la nazióne, ազգը.

Իգական են դարձեալ պտղոց անունները։ Օրինակ.

La péra, տանձը, la ciliègia, կեռասը, la mela, խնձորը.

Ի բաց առեալ հետևեալներն, որ կը նշանակեն միանգամայն թէ պտուղը և թէ ծառը։

Il cédro } լեմոնը, լիմոնենին
il limóne }
il dáttero, արմաւը, արմաւենին
il fíco, թուզը, թզենին
il ríbes, հաղարջը, հաղարջենին
il lampóne } արքայամորը (զմաուլա)
} արքայամորենին
l'aráncio, նարինջը, նարնջենին
l'ananásso, անանասը, անանասենին.

Այլեւայլ բացառութիւններ

Ար.	Իգ.
L'abáte, աբբայն, վանահայրը	L'abadéssa, աբբասուհին
il príncipe, իշխանը	la principéssa, իշխանուհին
il gigánte, հսկայն	la gigantéssa, հսկայուհին
il leóne, առիւծը.	la leonéssa, էգ առիւծը.

Անկանոն են

Ար.	Իգ.
Il búe, եզը	La vácca, կովը
il cáne, շունը	la cágna, էգ շունը
l'uómo, մարդը	la dónna, կինը
il montóne, խոյը	la pècora, ոչխարը
il bècco, նոխազը	la cápra, այծը
il pórco, խոզը	la tróia, մատակ խոզը
il máschio, արուն	la fémmina, էգը
il pádre, հայրը	la mádre, մայրը
il maríto, երիկը.	la móglie, կինը.

Քանի մը կենդանեաց անուններ՝ որոնք երկու տեսակներէն մէկ ձեր միայն ունին, այսինքն է կամ արական կամ իգական ձեր. այնպէս որ սեռը զանազանելու համար հարկ է արու կամ էգ կոչումն աւելցնել։ Օրինակ.

Un'aquila máschio, արու արծիւ մը
» » fémmina, էգ » »
uno scoiáttolo máschio, արու սկիւռ մը
» » fémmina, էգ » »
una scimia máschio, արու կապիկ մը
» » fémmina, էգ » »

Ծանօթութիւն. — Սակայն մերթ կարելի է փոփոխուող անուանց յատուկ ածանցական մասնիկներէն մէկուն դիմել՝ սեռը փոխելու կամ զանազանելու համար.

Օրինակ

Scimmi-a, էգ կապիկ
» -otto, կապկի ձագ՝ արու
» -one, մեծ կապիկ՝ »

La scimmia è sempre scimmia, anche vestita di séta, կապիկը միշտ կապիկ է, եթէ նոյն իսկ մետաքս հագուած ըլլայ.
A ogni scimia piace il suo scimiotto, ամէն կապիկ իր նմանը կը սիրէ.

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԿԵՐ

Անուանց փոփոխութեանց ըստ տեսակաց

Ածականք	Գոյականք
ար. -o, իգ. -a	ար. -e, իգ. -e
» -e, » -e	» -a, » -a
	» -o, » -a

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ար. -tore, իգ. -trice (-tora)
2. » -iero, -iere, իգ. -iera
3. » -a, -o, -e } իգ. -essa
4. » ոչ համաճարակ իգ. -ina
5. իգ. արականէն տարբեր արմատով.
6. Միակ սեռ (ար. կամ իգ.) երկուքին ևս.

ԲԱՌԱՐԱՆ

La pórta, դուռն
il gátto, կատուն
la stráda, ճամբան
la spáda, սուրը
il gállo, աքաղաղը
la regína, թագուհին
il nóme, անունը
l'uómo, մարդը
écco, ահաւասիկ
vedúto, տեսած
fù, եղաւ
grande, մեծ.
Il bastóne, գաւազանը
il contadíno, գեղացին
il mercánte, վաճառականը
il negoziánte, վաճառական կամ [խանութպանը
il príncipe, իշխանը
il coltéllo, դանակը
la carrózza, կառքը
sémpre, միշտ
pórta, ունի, կը կրէ
è, է. e, և, ու
piccolo, փոքր.

ՀՐԱՀԱՆԳ 3.

Il contadíno ha una carrózza. Avéte voi un bastóne? La profetéssa ha un bastóne ed una spáda. Noi abbiámo vedúto la regína ed il príncipe. Io ho un gátto, un gállo ed una gallína. La contéssa fù sémpre una grande benefattrice. Il negoziánte ha la tósse. Quest'uómo pórta il mio nóme.

ՀՐԱՀԱՆԳ 4.

Աշակերտուհին տեսած ես։ Կանայք և աղջիկները տեսած ենք։ Գեղջկուհին ձի մ'ունի և վաճառականը սուր մը։ Մենք տեսանք կայսրն ու կայսրուհին։ Մարգարէն մեծ է։ Նա (իգ.) ունի կեռաս, խնձոր և տաձ։ Անոնք տեսած են լիմոնենին, անանասն ու հաղարջը։ Դրացուհին ունի քած (էգ չուն) մը։ Դուք ունիք ճանչուորուհի մը։ Դանիացին ունի տիրուհի մը և եղբօրաղջիկ մը։

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Կանոնաւոր եւ Զարտուղի Թիւ անուանց

1. *Այն բառերն որ o և e կը վերջանան, ինչ տեղ ալ ըլլան, յոքնակիի մէջ i կը փոխուին։ Օրինակ.*

Il sèrvo, *ծառան*	I sérvi, *ծառաները*
il fratéllo, *եղբայրը*	i fratélli, *եղբայրները*
il cárro, *կառքը*	i cárri, *կառքերը*
lo stólto, *յիմարը, խենթը*	gli stólti, *խենթերը*
la máno, *ձեռքը*	le máni, *ձեռքերը*
il cáne, *շունը*	i cáni, *շունները*
la mérce, *վաճառքը.*	le mérci, *վաճառքները.*

2. *Այն իգական բառերն որ a կը վերջանան յոքնակիի մէջ e կ'ըլլան։ Օրինակ.*

La ragázza, *աղջիկը*	Le ragázze, *աղջիկները*
la Chiésa, *Եկեղեցին.*	le Chiése, *Եկեղեցիները.*

3. *Այն արական բառերը որ a կը վերջանան, մեծաւ մասամբ յունարէն են և իրենց յոքնակին կ'ըլլայ i։ Օրինակ.*

Եզ.	*Յոք.*
Il poèta, *բանաստեղծը*	I poéti, *բանաստեղծները*
il téma, *հրահանգը.*	i témi, *հրահանգները.*

4. *Այն անունները որոնց վերջին a գրէն առաջ c կամ g կը գտնուի, յոքնակիի մէջ h մը կը մտնէ՝ բաղաձայններուն խիստ ձայնը պահելու համար։*

Օրինակ

Il dúca, *դուքսը*	I dúchi, *դուքսերը*
l'óca, *սագը*	le óche, *սագերը*
la spíga, *հասկը.*	le spíghe, *հասկերը.*

5. *Այն իգական բառերը որ կը վերջանան* cia, gia, ccia, ggia, *և* scia *յոքնակիի մէջ* i *գիրը կը կորսնցնեն։ Օրինակ.*

La márcia, *չուերգը*	Le márce, *չուերգները*
la brágia, *կայծ (կրակի)*	le bráge, *կայծերը*
la tráccia, *հետքը*	le trácce, *հետքերը*
la spiággia, *ծովեզերքը*	le spiágge, *ծովեզերքները*
la fáscia, *փաթթոցը, երիզը.*	le fásce, *ծրարները.*

Բայց եթէ շեշտը i *գրին վրայ իյնայ, յոքնակիի մէջ ալ պէտք է պահել։ Օրինակ.*

La farmacía – le farmacíe *դեղարանը*
la bugía – le bugíe *ստախօսութիւնները.*

6. *Յոքնակիի մէջ անփոփոխ են. ա.) միավանկ* (monosíllabo) *բառերը. բ.) անոնք՝ որոնց շեշտը վերջին վանկին վրայ է. գ.) անոնք որ i, ie կը վերջանան. դ.) այն հազուագիւտ անունները՝ որոնց վերջին տառը բաղաձայն մ'է։ Օրինակ.*

Il re, *թագաւորը*	I re, *թագաւորները*
la città, *քաղաքը*	le città, *քաղաքները*
l'eclíssi, *խաւարումն (արևու, կամ լուսնի)*	le eclíssi, *խաւարումները (արևու կամ լուսնի)*
il lápis[1], *մատիտը*	i lápis, *մատիտները*
la spécie, *տեսակը.*	le spécie, *տեսակները.*

1. Աւելի գործածական է La matíta *մատիտ։*

7. *Co, go վերջացող թէ ածական և թէ գոյական անուններուն յոք. կ'ըլլայ ci, gi. Օրինակ.*

Amico, բարեկամ, amici. Mágo, մոգ, mági, մոգեր.

Òio, áio *վերջացողներուն յոք. կը կազմուի՝ զեղջելով վերջին o գիրը։ Օրինակ.*

Calzoláio կօշկակար calzolái
scrittòio գրասեղան scrittòi.

8. *Շատ մը o վերջացող ար. գոյականներ, բաց ի սովորական յոքնակի ձևէն (i), ունին նաև իգ. յոքնակի մը։ Օրինակ.*

L'anéllo, մատանին i, իգ. յոք. l'anella
il bràccio, թևը, բազուկը i, իգ. յոք. le braccia
l'osso, ոսկրը i, իգ. յոք. le ossa
il cíglio, յօնք i, իգ. յոք. le cíglia
il légno, փայտը i, իգ. յոք. le legna փայտերը
il múro, պատը i, իգ. յոք. le mura պարիսպները.

9. *Հետևեալ ար. բառերուն յոք. կը կազմուի՝ վերջին տառը* a *ի փոխելով, և այս յոքնակի ձևին մէջ՝ անուններն իգ. սեռի կը փոխուին, անոր համար յօդերն ալ կը համաձայնին։ Օրինակ.*

Il centináio, հարիւրեակը — Le centinaia, հարիւրաւորները
il míglio, մղոնը (1500 մետր) — le míglia, մղոնները
mille, հազար — mila հազարներ
il paio, զոյգը. — le paia, զոյգերը.

10. *Կան բառեր՝ որոնք միայն եզակի կը գործածուին։*

Օրինակ

La máne, առաւօտը — Il brío, չնորհքը
la cárie, նեխութիւնը — la cópia, առատութիւնը
lo rosoglia, հարսանիքը — il fiéle, լեղին, մաղձը
la pròle, սերունդ, զաւակը. — l'étera, եթերը.

11. *Կան բառեր ալ որոնք միայն յոքնակի կը գործածուին։ Օրինակ.*

Le cesóie, մկրատները — Le nari, ռնգունքը
le nòzze, հարսանիքը — le rédini, սանձերը
gli annáli, տարեգրքերը. — le víscere, ընդերք երկրի.

12. *Հետևեալ անուններուն յոք. բոլորովին անկանոն են։ Օրինակ.*

Dío, Աստուած — Déi [1], աստուածներ, դիք
uómo, մարդ, այր — uómini, մարդիկ
móglie, ամուսին, (կին) — mógli, կանայք, հարսունք
búe, եզն — buói, եզներ
mille, հազար — míla, հազարներ
páio, զոյգ. — páia, զոյգեր [2].

13. *Բաղադրեալ անուանց յոքնակին հետևեալ կերպով կը կազմուի.*

1. *Երբ երկու անուններ՝ միևնոյն հոլովին մէջ կը համաձայնին՝ երկուքն ալ յոք. կ'ըլլան։*

---

1. Սովորութիւն եղած է ըսել gli déi, փոխանակ i déi.
2. Կան անուններ ալ որոնք եզ. մէջ արական են, իսկ յոք. մէջ թէ ար. և թէ իգ. յոքնակի ունին. ինչպէս Il dito մատը, i diti (ար. յոք). le dita (իգ. յոք.).

Օրինակ

Capomaéstro, գործաւորապետ	յոր.	capimaestri
capolavóro, գլուխգործոց	»	capilavori
pannolíno, կտաւ	»	pannilini
casamátta, ներքնատուն	»	casematte
mezzalúna, կիսալուսին	»	mezzelune.

2. Առաջին մասն անփոփոխ կը մնայ երբ.

Ա. — Բառի մը վերջին գիրը կրճատուած է, կամ անփոփոխ կը մնայ։ Օրինակ.

Belvedère, հովանոց, պատշգամ	յոր.	belvederi
malconténto, տհաճ, տժգոհ	»	malcontenti
grandúca, մեծ դուքս	»	granduchi
contraccólpo, հակահարուած	»	contraccolpi.

Բ. — Ածական մ'ըլլայ (մանաւանդ մակբայական), կամ եզակի երրորդ դէմքի բայ մ'ըլլայ։ Օրինակ.

Pianofórte, դաշնակ	յոր.	pianoforti
agrodólce, թթուաշ	»	agrodolci
variopínto, գունագոյն	»	variopinti
biancospino, սրափուշ	»	biancospini
lavamáno, կոնքիկ (ձեռք լուալու)	»	lavamani
spazzacamino, ծխան մաքրող	»	spazzacamini.

Գ. — Հակահոլով դիրքով անուն մ'ըլլայ՝ որ երկրորդ մասը կազմողէն կախուած ունենայ։ Օրինակ.

Capogiro, գլխու պտոյտ	յոր.	capogiri
manoscritto, ձեռագիր	»	manoscritti
ragnatélo, սարդիոստայն	»	ragnateli
terrapiéno, հողալից	»	terrapieni

3. Անփոփոխ կը մնայ՝ երկրորդ մասը միայն, եթէ ներկայացնէ հակահոլով անուն մը՝ կախեալ առաջինէն՝ որ փոփոխական է։ Օրինակ.

Capoparte, պարագլուխ	յոր.	capiparte
caposcuóla, դպրոց կազմող նկարիչ	»	capiscuola

(և կամ cápo di párte, capo di scuóla).

4. Երկու մասերն ալ անփոփոխ կը մնան, եթէ առաջինը բայ մ'է իսկ երկրորդն արդէն յոքնակի (կամ հաւաքական կամ ընդհանուր իմաստով անուն մ'է)։ Օրինակ.

Un guástaféste, ուրախութիւն խանգարող մը. յոր. i guastafeste.

un attáccapánni, զգեստակալ մը	յոր.	gli attaccapanni
» baciapile, կեղծաւոր մը	»	i baciapile
» salvagente, մարդապուրծ մը	»	i salvagente
» ammazzasétte, մեծաբան մը	»	gli ammazzasette
» voltafáccia, փոփոխամիտ մը	»	i voltafaccia
» salvavita, կենսապուրծ մը	»	i salvavita
» battistráda, առաջնորդ սպասաւոր	»	i battistrada.

ԲԱՌԱՐԱՆ

Festa, տօն	La tàvola, սեղանը
Natale, Ծնունդ	Betlèmme, Բեթղեհէմ
il temperíno, զմելինը	Pásqua, Զատիկ
il quádro, պատկերը, չրջանակը	Pentecóste, Պենտեկոստէ
	cínque, հինգ
la sorélla, քոյրը	séi, վեց
il sárto, դերձակը	il clíma, կլիման
il monárca, միապետը, թագաւորը	il soldáto, զինուորը
	la fáccia, երեսը, դէմքը
la società, ընկերութիւնը	lo scoláre (-ro), դպրոցականը

lo stuzzicadénti, *ատամնակը-* [*կիտները*
la vácca, *կովը*
la stánza, *սենեակը*
cattólico, *ուղղափառ*, *կաթո-* [*ղիկէ*
quáttro, *չորս*

sétte, *եօթն*
ótto, *ութ*
o, *կամ*. (*ձայնաւորէ մ'առաջ* [*միշտ od*)
avúto, *ունեցած*
sulla, *վրան*
seguírono, *հետևեցան*.

Io avéva, *Ես ունէի*, *կամ ու-* [*նէի*
tu avévi, *դու ունէիր*
égli avéva, *նա ունէր*.

Noi avevámo, *Մենք ունէինք*, [*կամ ունէինք*
voi aveváte, *դուք ունէիք*
éssi avévano, *անոնք ունէին*.

ՀՐԱՀԱՆԳ 5.

I duchi avevano le spade. Avevi tu veduto due o tre spiagge? La sorella aveva i quadri. Gli uomini non hanno veduto gli dei. Le mogli hanno le frutta. Le oche sono di mia cugina. I monarchi hanno veduto i paesi. Il sarto aveva quattro cani, cinque buoi e sei vacche. Avevi le uova? No, io aveva le frutta. Gli scolari avevano i temi. Perchè non avete messo le frutta sulla tavola? Natale, Pasqua e Pentecoste sono le tre più grandi feste dell'anno cattólico.

ՀՐԱՀԱՆԳ 6.

Դպրոցականները զմելիններ ունէին։ Հօրեղբօրաղջիկները պատկերներ ունին։ Ես երեք սենեակ ունէի։ Կանայք հաւկիթներ և պտուղներ ունին։ Դուքսերը չորս քաղաք տեսած էին։ Մարդիկ գնած էին ակռամաքրիչներ։ Գիւղացիները կովեր և եզներ ունէին։ Քաղաքները գինուորներ ունին։ Թագաւորները պալատներ ունին։ Հայրս չորս պատկեր և ութ զմելին ունի։ Երեք մոգեր աստղին հետևեցան որ գիրենք (li condusse) *Բեթղեհէմ առաջնորդեց։ Գիտութեանց ճեմարանը* (accadémia) 66 *անդամ* (membri) *ունի։*

ՁՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Հոլովումն որոշեալ եւ անորոշ յօդերու

Որոշեալ յօդ կը կոչուին այն հոլովելի բառերը, որոնք անուանց և դերանուանց կցելով՝ ցոյց տրուած իրը կ'որոշեն կամ ճշդիւ կը սահմանեն, և են.

Il. Lo. La.

Իսկ անորոշ յօդ անոնք են, որոնք անորոշ քանակութիւն մը ցոյց կու տան, և են Un, Uno, Una.

Որոշեալ յօդերը իրենք իրենցմէ չեն հոլովիր, այլ կը միանան հոլովանշան նախադրութիւններու հետ, որոնք երեք հատ են di, a, da *և կը կազմուին հետևեալ կերպով։*

Եզակի			*Յոգնակի*		
	Ուղ. II			Ուղ. I	
	Սեռ. di il	= del		Սեռ. di i	= dei
	Տրա. a il	= al		Տրա. a i	= ai
	Բաց. da il	= dal		Բաց. da i	= dai
Lo	Սեռ. di lo	= dello	Gli	Սեռ. di gli	= degli
	Տրա. a lo	= allo		Տրա. a gli	= agli
	Բաց. da lo	= dallo		Բաց. da gli	= dagli
La	Սեռ. di la	= della	Le	Սեռ. di le	= delle
	Տրա. a la	= alla		Տրա. a le	= alle
	Բաց. da la	= dalla		Բաց. da le	= dalle

ՕՐԻՆԱԿԲ

Որոշեալ յօդերու Il, lo, la.

Ա. Հոլովումն Il

Եզ. (Singoláre)

Ուղ.	Nominatívo,	Il libro, գիրքը
Սեռ.	Genitívo,	del libro, գրքին
Տրա.	Datívo,	al líbro, գրքին
Հայց.	Accusatívo,	il libro, գիրքը
Բաց.	Ablatívo,	dal libro, գրքէն.

Յոք. (Plurále)

Ուղ.	Nominatívo,	I libri, գրքերը
Սեռ.	Genitívo,	dei libri, գրքերուն
Տրա.	Datívo,	ai libri, գրքերուն
Հայց.	Accusatívo,	i libri, գրքերը
Բաց.	Ablatívo,	dai libri, գրքերէն.

Ծանօթութիւն – Գործիականը կը չենուի con և il իրարու հետ միացնելով. ինչպէս con-il = col libro գրքով, con-la = colla, con-le — colle.

Այս հոլովման տակ կ'երթան բոլոր բաղաձայն գրով սկսող արական անունները.

Բ. Հոլովումն Lo. ար.

Օրինակ առաջին

Ո.	Lo specchio, հայելին	Gli specchi, հայելիները
Ս.	dello specchio, հայելիին	degli specchi, հայելիներուն
Տ.	allo specchio, հայելիին	agli specchi, հայելիներուն
Հ.	lo specchio, հայելին	gli specchi, հայելիները
Բ.	dallo specchio, հայելիէն.	dagli specchi, հայելիներէն.

Այս հոլովման տակ կ'երթան բոլոր խառն s ով և z ով սկսող ար. անունները.

Օրինակ երկրորդ L' կրճատեալ

ար. օրինակով

Ո.	L'uomo[1], մարդը	Gli uomini, մարդիկ
Ս.	dell'uomo, մարդուն	degli uomini, մարդերուն
Տ.	all'uomo, մարդուն	agli uomini, մարդերուն
Հ.	l'uomo, մարդը	gli uomini, մարդիկ
Բ.	dall'uomo, մարդէն.	dagli uomini[2], մարդերէն.

իգ. օրինակով

Ո.	L'ánima, հոգին	Le ánime, հոգիները
Ս.	dell'anima, հոգւոյն	delle anime, հոգիներուն
Տ.	all'anima, »	alle anime, »
Հ.	l'anima, հոգին	le anime, հոգիները
Բ.	dall'anima, հոգիէն.	dalle anime, հոգիներէն.

Գ. Հոլովումն La

Ո.	La casa, տունը. բ. ձև. [l'anima, հոգին	Le case, տունները
Ս.	della casa, տանը	delle case, տուներուն
Տ.	alla casa, տանը	alle case, տուներուն
Հ.	la casa, տունը	le case, տունները
Բ.	dalla casa, տունէն.	dalle case, տուներէն.

---

1. Եզ. մէջ lo յօդն ամէն ձայնաւորով սկսող բառերու քով պէտք է կրճատել. իսկ յոք. մէջ միայն անոնց առջև որոնք i ով կը սկսին. ինչպէս gl'Italiani, իտալացիները.

2. I ով սկսող բառերէն առաջ կը գործածուի degl' և agl' կրճատեալ ձևը. այսպէս, dégl'ingégni հանճարներուն, ágl'ingégni ար. հանճարներուն.

Այս հոլովման տակ կ'երթան բոլոր բաղաձայն և ձայնաւորով սկսող իգ. անունները. և եզակիին մէջ ձայնաւորով սկսած բառերուն առջև la յօդին a գիրը կը կրճատուի. յոգ. մէջ ալ կը կրճատուի՝ երբ յաջորդ բառը e ձայնաւորով միայն կը սկսի: Օրինակ l'erbe խոտերը:

Դ. Հոլովումն

Անորոշ յօդերու

Անորոշ յօդերու (articoli indeterminativi) ձեւերն են.

Եզ. արականի համար	Un	Յոգնակին կը պակսի,
» իգականի »	uno	և կը կազմուի մասնական
	una	յօդերով alcuni, certi.

Un կը գործածուի պարզ բաղաձայն գրերով սկսող բառերէն առաջ, իսկ ձայնաւորով սկսողներէն առաջ՝ քաղցրաձայնութեան համար: Օրինակ.

Un libro, գիրք մը. Un onòre, պատիւ մը.

Uno կը գործածուի խառն s ով և z ով սկսող բառերէն առաջ[1]: Օրինակ.

Uno stípite, կոճղ մը. Uno zótico բիրտ մը.

Una կը գործածուի միայն իգական բառերու հետ և կը կրճատուի ձայնաւորով սկսող իգ. բառերէ առաջ. հետևաբար un' ապաթարցով միշտ իգական է:

---

1. Սովորութիւն եղած է մերթ ընտանեաբար z էն առաջ un գործածել փոխանակ uno ի: Օրինակ. Un zio, քեռի մը. Un zéro, զրոյ մը. սակայն զգուշանալի է:

Օրինակ

Una dónna, կին մը. Un'ora, ժամ մը.

Եզ.	Յոգ.
Ո. Un fióre, ծաղիկ մը	Alcuni fiori, ծաղիկներ (քանի մը)
Ս. d'un fióre, ծաղկի մը	di alcuni fiori, ծաղիկներու
Տ. ad un fióre, ծաղկի մը	ad alcuni fiori, ծաղիկներու
Հ. un fióre, ծաղիկ մը	alcuni fiori, ծաղիկներ
Բ. da un fióre, ծաղկէ մը.	da alcuni fiori, ծաղիկներէ.

Uno scudo, alcuni scudi, Un amico, alcuni amici.

Եզ. իգ. Una gallina, հաւ մը... Un'oca, սագ մը...
Յոգ. իգ. alcune galline. alcune oche.

Ե. Հոլովումն

Անորոշ յօդը ստացական ածականով մը և որոշիչ ածականով մը: Օրինակ.

Ո. Mio padre, հայրս	questo palazzo, այս պալատը
Ս. di mio padre, հօրս	di questo palazzo, այս պալատին
Տ. a mio padre, հօրս	a questo palazzo, այս պալատին
Հ. mio padre, հայրս	questo palazzo, այս պալատը
Բ. da mio padre, հօրմէս.	da questo palazzo, այս պալա- [տէն.

Այսպէս կը հոլովին նաև բոլոր իգական անուններն: Օրինակ.

Questa strada, այս ճամբան
di questa strada, այս ճամբուն } և այլն.

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԿԵՐ

Յօդերու

1. Որոշեալ յօդ. { ար. il - i; հգ. lo (l') - gli (gl'). la (l') - le (l').
2. Անորոշ » { ար. - un, uno. հգ. - una (un').
3. Մասնական » { ար. - del, dello (dell') - del (de') [degli (degl'). հգ. - della (dell') - delle (dell').

ԲԱՌԱՐԱՆ

Il signóre, Տէրը, պարոնը
la signóra, տիկինը
il vicíno, դրացին
la vicína, դրացուհին
il maéstro, վարժապետը, ուսուցիչը [
l'uccéllo, թռչունը
la finéstra, պատուհանը
il sónno, քունը
la mórte, մահը
il tópo, մուկը
il libráio, գրավաճառը
béllo, գեղեցիկ, աղուոր
la térra, հողը
il fíglio, որդին
la bottéga, կրպակը, խանութը
eresía, հերետիկոսութիւն.
Io do, ես կու տամ
dáto, տուած
détto, ըսած
il fóglio, թերթը, (գրքի մը)
la fóglia, թերթը, տերևը (ծառի [մը)
la piánta, բոյսը, տունկը
il giardíno, պարտէզը
il cortíle, բակը, գաւիթը
il creatóre, ստեղծողը
il móndo, աշխարհը
il castéllo, դղեակը
il nemíco, թշնամին
dóve (óve), ուր
di chi è? որո՞ւն է
vérde, կանաչ
nemíco, թշնամի.

Io sóno, ես եմ, կամ եմ
tu séi, դուն ես, կամ ես
égli è, նա է, կամ է.
Noi siámo, մենք ենք, կամ ենք
voi siéte, դուք էք, կամ էք
églino sono, անոնք են, կամ են.

ՀՐԱՀԱՆԳ 7.

La casa del vicino. Il libro del maestro. Dove sono le oche della vicina? Chi è il maestro dei figli del vicino? Le cose delle signore. I cani degli scolari. Le botteghe dei librai. Io do i libri ai vicini. Io do l'abito al sarto. I fogli dei libri sono belli. Le foglie degli alberi sono verdi. I gatti sono nemici dei topi. Il giardino è dei fratelli e delle sorelle. Io do gli specchi ai nemici dei librai. L'uomo ha un'anima ed un corpo. Avete detto un'eresia.

ՀՐԱՀԱՆԳ 8.

Հօրեղբօրորդւոյն շունները։ Տուներու պատուհանները։ Ծառերու տերևները թռչնոց կու տամ։ Գրավաճառին խանութը գեղեցիկ է։ Շունը դերձակին կու տամ։ Դրացւոյն պարտէզը գեղեցիկ է։ Աստուած աշխարհի ստեղծողն է։ Քունը մահուան եղբայրն է։ Բարեկամին դղեակը գեղեցիկ է։ Դուք դպրոցական աղաց բարեկամն էք։ Ահաւասիկ թշնամեաց զգեստները և բարեկամաց հայելիները։ Իշխանի դղեակին բակը գեղեցիկ է։ Ահաւասիկ գրքերուն թերթերը։ Ես սաղ մը տեսայ տիրոջ պարտիզին մէջ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Աճանց

Իտալերէն լեզուի մէջ թէ՛ գոյական և թէ ածական անունները բազմաթիւ փոփոխութեանց կ՚ենթարկուին, որոնք կը ծառայեն անուան ԳԼԽԱՒՈՐ իմաստը քիչ մը եղանակաւորելու, բովը դնելով պատահական կամ յաւելուածոյ ուրիշ իմաստ մը՝ ածանցով մ՚արտայայտուած։

Անուանց այս պատահական եղանակաւորումներն երկու տեսակ են.

ա. Փոփոխութիւն՝ գոյական և ածական անուանց համար.
բ. Աստիճանաւորութիւն՝ ածականաց համար.

Փոփոխութիւն գոյական եւ աճ. անուանց

Անուանց փոփոխումները կամ ածանցումները չորս եղանակով կը կազմուի.

1. Առաւելական (accrescitivo).
2. Նուազական (diminutivo).
3. Փաղաքշական (vezzeggiativo).
4. Արհամարհական (spregiativo *կամ* peggiorativo).

Ծանօթութիւն. — Ամէն անուն ընդունակ չէ վերոյիշեալ չորս փոփոխութիւններն ալ ունենալու, և մասնաւորապէս ածականները նուազ ունին քան գոյականները. սակայն ասոնք ալ չեն կրնար միշտ առնուլ բոլոր և յատուկ ածանցները՝ աւելի քան զոր մենք ցոյց կու տանք հոս։ — Մասամբ փորձառութիւն և մասամբ ընտիր բառարանները կը սովրեցնեն թէ ասոնցմէ որոնք այս կամ այն անուան հետ կը գործածուին իտալերէնի մէջ։

1. *Առաւելական իմաստով ածանցներ.* — *Անուան*

մ՚առաւելականը կը կազմուի՝ արմատին վրայ one (zone, cione) *մասնիկն աւելցնելով։ Օրինակ.*

Uómo, *մարդ* — om-óne, *խոշոր մարդ*
libro, *գիրք* — libr-one, » *գիրք*
villáno, *գիւղացի* — villan-zone, *բիրտ գիւղացի*
grásso, *գէր* — grass-one, *շատ գէր.*

Ծանօթութիւն. — 1. Իգ. անուններն այս ածանցող մասնիկն առնելով արական սեռի կը փոխուին։ Օրինակ.

Una cása, *տուն մը* — un casone, *խոշոր տուն մը.*
una dónna, *կին մը* — un donnone, » *կին մը.*

Այսուհանդերձ յաճախ նաև իգականը կը գործածուի ona *մասնիկով, մերթ քիչ մը տարբեր իմաստով։ Օրինակ.*

Tavolóne, *մեծ սեղան* -*ona*, *մեծ սեղան (ճաշարանի).*
Casóne, *մեծ տուն* -*ona*, *նշանաւոր և հարուստ տուն.*

Ծանօթութիւն. — 2. Սակայն ածականներն ու չարժական անուններն իգ. սեռը կը պահեն *ona* մասնիկն առնելով։ Օրինակ.

Grássa, *պարարտ* — grass*sona*, *շատ պարարտ.*
una contadina, *գեղջկուհի մը* — una contadin*ona*, *բիրտ գեղջկուհի մը.*

Ուրիշ ածանցներ՝ որ մերթ առաւելական կը ծառայեն (ցուցնելով սակայն, մեծութենէ աւելի, ստուարութիւն, կոշտութիւն) և են.

occio, -a
ozzo, -a
otto, -a

grass-óccio, *գիրուկ, պարարտ.*
bell'-óccia, *քիչ մը գեղեցիկ.*
bacci-ózzo, *ուժով համբոյր.*
tin-ózza, *փայտէ կոնք.*
bracci-ótto, *ստուար բազուկ.*
cacci-ótta, *հասարակ պանիր.*

2. Նուազականը կը կազմուի հետևեալ մասնիկներով.

etto, -a, libr-étto, գրքոյկ — piccol-étto, փոքրիկ — stanz [-etta, սենեկիկ.
ello, -a, mant-éllo, վերնազգեստիկ — pover-éllo, խեղ- [ճուկ — agn-élla, գառնուկ.
eréllo, -a, trott-eréllo, -a, շոնչանիկ.
cello, -a, baston-céllo, -a, գաւազանիկ.
icello, -a, camp-icéllo, -a, դաշտիկ — ret-icélla, ուռկանիկ.
ino, -a, gatt-íno, -a, կատուիկ.
cino, -a, canton-cíno, -a, անկիւնիկ.
icino, -a, lum-icíno, -a, լուսիկ.
atto, — cervi-átto, — եղնորթ.

Ծանօթութիւն. — 1. Ino, ello, otto, uccio մասնիկներով ալ իգ. անուանց նուազականները կը չենուին՝ զանոնք արականի փոխելով։ Օրինակ.

La scárpa, կօշիկը, մուճակը — lo scarp-ino, մուճակիկը.
una cása, տուն մը — un cas*ino*, un cas*otto*, տնակիկ մը.
la cáppa, կնդղաւոր կրկնոցը — il capp-ello, -uccio, -otto, կրկնո- [ցակը.
la bórsa, քսակը — il bors-ello, քսակիկը.

2. Մերթ նուազականը կը չփոթուի փաղաքշականին հետ՝ խեղճ ոչ գեղեցիկ իմաստով մը, մանաւորապէս յաջորդ մասնիկներով։ Օրինակ.

úccio, -a, piede, pied-uccio, ոտիկ, տոտիկ.
mano, man-úccia, թաթիկ.

uólo, -a, (icciuolo, -a), sentiero, sentier-uolo, կածան.
libro, libr-icciuolo, գրքոյկ.
mázzo, mazz-uolo, պզտիկ փունջ.

úzzo, -a, tisico, tisic-uzzo, նիհար, թոքախտաւոր.
stitico, stitic-uzza, պնդափորիկ.

3. Փաղաքշականը կը կազմուի ընդհանրապէս uccio, և մերթ ino, uolo, olíno մասնիկներով, մասնաւորապէս ածականաց հետ, և այն իրաց համար՝ որ փոքրկութեան շնորհք կ'առնուն։ Օրինակ.

Car-úccio, սիրունիկ — grazios-úccio, շնորհալի
orecch-uccia, ականջիկ — bocc-úccia, բերանիկ
grazios-ino, սիրունիկ — cagn-uòlo, -olíno, շնիկ.
mantellíno, կրկնոցակ.

4. Արհամարհականը կը կազմուի գլխաւորապէս accio, -a մասնիկով։ Օրինակ.

Temp-áccio, գէշ օդ — libr-accio, խեղճ գիրք — cas-accio, խարխուլ տուն.

Սակայն մերթ նաև գաղոբական, անկատարութեան, մօտաւորութեան կամ նմանութեան իմաստով մը՝ յաջորդ մասնիկներով.

ástro, -a, poeta, poet-ástro, անկատար բանաստեղծ.
verde, verd-astro, կանաչորակ.
giallo, giall-astro, դեղնորակ.

ónzolo, -a, medico, medic-ónzolo, բժշկակ, տգէտ բժիշկ.

úcolo, -a, poeta, poet-úcolo, բանաստեղծիկ.
maestro, maestr-ucola, վարժուհեակ.

ípola, -úpola, casa, cas-ipola, -úpola, տնակ.

ógnolo, -a, verde, verd-ógnolo, կանաչորակ.
azzurro, azzur-ógnola, կապտորակ.

iccio, -igno, giallo, giall'iccio, դեղնորակ.
imparato, imparat-iccio, համբակի գործ.
dolce, dolc-igno, անուշկեկ.
rosso, ross-igno, կարմրորակ.

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԿԵՐ

Աճանցներու

1. Առաւելականք .	-one, -zone, -cione. -occio, -ozzo. -otto.
2. Նուազականք . .	-etto. -ello (-erello, -cello, -icello). -ino (-cino, -icino). -atto, -attolo. -uolo, (-icciuolo). (-uccio, -uzzo).
3. Փաղաքշականք .	-uccio, -ino, -uolo.
4. Արհամարհականք.	-accio. -astro. -ónzolo, -úpulo, úpola. -ógnolo. -iccio (-igno).

Հաւաքական բառեր կազմելու համար կը գործածուին ame, ume, oglia, iglia, uglia. *Օրինակ.*

Légno, *փայտ* — Legnáme, *փայտեղէնք*
céspo, *մացառ.* — cespúglio, *մացառք.*

ԲԱՌԱՐԱՆ

Lorénzo, *Լաւրենտիոս* — Pescatóre, *Ձկնորս*
bárca, *նաւակ* — canéstro, *կողով*
brávo, *քաջ, ուժեղ* — pésce, *ձուկն*
suo, *իւր* — méttervi, *հոն դնել*

legnáme, *փայտեղէն* — ammucchiáre, *դիզել*
nóstro, *մեր* — nuóvo, *նոր*
vóstro, *ձեր* — compráto, *գնած*
lóro, *իրենց* — quésto, *այս, ասիկայ*
per, *համար.* — quéllo, *այն, անիկայ.*

ՀՐԱՀԱՆԳ 9.

Vostro cugino è un medicastro. Lorenzino è un bravo giovinetto. Io do il mio cappellaccio a vostro zio. Egli ha comperato un librone. Avete visto la nuova barchetta del pescatore? Sì, ed abbiamo comperato un canestrino per mettervi i pesciolini. Di chi è questo libraccio? Questo libraccio è di nostro cugino e quel libretto è del vostro bravo fratellino. Avete dato il panetto al cagnolino? No, ma ho dato l'uccellino morto al gattino.

ՀՐԱՀԱՆԳ 10.

Եղբայրս գնած է երկու պզտիկ թռչուն և հինգ փոքր ձուկ։ Այս տգեղ գիրքը և այս ազուր պզտիկ կողովն Ալսելմոսիկին քրոջն են։ Շնիկը երիտասարդ ձկնորսին նաւակին մէջ էր։ Երէկուան մեռած թռչունները դրացւոյն չար կատուին տուին։ Կողովիկս ու մեծ գլխարկս տեսա՞ք (տեսած ունի՞ք)։ Այո՛, ես տեսայ (ունիմ տեսած) պզտիկ կողովդ և մեծ գլխարկդ։ Փայտեղէնները մէկ կողմ դիզեցէք։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Մասնական յօդ

Մասնական յօդը, եզակիի մէջ՝ անորոշ քանակութիւն մը, իսկ յոգնակիի մէջ՝ շնչաւոր և անշունչ էակաց անորոշ թիւ մը ցոյց կու տայ. և եզակիի համար կը գործածուի qualche, un po' di, alquanto, *իսկ յոգնակիի համար* alcuni, certi.

Մասնական յօդն աւելի յաճախակի կը գործածուի յոգնակիի մէջ, իսկ եզակիի մէջ միայն նիւթական անուանց հետ (կամ վերացական գոյականաց հետ), սակայն գրեթէ միշտ ուղղական կամ հայցական հոլովով մը միասին՝ (ենթակայ կամ սեռի խնդիր) առանց կանխեալ նախադասութեան։ Օրինակ.

Degli uómini (*այսինքն* alcúni) ch'io non conósco vénnero qui, *քանի մը մարդիկ զորս չեմ ճանչնար հոս եկան (ենթակայ).*

Mangiáva *delle* patáte (*այսինքն* certe), *գետնախնձորներ կ'ուտէր (հայց. սեռի խնդիր).*

Dátemi *del* páne (*այսինքն* un po' di) *հաց տուէք.*

Ho *degli amici* autorévoli, e potrò farvi del bene, *հեղինակաւոր բարեկամներ ունիմ, և պիտի կարենամ ձեզի բարիք ընել.*

Dategli del brodo, delle ova, dei legumi sani, *անոնց արգանակ, հաւկիթներ, առողջարար բանջարեղէններ տուէք։*

Այս մասնական յօդը, յօդախառն նախադրութեան սեռական հոլովին միևնոյն ձևն ունի և կը հոլովի հետևեալ կերպով.

Արական

Եզ.	Ո. և Հց.	Del vino, (*կամ առանց յօդի*, vino)
	Ս.	di vino, *գինիի* [*գինի*
	Տ.	a del vino, *գինիի*
	Բ.	da vino, *գինիէ.*
Յք.	Ո. և Հց.	dei vini, *գինիներ*
	Ս.	di vini, *գինիներու*
	Տ.	a dei vini, *գինիներու*
	Բ.	da vini, *գինիներէ.*

Իգական

Եզ.	Ո. և Հց.	Della cárta, *թուղթ*
	Ս.	di carta, *թուղթի*
	Տ.	a della carta, *թուղթի*
	Բ.	da canta, *թուղթէ.*
Յք.	Ո. և Հց.	delle carte, *թղթեր*
	Ս.	di carte, *թղթերու*
	Տ.	a delle carte, *թղթերու*
	Բ.	da carte, *թղթերէ.*

Արական՝ *ապաթարցով*

Եզ.	Ո. և Հց.	Dell'inchióstro, *մելան*
	Ս.	d'inchiostro, *մելանի*
	Տ.	a dell'inchiostro, *մելանի*
	Բ.	da inchiostro, *մելանէ.*
Յք.	Ո. և Հց.	degli inchiostri, *մելաններ*
	Ս.	di inchiostri, *մելաններու*
	Տ.	a degli inchiostri, *մելաններու*
	Բ.	da inchiostri, *մելաններէ.*

ԲԱՌԱՐԱՆ

Il guánto, ձեռնոցը
il mantéllo, վերարկուն
l'orológio, (oriuòlo) ժամացույցը
la caténa, շղթայն
il quadérno, տետրակը
il férro, երկաթը
l'óro, ոսկին
la fávola, առակը
lo zúcchero, շաքարը
il tè, թէյը
il butírro, (burro), կարագը
il sále, աղը
il látte, կաթը
l'argénto, արծաթը (մետաղ)
mése, ամիս
vuóle? կ'ուզե՞ս
scritto, գրած.
Ricevúto, ընդունած
che, որ, զոր
là, colà, հոն, հոն վարը
non, ոչ, բնաւ
abitualménte, սովորաբար
mi dia, տուր ինձ
bevúto, խմած
la birra, գարեջուրը
il vino, գինին
l'ácqua, ջուրը
lo stivále, մուճակը, կօշիկը
lo straniéro, օտարականը
grázie, շնորհակալութիւն, շնորհակալ եմ
vénde, նա կը վաճառէ, կը ծախէ
óggi, այսօր.

ՀՐԱՀԱՆԳ 11.

Mi dia del caffé e dello zucchero. Ecco del pane e del sale. Il mercante vende caffé, zucchero, sale e tè. Ecco della carne e del pane. Noi non abbiamo né zucchero né butirro. Avevate degli specchi? Si, avevamo degli specchi e degli orologi, ma non avevamo catene. Chi vende guanti in questa città? Lorenzo vende anche dei guanti. Chi ha comperato degli orologi (oriuoli)? Anselmo ha comperato degli orologi e delle catene. Beve birra o vino? Oggi ho bevuto della birra, ma abitualmente bevo vino.

ՀՐԱՀԱՆԳ 12.

Այս օտարականը վերարկուներ կը ծախէ: Դուք նամակներ ընդունեցաք (ունիք ընդունած), բայց դեռ ձեր հրահանգը չէք գրած: Անհաւասիկ տետրակներ: Տուէք ինձ (տուր ինձ) երկաթ, ոսկի և արծաթ: Ո՞վ է այս երիտասարդը (մարդը) զոր ես վարը (հոն վարը) տեսայ (ունիմ տեսած): Վաճառական մ'է որ ամէն բան կը ծախէ, աղ, կարագ, թէյ, շաքար, ևն: Սովորաբար գինի՞ թէ գարեջուր կը խմէք: Այսօր ես խմեցի (ունիմ խմած) կաթ և ջուր: Երեք ամիսէ ի վեր (da) գինի չեմ խմած: Անսելմոս նոր մուճակներ գնած է (ունի):

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Յատուկ անուանք

Յատուկ անունները կը հոլովին di, a, da նախադրութիւններով.

Արական

Ուղ.	Alessándro,	Աղեքսանդր
Հց.		
Սեռ.	d'Alessandro,	Աղեքսանդրի
Տր.	ad Alessandro,	Աղեքսանդրի
Բց.	da Alessandro,	Աղեքսանդրէ.

Իգական

Ուղ.	Maria,	Մարիամ
Հց.		
Սեռ.	di Maria,	Մարիամու
Տր.	a Maria,	Մարիամու
Բց.	da Maria,	Մարիամէ.

Յատուկ անունները Հայերէնի պէս յոգ. չունին.

Գալով յատուկ անուանց յօդի գործածութեան, պէտք է գիտնալ որ,

1. Աշխարհագրական անուններն ըստ կանոնի յօդ կ'ուզեն, բաց ի քաղաքներեն (աւան, գիւղ) փոքր կղզիներեն։ Օրինակ.

L'Europa — L'Itália — La Boémia — La Lunigiána
Il Réno — Le Alpi — Gli Aliséi — Il Verbáno
(Parigi — Venézia — Ródi — Málta).

Սակայն il Cáiro, l'Aia, la Cattòlica, la Maddalénna, l'Aquila, la Spézia և ուրիշ քանի մ'անուններ։ Այսոր հակառակ յաճախ առանց յօդի կը գտնուին նաև «Fráncia», «Inghiltérra» և ուրիշ երկիրներու անուններ, մանաւորապէս իգական, և in ու di նախադրութիւններով կը բանին։ Օրինակ.

In Europa, Եւրոպիոյ մէջ Cuóio di Rússia, Ռուսական
in Olánda, ի Հոլանտա. [կաշի.

2. Երբ յատուկ անունն ու մականունը միասին գործածուին՝ յօդ չեն առնուր։ Օրինակ.

Giuseppe Parini ebbe sempre una dignità e un caráttere singolare, Յովսէփ Փարինի միշտ եզական արժանապատուութիւն մ'ու բնաւորութիւն մ'ունեցաւ.

Torquato Tasso è l'autore della Gerusalemme Liberata, Տորկուատոյ Տասսոյ Երուսաղէմ Ազատեալի հեղինակն է.

3. Յատուկ անունը, մխայնակ, եթէ արական է՝ նոյնպէս յօդ չառնուր. եթէ կնոջ է՝ ընդհանրապէս չառնուր, բայց կրնայ ևս առնուլ։ Օրինակ.

Dánte, Torquáto, Piétro e Páolo (ար.)
Clorínda, Perpétua, Cloè e Terèsa (իգ.)
la Cloè, l'Antonietta, la Cátte (իգ.)

4. Մականունը՝ գրական տեսակէտով կամ առմամբ ընդհանրապէս յօդ կ'ուզէ. սակայն ընտանեբար կամ մեծ ժողովրդականութիւն ունեցող ԱՐԱԿԱՆ անուանց հետ կարելի է զանց ընել։ Օրինակ.

Il Petrárca — l'Ariósto — il Bémbo — il Della Casa — [il Parini.
Parini — Fóscolo — Mazzini — Garibáldi — Cavour.

5. Յոյն և լատին դասական անունները (պատմական և դիցաբանական) բնաւ յօդ չեն առնուր։ Օրինակ.

Omèro, Eschilo, Plínio, Césare, Ciceróne, Cornèlia, [Marzia.
Vénere, Աստղիկ. Márte, Արէս. Giòve, Արամազդ.

Սակայն գիտելի է որ.

1. Եթէ յատուկ անունը միասին ո՛ և է ածական մ'ունի, ածականն իրմէ առաջ միշտ յօդ կ'ուզէ (երբ կոչական հոլով չէ)։ Օրինակ.

La bella Firénze, գեղեցիկն Ֆիրենցէ
Bréscia *la* fórte, ամուրն Բրէշիա
Del próde Baiardo, քաջն Բաիարտ
Pepino il Bréve, Պեպինոս Կարճահասակ.

2. Արական յատուկ անուններն ևս յօդ կ'առնուն երբ բողոքի իմաստով կը գործածուին։ Օրինակ.

Non fare il Rodomónte, Ռատոմոնթէութիւն մի՛ ըներ
Dámmi il Dante ch'è costà sulla tavola, սեղանի վրայի [Տանդէն ինծի՛ տուր
Gli Scipióni, Սկիպիոնները
I Torquáti, Տորկուատոները.

Ծանօթութիւն. — Բանաստեղծական լեզուի մէջ թէ՛ որոշեալ և թէ՛ անորոշ յօդերը շատ աւելի յաճախ զանց կ'ըլլուին քան արձակի մէջ։

ԲԱՌԱՐԱՆ

Piétro, Պետրոս	Maria, Մարիամ
Francésco, Փրանկիսկոս	Amália, Ամալիա
Cárlo, Կարոլոս	Carolina, Կարոլինա
Luígi, Լուդովիկոս	Luisa, Լուդուիկուհի
Enríco, Հենրիկոս	Enrichétta, Հենրիկէ
Giuséppe, Յովսէփ	Giuseppína, Յովսէփինէ
Giovánni, Յովհաննէս	Emília, Էմիլիա
Giácomo, Յակոբ	Alíce, Ալիս
Európa, Եւրոպա	Fráncia, Գաղղիա
Asia, Ասիա	Itália, Իտալիա
Africa, Ափրիկէ	Inghiltérra, Անգլիա
América, Ամերիկա	Germánia, Գերմանիա
Oceánia, Ովկիանիա	Rússia, Ռուսիա, Ռուսաստան
ópera, գործ, արարուած	ierséra, երէկ երեկոյ
dáte, տուէք	la scátola, տուփը
scórso, անցած	quándo, երբ
létto, կարդացած, անկողին	lúngo, երկայն
laggiù, վարը, ցածը	andáto, գնացած, գացած
con, հետը.	adésso, հիմա, այժմ, արդ.

Io éra (éro), Ես էի (էի)	Noi eravámo, Մենք էինք, (էինք)
tu éri, էիր	voi eraváte, էիք
égli, éra, էր.	églino érano, էին.

ՀՐԱՀԱՆԳ 13.

Ecco le favole del Gozzi. Date la scatola a Giovanni ed il quaderno alla Carolina. Vostro cugino è in America. Avete letto il nuovo libro della Guidi? Dove è andato il Camozzi? Ecco i cavalli di Carlo. Luigi Filippo, re di Francia, é morto in Inghilterra. Avete letto l'Olanda del De Amicis? No, ho letto la Spagna. Dov'è adesso la Patti? Il mese scorso era in Rússia. Dove eravate ieri, quando io sono venuto? Eravamo con Giovanni. Vado in letto.

ՀՐԱՀԱՆԳ 14.

Կարդացի՞ր (ունի՞ս դու կարդացած) Սալվատոր Ֆարինայի նոր գիրքը։ Ո՛չ, ես կարդացի Լէօպարտիի գրքերը։ Վերտիի նոր թատերգութիւնը (opera) տեսա՞ր։ Այո՛, երէկ երեկոյ։ Ինձ տուր Լուդովիկոսի տետրակը։ Շնորհակալ եմ Պարոն։ Ահաւասիկ կաբոլոսի տուփը, բայց ո՞ւր է Յովսէփինէի գիրքը։ Ձեր Ամէլիա հօրեղբօրաղջկան գրքերն ու տետրակները հոս են։ Ռուսիա տեսա՞ծ ես? Այո՛, բարեկամ (իմ), անցած ամիս։ Ահաւասիկ Փրանկիսկոսի կօշիկները։ Ո՞ւր էիր երէկ, երբ մենք եկանք։ Վարն էի։

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Մի քանի նախադրութիւնք

Իտալերէնի մէջ յաճախ կը գործածուին հետեւեալ նախադրութիւնները, որոնք միշտ անուանեն ու դերանուանեն առաջ կը դրուին.

A, ի, յ, ց, առ.	Su, վրան
di, (նշան սեռականի)	tra, } մէջ, ի միջի, մէջ տեղը
da, (նշան բացառականի), քովը, տունը	fra, }
in su, դէմ, մօտ	fino, ինչուան, մինչև
in, մէջ	duránte, ի վեր, սկսեալ
sénza, առանց	avánti, առաջ (ամէն բանէ)
per, համար, ձեռքով, միջոցաւ	davánti, առաջ, առջևէն
con, հետ	diétro, ետևը
sótto, տակը	cóntro, հակառակ, դէմ
sópra, վրան, վեր	vérso, դէպ ի, մօտ
secondo, պէս, համեմատ, ըստ	fuorchè, բաց ի, զատ
áppo, քովը, առջևը	lungo, մօտ, քովէն, երկայնութեանը, եզերքէն
rasénte, մօտ, մօտէն, քովէն.	cáusa, պատճառաւ.

Օրինակ

Rasente il muro, *պատին քովէն* (*մօտէն*) (-al capo, *գըլ-*
[*խուն քովէն*)
Per quésto libro, *այս գրքին համար*
Con mío cugino, *հօրեղբօրորդւոյս հետ*
Sénza danáro, *առանց դրամի*
Duránte la pioggia, *անձրեւի ժամանակ*.

Da, in, con, su *նախադրութիւններն՝ սովորաբար որոշեալ յօդին հետ միանալով մէկ բառ կը կազմեն, և կը կոչուին յօդաւոր նախադրութիւնք* (preposizióni articoláte): *Ահա ցուցակը*.

Da			*In*		
da il	= dal,	Հոլովական դէպքի նշան	in il	= nel,	Մէջ, ի.
da lo	= dallo,		in lo	= néllo,	
da la	= dálla,		in la	= nélla,	
da i	= dái,		in i	= néi,	
da gli	= dágli,		in gli	= négli,	
da le	= dálle,		in le	= nélle,	

Con			*Su*		
con il	= col	Գործիական դէպքի նշան, հետ, ընդ, ով	su il	= sul,	Վրայ.
con lo	= cóllo,		su lo	= súllo,	
con la	= cólla,		su la	= súlla	
con i	= cói,		su i	= súi,	
con gli	= cógli,		su gli	= súgli	
con le	= cólle,		su le	= súlle,	

Per *նախադրութեան առած ձեւերն ալ ասոնք են*. pel (per il) *և* pei *կամ* pe' (per i)։ *Իսկ* tra (*կամ* fra) *ի խառնուրդներն հիմա այլ ևս չեն գործածուիր խօսակցութեանց մէջ*։

A, Di, Da, Հոլովանշան

Նախադրութեանց գործածութիւնը

A. *Նախադրութիւնը կը ծառայէ*.

1. — *Գրեթէ ամէն տեսակ խնդիրներ կազմելու համար։ Նախ կը նշանակէ վախճանը և տեղը. դարձեալ ժամանակը, եղանակը, վերջը, միջոցը կամ գործիքը. միաբան ընկերութիւն. սահման, (յարաբերութիւն, համեմատութիւն). գինը. տարածութիւնը. բաժանումն (մասանց)։ Օրինակ*.

Stó *a* casa, *Տունը կը մնամ*
Vó *al* passégio, *պտոյտի կ'երթամ*
Párli *a* voce alta, *բարձրաձայն խօսէ*
Disegnáre *a* pénna, *a* colóri, *գրչով, գոյներով գծագրել*
Riuníto *a*lla famíglia, *ընտանեաց հետ միացած*
A chiaccheráre mi vinci, ma *a* fatto no, *խօսքով ինծի կը յաղթես, բայց գործով ոչ*
Il cavállo fu vendúto à caro prezzo, *ձին սուղ գնով ծախուեցաւ*
Fù erétto *a* tre mila métri sul livéllo del mare, *ծովու մակերեսէն երեք հազար մետր բարձր շինուեցաւ*
Marciávano *a* due *a* due, *զոյգ զոյգ կը քալէին*.

2. — *Դարձեալ կը ծառայէ երբեմն ստորոգեալի խրնդիրը՝ ստորոգեալի բայական մասին հետ միացնելու։ Օրինակ*.

Fu elétto *a* deputato, *երեսփոխան ընտրուեցաւ*
Gregório fu eletto (*a*) duce, *Գրիգոր առաջնորդ ընտրուեցաւ*.

3. — Անորիշ դերբայ ներբակայ մը կառավարելու համար։ Օրինակ.

Non è fácile (*a*) risponder bene, դիւրին չէ լաւ պատասխանելը.

4. — Վախճանական իմաստով։ Օրինակ.

A meglio intender ciò, converrà..., զայս քաջ ըմբռնելու համար, պէտք է...

5. — Պայմանական իմաստով։ Օրինակ.

A voler che il cárro non cigoli..., ուզել որ սայլը չճռռնչէ...

Di. Նախադրութիւնը կը ցուցնէ.

1. — Նախ և առաջ անուանց ստորոգեալի խնդիրը յետոյ նաև, ժամանակ. տեղ (հեռացում. ծագում). պատճառ. սահմանում. ձոխութիւն. թերութիւն. — քիչ անգամ կերպ և միջոց. յանցանք. վիշտ. բաղդատութիւն։ Օրինակ.

Desidério *di* vedére, տեսնելու փափաք
Bramosia *di* léggere, կարդալու բաղձանք
Partirò *di* sera, երեկոյեան պիտի մեկնիմ
Il cagnolino trema *di* freddo, շնիկը ցրտէն կը դողայ
Sérgio è nato *di* padre greco, Սարգիս յոյն հօրմէ ծնած է
È *di* un metro più basso, մեգրի մը չափ աւելի ցած է
Manca *di* critério, ողջմտութիւն չունի.

2. — Դարձեալ մերթ կը կառավարէ առարկայական անորիշ դերբայն ու ներբակայականն։ Օրինակ.

Io crédo (կամ mi páre, ինծի կը թուի) *di* essere un galantuómo, պատուաւոր մէկը կը թուի ինծի
Non è impossibile *di* corréggere i proprii difetti, դժուար չէ անձնական թերութիւններն ուղղելը.

3. — Կը գործածուի՝ բոլորովին աւելադրութեամբ՝ անունէ մ'առաջ։ Օրինակ.

La città *di* Siena, Սիենա քաղաքը
Quel vessatóre *di* don Rodrigo, տէր Ռոդրիկ հարստահարիչը.

Da. Նախադրութիւնը կը ցուցնէ,

1. — Ծագումն. տեղ (հեռացում). ժամանակ. կրաւորական բայից հետ գործողը. մերթ նաև սահմանում. կղանակ. վերջ. մօտաւորութիւն (թուականաց հետ). իսկ եթէ յօդաւոր է, կը նշանակէ նաև պատճառ։ Օրինակ.

Quésta vóce viéne *da* lontano, այս ձայնը հեռուէն կու գայ
Viéne *dal* latino, լատիներենէ կու գայ
Parla *da* maestro, ուսուցչի պէս կը խօսի
Non l'ho visto *da* gran tempo, շատոնց զինք չեմ տեսած
Muóre *dal* cáldo, տաքէն կը մեռնի
La béstia zóppica *da* un piède, կենդանին մէկ ոտքով կը կաղայ.

2. — Կը կառավարէ նաև յաջորդ անորոշ դերբայը։ Օրինակ.

Grída in módo da far paúra, վախցնելու չափ կը պոռայ.
Il discórso fu tanto lungo *da* annoiare tutti, ճառախօսութիւնն այնչափ երկնցաւ որ ամէնը ձանձրացան.
Egli non era sì stólto, *da* crédere a simili fandonie, նա այնքան յիմար չէր որ այդպիսի բարբանջանքներու հաւատար.
Egli grida tanto *da* farmi diventar sórdo, այնչափ կը պոռայ որ զիս պիտի խլացնէ.

ԲԱՌԱՐԱՆ

La scuóla, դպրոցը
il giórno, օրը
la nòtte, գիշերը
la séra, իրիկունը, երեկոյ
la stóffa, կերպասը
sémpre, միշտ
raraménte, քիչ անգամ
rosso, կարմիր
límpido, յստակ, ականակիտ.
La cámera, սենեակը, խուցը
il dovére, պարտքը
il teátro, թատրոնը
la stráda, ճամբան
la vía, ճամբան
a casa, տանը մէջ
vívono, կ'ապրին
vérde, կանաչ
tazza, գաւաթ.

ՀՐԱՀԱՆԳ 15.

Io sono nel cortile. L'uccello è sul tetto. Tu sei nella camera. Sugli alberi del giardino vivono degli uccelli. Il cortile è dietro la casa. Siete venuto durante la pioggia? No signore, durante la pioggia io ero a casa di mio zio. Per chi è quella bella stoffa di seta che ho veduto sulla tavola? Essa è per la sorella di Lorenzo. Nelle vie della città ho veduto molti cani. Dove sono le scarpe? Sono nella camera di Giuseppe. Un bicchiere d'acqua limpida (chiara) vale meglio di una bottiglia di cattivo vino. Ho comperato alcune tazze da tè: portate nella sala da pranzo.

ՀՐԱՀԱՆԳ 16.

Քեռւոյն պարտիզին մէջ թռչուններ տեսայ (տեսած ունիմ)։ Մենք գաւթին մէջ ենք։ Կարոլոս դպրոցականին սենեկին մէջն է։ Աղջկան զգեստին կերպասը կանաչ է։ Պզտիկ թռչունները նոր եկեղեցւոյն տանիքին վրայ են։ Ո՞ւր են կօշիկները։ Անոնք սեղանին վրայ են։ Շուներն ո՞ւր էին երէկ երիկուն։ Անոնք ճամբուն մէջ էին՝ տան առաջ։ Ո՞վ կ'երթայ թատրոն։ Ես դպրոց

կ'երթամ[1]։ Ե՞րբ եկաք սենեկին մէջ։ Այս առտու։ Ո՞վ կոտրեց ծաղկին ամանը։ Ինչո՞ւ միշտ գիշերը կու գաս։ Երէկ ո՞ւր էիք ձեր շնորհալի որդւոյն հետ։ Դրացւոյս քով էի։ Այս սենեակը չորս մետր լայնութիւն և երեք բարձրութիւն ունի։

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Օժանդակ բայ Avére Ունենալ

Պարզ ժամանակներ

Սահմանական Եղանակ Indicatívo

Ներկայ (Presénte)

Io ho, ես[2] ունիմ
tu hai, դու ունիս
égli (esso) ha, նա ունի, ար.
élla (essa) ha, նա ունի, իգ.
Noi abbiámo, մենք ունինք
voi avéte, դուք ունիք
églino (essi) hanno, անոնք ունին
élleno (esse) hanno, անոնք »

Անկատար (Imperfétto)

Io avéva, կամ -vo, ես ունէի
tu avévi, դու ունէիր
égli avéva, նա ունէր.
Noi avevámo, մենք ունէինք
voi aveváte, դուք ունէիք
églino avévano, անոնք ունէին.

---

1. Տեղւոյ վրայ խօսելով՝ որ մասնական կերպով նշանակուած չեն, կը գործածուի միշտ՝ a, da, in նախադրութիւնները՝ առանց յօդի. ինչպէս, Vado a scuóla Դպրոց կ'երթամ. Véngo da casa, Տունէն կու գամ, Sóno in chiesa, Եկեղեցւոյ մէջ են։

2. Յետագայ բոլոր բայերու մէջ, հայ. դերանունները ես, դու, նա, մենք, դուք, անոնք՝ զանց կ'ընեմ։

Կատարեալ (passáto remoto կամ perfètto)

Io ebbi, *ես ունեցայ*
tu avésti, *դու ունեցար*
égli ébbe, *նա ունեցաւ.*

Noi avémmo, *մենք ունեցանք*
voi avéste, *դուք ունեցաք*
églino ébbero, *անոնք ունեցան.*

Ապառնի (Futúro sémplice)

Io avrò, *ես պիտի ունենամ*
tu avrái, *դու պիտի ունենաս*
égli avrà, *նա պիտի ունենայ.*

Noi avrémo, *մենք պիտի ունենանք*
voi avréte, *դուք պիտի ունենաք*
églino avránno, *անոնք պիտի ունենան.*

Թեական Եղանակ (Condizionàle)

Ներկայ (Presente)

Io avréi, *պիտի ունենայի կամ կ'ունենայի*
tu avrésti, *պիտի ունենայիր կամ կ'ունենայիր*
égli avrébbe, *պիտի ունենար կամ կ'ունենար.*

Noi avrémmo, *պիտի ունենայինք կամ կ'ունենայինք*
Voi avréste, *պիտի ունենայիք կամ կ'ունենայիք*
églino avrébbero, *պիտի ունենային կամ կ'ունենային.*

Հրամայական Եղանակ (Imperatívo)

Ներկայ

Abbi (tu), *ունեցէ՛ր*
non avére, *մի՛ ունենար*
ábbia (égli), *թող ունենայ.*

Abbiámo, *ունենա՛նք*
abbiáte, *ունեցէ՛ք*
ábbiano, *թող ունենան.*

Ստորադասական Եղանակ (Congiuntivo)

Ներկայ

Che io ábbia, *որ ես ունենամ*
che tu ábbia, *որ դու ունենաս*
che égli ábbia, *որ նա ունենայ.*

Che noi abbiámo, *որ մենք ունենանք*
che voi abbiáte, *որ դուք ունենաք*
che églino ábbiano, *որ անոնք ունենան.*

Անկատար (Imperfètto)

Che io avéssi, *որ ես ունենայի*
che tu avéssi, *որ դու ունենայիր*
che égli avésse, *որ նա ունենար.*

Che noi avéssimo, *որ մենք ունենայինք*
che voi avéste, *որ դուք ունենայիք*
che églino avéssero, *որ անոնք ունենային.*

Դիտողութիւն

Իտալերէն բայերուն դէմքերը բաւական յայտնի ըլլալով իրենց վերջաւորութենէն, էական դերանուն անուղղայիներն այն ժամանակ միայն կը գրուին երբ իմաստին համար կարևոր են. ապա թէ ոչ հաւասարապէս կրնանք ըսել։ Օրինակ.

Avrái (tu) una pénna, *գրիչ մը պիտի ունենաս*
Avrò (io) anche un libro? *ես ալ պիտի ունենա՞մ գիրք մը*
Avrémo (noi) il tempo di scrivere[1]? *ժամանակ պիտի ունենա՞նք գրելու.*

---

1. Կան չատ մը բացատրութիւններ որոնք յաճախ կը գործածուին և ընդհանրապէս որոշեալ յօդ չեն առնուր։ Ի միջի այլոց կը նշանակենք

Դուք voi քաղաքավարական յոք. ձևին տեղ խտալացիք կը գործածեն միշտ եզակի երրորդ դէմքի իգ. դերանունը Ella[1] և իմաստից մէջ հարկ չկայ յաճախ զայս գործածել, զօրութեամբ կ'իմացուի։ Օրինակ.

(Ella) ha ragióne, signóre, իրաւունք ունիս պարոն
Non può (Ella) venire adésso? հիմա չե՞ս կրնար գալ.

Բայց երբ խօսքը կ'ուղղուի ծառայող անձի մը, գործաւորաց, գիւղացիներու ևն., սովորաբար կը գործածուի յոքնակի երկրորդ դէմքի դերանունը։ Օրինակ.

Avéte témpo di partíre, մեկնելու ժամանակ ունիք
Avéte voi capíto? հասկցա՞ք
Venite qui, հոս եկէք.

ԲԱՌԱՐԱՆ

Il calamáio, կաղամարը
il márco, մարկը (դրամ)
il quattrino, դանգը
la caténa, շղթայ
la líra, il fránco, ֆրանգը
l'anéllo, մատանին
Il centèsimo, հարիւրորդը
l'inchióstro, մելանը
perdúto, կորուսած
trováto, գտած
túttо, բոլոր, ամբողջ
si dice, կ'ըսուի, կ'ըսեն.

հետևեալներն. *in assénza di...*, բացակայութեամբ... *éssere autóre di...*, հեղինակ ըլլալ... *in ária...*, յոդս... *a càccia...*, որսի... *a condizióne che...*, պայմանաւ որ... *sotto dettatúra...*, ընդ թելադրութեամբ... *ad esémpio di...*, իբրեւ օրինակ... *aver intenzióne...*, դիտաւորութիւն ունենալ..., *in onóre di...*, ի պատիւ... *éssere padróne di...*, տէր ըլլալ... *vérso séra...*, երեկոյեան դէմ... *far servízio...*, ծառայութիւն ընել... ևն։

1. Պատճառն այս է որ ժամանակաւ ամէն վայրկեան կը գործածուէր Vossignoría, Ձեր տերութիւնը, մեծութիւնը՝ բառը։ Հիմա այլ ևս չգործածուիր, բայց անոր կազմութիւնը մնացած է։ Դերանունը՝ Ella, կրնայ նաև գրուիլ փոքր e ով, բայց ամէն վրիպակէ զգուշանալու համար՝ լաւ կ'ըլլայ միշտ մեծ E ով գրել զայն։

ՀՐԱՀԱՆԳ 17.

Noi abbiamo dei libri. Avete un calamaio? No, abbiamo delle penne e della carta. Ho un quaderno. Ebbi due fiori. Ha (Ella) cinque marchi, signore? Ho quattro marchi e tre quattrini. Io avrò uno specchio e due coltelli. Avevate dei libri? No, signore, avevamo dei temperini delle catene e degli anelli. Si dice che il vicino abbia la carrozza. Se avesse[1] la carrozza, avrebbe anche i cavalli. Se aveste perduto l'anello d'oro nella camera, l'avreste trovato certamente.

ՀՐԱՀԱՆԳ 18.

Դու գիրք մ'ունիս և նա կաղամար մ'ունի։ Յովհաննէս գրիչներ և տետրակներ ունէր։ Մենք ունեցանք բարեկամներ և ազգականներ։ Թագաւորները միշտ պիտի ունենան բարեկամներ և թշնամիներ։ Գիւղացիները գլխարկներ ունէին։ Տիկնայք տեսած պիտի ըլլային այս գրքերը։ Ի՞նչ տեսաք քեռւոյն պարտիզին մէջ։ Քեռւոյն պարտիզին մէջ տեսանք ծաղիկներ և դուք տեսած էիք տերևներ։ Որո՞նք դրամ պիտի ունենային, կամ կ'ունենային (տղաքներէն)։ Յովսէփ չորս ֆրանգ կ'ունենար եթէ տուած չըլլար երկու ֆրանգ և հինգ հարիւրորդ քեռւոյն բարեկամին։ Ո՞վ պիտի ունենայ ժամացոյցները և զմելիները։ Տղաք պիտի ունենան ժամացոյցները, բայց ոչ զմելիները։

---

1. Se, եթէ, չգոկապէն վերջը, կը գործածուի ստորադասական անկատար, եթէ գլխաւոր նախադասութեան բայը թուական է։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Շար. Avere բային

Բաղադրեալ ժամանակներ

Սահմանական Եղանակ. Յարակատար

(Passáto próssimo)

Io ho avúto, *ես ունեցած եմ*
tu hai » *դու ունեցած ես* } *ես ունեցայ.*
egli à » *նա ունեցած է.*

Noi abbiámo avúto, *մենք ունեցած ենք*
voi avéte » *դուք ունեցած էք*
églino ánno » *անոնք ունեցած են.*

Գերակատար (Trapassáto próssimo)

Io avéva -vo avúto, *ես ունեցած էի*
tu avévi » *դու ունեցած էիր*
égli avéva » *նա ունեցած էր*

Noi avevámo avúto, *մենք ունեցած էինք*
voi aveváte » *դուք ունեցած էիք*
églino avévano » *անոնք ունեցած էին.*

Անցեալ կատարեալ (Trapassáto remóto)

Io ébbi avúto, *ես ունեցայ*
tu avésti » *դու ունեցար*
égli ebbe » *նա ունեցաւ.*

Noi avémmo avúto, *մենք ունեցանք*
voi avéste » *դուք ունեցաք*
églino ébbero » *անոնք ունեցան.*

Անցեալ ապառնի (Futúro anterióre)

Io avrò avúto, *ես ունեցած պիտի ըլլամ կամ պիտի ունենամ*
tu avrái » *դու ունեցած պիտի ըլլաս*
égli avrà » *նա ունեցած պիտի ըլլայ.*

Noi avrémo avúto, *մենք ունեցած պիտի ըլլանք*
voi avréte » *դուք ունեցած պիտի ըլլաք*
églino avránno » *անոնք ունեցած պիտի ըլլան.*

Թեական Եղանակ Անցեալ (Condizionále passáto)

Io avréi avúto, *ես ունեցած պիտի ըլլայի կամ կ'ըլլայի*
tu avrésti » *դու ունեցած կ'ըլլայիր*
égli avrébbe » *նա ունեցած կ'ըլլար.*

Noi avrémo avúto, *մենք ունեցած կ'ըլլայինք*
voi avréste » *դուք ունեցած կ'ըլլայիք*
églino avrébbero » *անոնք ունեցած կ'ըլլային.*

Ստորադասական Եղանակ (Soggiuntívo perfétto)

Յարակատար

Che io ábbia avúto, *որ ես ունեցած ըլլամ*
che tu ábbia » *որ դու ունեցած ըլլաս*
che égli ábbia » *որ նա ունեցած ըլլայ.*

Che noi abbiámo avúto, *որ մենք ունեցած ըլլանք*
che voi abbiáte » *որ դուք ունեցած ըլլաք*
che églino ábbiano » *որ անոնք ունեցած ըլլան.*

Ստոր. Դերականար (Soggiuntívo trapassáto)

Che io avéssi avúto, որ ես ունեցած ըլլայի
che tu avéssi » որ դու ունեցած ըլլայիր
che égli avésse » որ նա ունեցած ըլլար.

Che noi avéssimo avúto, որ մենք ունեցած ըլլայինք
che voi avésté » որ դուք ունեցած ըլլայիք
che églino avéssero » որ անոնք ունեցած ըլլային.

Անորիշ (դերբայ) (Infinitívo)

Ներկայ (presénte)	Անցեալ (passáto)
Avére, ունենալ.	Avére avúto, ունեցած ըլլալ.

Ընդհանրական (Participío)

Ներկայ	Անցեալ
Avénte, ունեցող.	Avúto, ունեցած.

Դերբայ (Gerúndio) (անփոփոխ)

Ներկայ	Անցեալ
Avéndo, ունենալով.	Avéndo avúto, ունեցած ըլլալով[1].

Անորիշ և անցեալ դերբայները կը հոլովին այսպէս.

Avére, ունենալ	avere avúto, ունեցած ըլլալ				
d'avere, ունենալու	d'avere » ունեցած ըլլալու				
ad avere, ունենալու	ad avere » » »				
da avere, ունենալու	da avere » » »				

Ժխտական ընելու համար պէտք է բայէն յառաջ non (ո՛չ) մակբայն աւելցնել, non ò ես չունիմ։

1. Յետագայ բայերուն մէջ զանց պիտի ընեմ, ժամանակներուն, եղանակներուն խոսակերպներն։

ԲԱՌԱՐԱՆ

La traduzióne, թարգմանութիւնը
lo sbáglio, l'erróre, թերութիւնը, սխալը, վրիպակը
il servitóre, ծառան
io crédo, կը հաւատամ, կը կարծեմ
potúto, կրցած
il piacére, հաճոյքը, ախորժը.
Il dispiacére, տհաճութիւնը, խորշանքը
aver tórto, յանցանք ունենալ
avér ragióne, իրաւունք ունենալ
si diceva, կ'ըսուէր
fáre, ընել
conténto, գոհ
méno, նուազ
ragione (իգ.) իրաւունք.

ՀՐԱՀԱՆԳ 19.

Ho avuto una casa. Tu hai avuto una penna. Ha egli avuto il libro? Abbiamo avuto quattro servitori. Il maestro aveva avuto molti scolari. Avrò avuto degli errori nella traduzione? Hai avuto cinque errori. Carlo avrebbe avuto ragiòne, se avesse parlato meno, e voi avreste avuto torto. Signore, Ella avrebbe avuto dei dispiaceri, se avesse scritto quella lettera. Noi avremmo avuto piacere che vostro zio avesse veduto il nostro giardino. Avendo perduto il suo tempo a parlare col servitore, non ha potuto fare la traduzione. Si dice che noi avessimo ragione.

ՀՐԱՀԱՆԳ 20.

Դու ունեցած պիտի ըլլաս[1] կաղամար մը և երկու գրիչ։ Անոնք ունեցած էին[2] տուն մը և պարտէզ մը։ Զորս ծառայ

1. Լինիմ, եղանիմ բայերն խոսակերպի մէջ avere ունենալ, բայով պէտք է թարգմանել։
2. Դիւրութեան համար երբեմն բազադրեալ ձևերով կը դնեմ հայերէն օրինակները։

ունեցանք։ Դուք իրաւունքն ունեցած էիք և անոնք յանցանքն ունեցած էին։ Անոնք սխալ ըրած պիտի ըլլան թարգմանութեան մէջ։ Անոնք առ նուազն հինգ սխալ ունեցած պիտի ըլլան։ Մենք վիշտեր ունեցած պիտի ըլլայինք, եթէ գրած ըլլայինք այս նամակը։ Ժամանակ ունեցած ըլլալով, դուք կրցած պիտի ըլլայիք (ունենայիք) ընել ձեր թարգմանութիւնը։ Կ'ըսուէր որ դուք կորուսած էիք ձեր տետրակը։ Ես կը հաւատամ որ դուք յանցանք ունեցած չէք։ Այս տարի մենք ունեցանք (ունինք ունեցած) խնձորներ և տանձեր, բայց անցեալ տարի մենք ոչ խնձոր և ոչ տանձ ունէինք։

Խօսակցութիւն

Chi à avuto del danaro?
Il ricco mercante à avuto [molto danaro.

Ebbe lo scolare diligente una [ricompensa?
Sì, ebbe una ricompensa dai [suoi genitori.

Quale fu la sua ricompensa?
Ebbe un bellissimo libro e [cinque franchi.

Avete mangiato le frutta del [giardiniere?
No, io non ho mangiato niente.

Quante ore à il giorno?
Il giorno à ventiquattro ore.

Vi prego di darmi il mio da- [naro.
Abbiate pazienza. Fra poco [avrete il vostro danaro.

Che cosa avete mangiato dal [mercante?
Abbiamo mangiato della minestra, del manzo e diversi legumi.

Non avrete paura?
No, non avrò paura.

ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՍ

Éssere Ըլլալ

Պարզ Ժամանակներ

Սահմանական Եղ. Ներկայ

Io sóno, եմ	Noi siámo, եմք
tu sèi, ես	voi siéte, էք
égli è, է.	églino sóno, են.

Անկատար

Io èra (ero), էի	Noi eravámo, էինք
tu èri, էիր	voi eraváte, էիք
egli èra, էր.	eglino èrano, էին.

Կատարեալ

Io fúi, եղայ	Noi fúmmo, եղանք
tu fósti, եղար	voi fóste, եղաք
egli fù, եղաւ.	eglino fúrono, եղան.

Ապառնի

Io sarò, պիտի ըլլամ.	Noi sarémo, պիտի ըլլանք
tu sarái, պիտի ըլլաս	voi saréte, պիտի ըլլաք
egli sarà, պիտի ըլլայ.	eglino saránno, պիտի ըլլան.

Թեական եղ. Ներկայ

Io sarèi, կ'ըլլայի
tu sarésti, կ'ըլլայիր
egli sarèbbe, կ'ըլլար.
Noi sarémmo, կ'ըլլայինք
voi saréste, կ'ըլլայիք
eglino sarèbbero, կ'ըլլային.

Հրամայական եղ. Ներկայ

— —
sii, եղիր,
sia, ըլլայ, թող ըլլայ.
Siámo, ըլլանք
siáte, եղիք կամ եղէք
siano, ըլլան, թող ըլլան.

Ստորադասական եղ. Ներկայ

Che (կամ se) io sia, որ ըլլամ
che tu sia (կամ sii) որ ըլլաս
che egli sia, որ ըլլայ.
Che noi siámo, որ ըլլանք
che voi siáte, որ ըլլաք
che eglino síano, որ ըլլան.

Անկատար

Che (կամ se) io fóssi, որ ըլլայի
che tu fóssi, որ ըլլայիր
che egli fósse, որ ըլլար.
Che noi fóssimo, որ ըլլայինք
che voi fóste, որ ըլլայիք
che eglino fóssero, որ ըլլային.

ԲԱՌԱՐԱՆ

Ricco, հարուստ
póvero, աղքատ
gióvane, երիտասարդ
afflítto, վշտացած
graveménte, ծանր կերպով,
ammaláto, հիւանդ
giocatóre, խաղացող, խաղամոլ.
Difficile, դժուար
fácile, դիւրին
diligénte, փութաջան
quándo, երբ
mólto, շատ
arriváto, հասած
partíto, մեկնած
possíbile, կարելի, հնարաւոր
probábile, հաւանական.

Un uomo povero, խեղճ կամ աղքատ մարդ մը
una donna povera, խեղճ կամ աղքատ կին մը
degli uomini poveri, խեղճ կամ աղքատ մարդիկ
delle donne povere, խեղճ կամ աղքատ կիներ
un ragazzo gentile, կիրթ, ազնիւ պատանի մը
una ragazza gentile, կիրթ, ազնիւ աղջիկ մը
dei ragazzi gentili, կիրթ, ազնիւ պատանիներու
delle ragazze gentili, կիրթ, ազնիւ աղջիկներու.

ՀՐԱՀԱՆԳ 21.

Io sono povero. Tu sei ricco. Il maestro è partito iersera. È (Ella) ammalato, signore? Sì, sono gravemente ammalato. Anche mia figlia fu ammalata per quattro mesi. È arrivato vostro zio? Sì, signora, è arrivato oggi. Quando sarete a Venezia? Sarò a Parigi fra cinque giorni e non a Venezia. Sarà ricca un giorno la signora Emilia? Sarebbe ricca, ma invece sarà sempre povera; suo padre è un giocatore. Siate gentili cogli amici e coi nemici. È vostro cugino a casa? È probabile che non sia a casa. Se fosse a casa avrebbe ricevuto la nostra lettera.

ՀՐԱՀԱՆԳ 22.

Հրահանգը դիւրին էր թէ դժուար էր։ Հոմ էիք անցեալ տարի, երբ ես Փլորենտիա կը գտնուէի (էի)։ Այո՛, պարո՛ն։ Ձեր աղջիկը շատ երիտասարդ էր, երբ ծանր հիւանդացաւ (հիւանդ եղաւ)։ Ե՞րբ Փարիզ պիտի ըլլանք։ Մենք Փարիզ պիտի ըլլանք (fra) երկու կամ երեք օրէն։ Ո՞վ է աւելի հարուստը, ձեր եղբա՞յրը թէ (o, կամ) հօրեղբօրորդին։ Հօրեղբօրորդիս աւելի հարուստ պիտի ըլլար երկուքէն, եթէ կորուսած չըլլար իւր դատը la sua lite)։ Կարելի է որ Յովհաննէսն արդէն մեկնած ըլլայ։ Այո՛, անիկայ երէկ երեկոյ մեկնած է (è partito)։ Եթէ մեկնած չըլլար, մեր նամակը կ'ընդունէր։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Շար. Essere բային

Բաղադրեալ Ժամանակներ

Սահմանական Եղանակ

Յարակատար

Io sono stato, *եղայ կամ եղած եմ*
tu sei » *եղար կամ եղած ես*
egli è » *եղաւ կամ եղած է.*

Noi siamo stati, *եղանք կամ եղած ենք*
voi siete » *եղաք կամ եղած էք*
eglino sono » *եղան կամ եղած են.*

Գերակատար

Io èra (*կամ* ero) stato, *եղած էի*
tu èri » *եղած էիր*
egli èra » *եղած էր.*

Noi eravamo stati, *եղած էինք*
voi eravate » *եղած էիք*
eglino èrano » *եղած էին.*

Անցեալ կատարեալ

Io fui stato, *եղած եղայ կամ եղայ*
tu fosti » *եղած եղար կամ եղար*
egli fù » *եղած եղաւ կամ եղաւ.*

Noi fummo stati, *եղած եղանք կամ եղանք*
voi foste » *եղած եղաք կամ եղաք*
eglino fúrono » *եղած եղան կամ եղան.*

Անցեալ ապառնի

Io sarò stato, *եղած պիտի ըլլամ*
tu sarai » *եղած պիտի ըլլաս*
egli sarà » *եղած պիտի ըլլայ.*

Noi saremo stati, *եղած պիտի ըլլանք*
voi sarete » *եղած պիտի ըլլաք*
eglino saranno » *եղած պիտի ըլլան.*

Թեական Եղ. Անցեալ

Io sarèi, stato, *եղած կ'ըլլայի կամ պիտի ըլլայի*
tu sarésti » *եղած կ'ըլլայիր*
egli sarèbbe » *եղած կ'ըլլար.*

Noi sarémmo stati, *եղած կ'ըլլայինք կամ պիտի...*
voi saréste » *եղած կ'ըլլայիք*
eglino sarèbbero » *եղած կ'ըլլային.*

Ստորադասական Եղ. Յարակատար

Che io sia stato, *որ եղած ըլլամ*
che tu sia » *որ եղած ըլլաս*
che egli sia » *որ եղած ըլլայ.*

Che noi siamo stati, *որ եղած ըլլանք*
che voi siate » *որ եղած ըլլաք*
che eglino siano » *որ եղած ըլլան.*

Գերակատար

Che io fossi stato, որ եղած ըլլայի
che tu fossi » որ եղած ըլլայիր
che egli fosse » որ եղած ըլլար.

Che noi fossimo stati, որ եղած ըլլայինք
che voi foste » որ եղած ըլլայիք
che eglino fossero » որ եղած ըլլային.

Անորիշ դերբայ (կը փոխուի)

Ներկայ	Անցեալ
չունի.	Stato, եղած.

Դերբայ (Gerundio) (անփոփոխ)

Ներկայ	Անցեալ
Essendo, ըլլալով.	Essendo stato, եղած ըլլալով.

Իտալերէնի մէջ՝ Essere բային բաղադրեալ ժամանակներն ինքն իրմով կը կազմուի։ Անցեալ դերբայն (stato) կը փոխուի, այսինքն է թուով և դէմքով կը համաձայնի անուն բայիին հետ. այսպէս նաև միւս բոլոր essere բայով լծորդուած անցեալ դերբայներն։ Օրինակ.

Il padre è stato qui, հայրը հոս եկած է
La madre è stata qui, մայրը հոս եկած է
I ragazzi sono stati qui, տղաքը հոս եկած են
Le ragazze sono state qui, աղջիկները հոս եկած են.

Essere per որ և իցէ բայի մը անորիշ դերբային հետ գործածուած՝ կը նշանակէ վրայ։ Օրինակ.

È lì lì per cadere, իյնալու վրայ է.

Essere a... կը նշանակէ բան մը ընելու զբաղած ըլլալ։ Օրինակ.

La sorella è a ricamare, քոյրը կ'ասեղնագործէ.

Essere in procinto di (essere sul punto di...) կը նշանակէ դարձեալ վրայ։ Օրինակ.

Sono io in procinto di andarvi, երթալու վրայ եմ.

ՆԻՒԴ մի և նոյն իմաստով կը գործածուի նաև stare։

ԲԱՌԱՐԱՆ

Il padróne, տէրը
la crestáia, դերձակուհին
la piázza, հրապարակը (հսրկց.)
la passeggiáta, շրջագայութիւնը
lo straniéro, օտարականը
così, այսպէս
Mónaco, Մոնագոյ
Stoccárda, Ստուտկարդ
prima, առաջ, առաջուց.
Piccolo, պզտիկ, փոքր
la distanza, հեռաւորութիւնը, միջոցը
il moménto, վայրկեանը
cortése, քաղաքավար, սիրելի
vásto, ընդարձակ
grande, մեծ
débole, տկար
fedéle, հաւատարիմ
tróppo[1], չափազանց.

---

1. Հեռեակալ բառերը՝ troppo, չափազանց. molto, շատ. poco, քիչ. tanto, այնչափ. quanto, որչափ, քանի. երբ անուանց հետ կը գործածուին՝ ածական են իտալերէնի մէջ, և հետևաբար կը համաձայնին։ Նախադրութեանց հետ բնաւ չեն գործածուիր։ Օրինակ. troppa distanza, չափազանց հեռաւ. molte donne, շատ կանայք. poche cose, քիչ բաներ. tanti libri, այնչափ գրքեր. quanta carne, որչափ միս։

ՀՐԱՀԱՆԳ 23.

Eravamo (per) in procinto di scrivervi allorchè ricevemmo la vostra lèttera. Dove è stato ieri, signor padrone? Sono stato a Milano. Sei stata cortese collo straniero? Sono stata cortese con tutti. La crestaia è stata iersera al teatro ed oggi è ammalata. La distanza non sarebbe stata troppo grande per noi, se non fossimo così déboli. Siete già stati a Monaco? No, ma siamo stati a Stoccarda ed a Berlino. Era sempre stato fedele il servitore della zia? Le piazze di questa città saranno state grandi prima, ma adesso sono piccole. Questa traduzione sarebbe stata troppo difficile senza il vocabolario. Non sarebbe stato facile trovare tanto danaro in questi momenti.

ՀՐԱՀԱՆԳ 24.

Այս աղքատ տիկինը շատ տկար է, հիւանդ է խեղճը։ Դուք գացած էք[1] (siete stato) այն ընդարձակ պարտէզը զոր մենք երէկ տեսանք (տեսած ունինք)։ Շրջագայութեան ելա՞ր, պարոն (è Ella stata a passeggio?)։ Յովհաննէս շատ շնորհալի եղած պիտի ըլլար այս օտարական պարոնին դիմացը, եթէ նա զինք տխուր տեսած չըլլար։ Եկա՞ծ էք արդէն այս քաղաքը։ Ո՛չ, տիկին, շատ անգամ Մոնագոյ և Ստուտկարդ եղած եմ, բայց հոս եկած չեմ։ Կարելի չէ որ վարժապետը քեզմէ գոհ եղած ըլլայ, թարգմանութիւնդ չափազանց սխալ ունէր։ Թատրոն գացած ես առանց հրահանգդ ընելու։ Ես թատրոն չեմ գացած։ Տունէն մեկնելու վրայ էի՝ երբ ձեր պիտակն (biglietto) ընդունեցայ։

1. Նախընթաց հրահանգին ուշադրութիւն դիր, և ըստ այնմ յարմարցուր, առանց հայերէնին կապուելու։

Խօսակցութիւն

Dov'è stato vostro padre?	È stato due mesi a Parigi.
Dove fu la madre di questo [ragazzo?	Fu a Firenze.
Erano a casa le sorelle di vo- [stro cugino?	No, erano in Chiesa.
Quanto tempo foste a Venezia?	Dodici anni e quindici giorni.
Sarete domani a Costantino- [poli?	No, saremo a Roma.
E dove sarete dopodomani?	Saremo a Verona.
Come sono i dintorni di Como?	I dintorni di Como sono bel- [lissimi.
Quale è il miglior albergo di [Roma?	È il «Grand Hôtel».
Sarebbe felice quella ragazza?	Si, se avesse ancora sua madre.

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

Յուցական դերանուններ եւ ածականներ

Յուցական դերանունն կը կոչուին անոնք որ պաշտօնն ունին գրեթէ մատով նշանակելու և ցոյց տալու անձ մը կամ իր մը՝ որուն անուան կ'ընկերեն, կամ յինքեանս զօրութեամբ կ'իմացուին։ Անոնցմէ ոմանք միայն իբրև գոյական կը գործածուին. ուրիշներ՝ մերթ գոյական, մերթ իբրև ածական[1]։

Ահա ցուցակը.

1. Փոքր տղոց համար քիչ մը դժուարին ըլլալով այս գլխուն մանրամասնութիւնները, կարելի է միայն կարևորները սովրեցնել։

Միայն գոյականաբար գործածուած

1. — *Միայն անձի համար.*

Questi [cotesti] (*արական եզակի*), *այս, ասիկայ*
Quegli, quei (» »), *այն. անիկայ*
Costúi, *անիկայ, այս մարդը*
Colúi, *անիկայ, այն մարդը.*

2. — *Միայն իրի համար,*

Ciò, *այս, այդ, այն բանը.*

3. — *Անձի և իրի համար.*

Désso, *այն մարդը, անիկայ.*

Մերթ գոյականաբար, մերթ ածականաբար գործածուած

Անձի և իրի համար.

Quésto, *այս անձը, ասիկայ*
Cotésto *կամ* codésto, *այդ, ատիկայ*
Quéllo, quel, *այն, անիկայ*
Ésso, *այն, ինքը*
Stésso, medesimo [1], *նոյն, միևնոյն, նոյն բանը*
Tale, cotale, *այնպէս, այնպիսի, մէկը, բան մը, այն, նման*
Siffatto, cosiffatto (così fatto), *այսպիսի, ասոր նման.*

---

1. Stésso *և* medésimo *առանց յօդի՝ միշտ ածական են։*

Օրինակ

Questi è Oméro, poéta sovráno, *ասիկայ Հոմերոս է, մեծ բանաստեղծ*
Chi è *costui?* *ո՞վ է ասիկայ*
Che ti fa *ciò?* *այս ի՞նչ կ'ընէ քեզ*
Egli è desso appúnto, *ճիշտ անիկայ է*
Dámmi cotesto calamáio, *այդ կաղամարն ինծի տուր*
La musica è la *stessa*, *նուագը նոյնն է*
La stessa persona di ieri, *նոյն երէկուան անձը*
Tale accusa è infondata, *այդպիսի ամբաստանութիւն մը ջրուած է.*

Դիտողութիւն. — 1. Questi, costui, questo *ցոյց կու տան վերջաւոր անձ մը կամ իր մը՝ առ որ կը խօսինք կամ կը գրենք.* (cotesti *քիչ գործածուած*), cotestui, cotesto (codesto) *ցոյց կու տան անձ մը կամ իր մը՝ որ վերջ է այն անձին առ որ կը խօսինք կամ կը գրենք.* quegli, colui, quello, quel *ցոյց կու տան անձ մը կամ իր մը՝ որ թէ առաջին և թէ երկրորդ անձէն հեռի է։*

Օրինակ

Questo libro, *այս գիրքը (որ կը գտնուի* { *իմ* / *մեր* } *քով) օգտակար է*

Cotesta città, *այդ քաղաքը (ուր* { *դուն* / *դուք* } *կը գտնուիք) բազմամարդ է*

Quella casa, *այն տունը (ոչ մօտ* { *ինծի* / *ձեզի* } *և ոչ* { *քեզի* / *մեզի*) *վաստառոզ է.*

2. Ciò, թէև քերականօրէն արական սեռի համաձայնութիւն կ'ուզէ, սակայն համազօր է questa cosa, cotesta cosa, quella cosa (չէզոք դերանուն)։ Օրինակ.

Ciò è falso, ասիկայ սխալ է (այսինքն է, questa cosa è falsa, այս բանը սխալ է).

Այս դերանուններն ալ ընդհանուր՝ անուանց պէս կը փոփոխուին։ — Բայց դիտելի է որ.

1. Questi (cotesti), quegli, quei ո՛չ իգական ունին և ո՛չ յոքնակի, և միայն ուղղական հոլովով կը գործածուին։ Օրինակ.

Questi fu felice, quegli sfortunato, ասիկայ երջանիկ եղաւ, միւսն անբաղդ

Ques*ti* non ciberà térr*a* né péltr*o*, ասիկայ ո՛չ հող պիտի ուտէ ո՛չ անագ.

2. Ciò, թէև չէզոք իմաստով դերանուն է, սակայն եզակի արական համաձայնութեամբ կը գործածուի. բայց ամէն հոլովներով կը բանի։ Օրինակ.

Ciò è assolutamente falso, այս բացարձակապէս սխալ է
Di ciò non parlo (սեռ.) ասոր վրայ չեմ խօսիր
A ciò non rispondo (տր.) » » պատասխաներ.

Ծանօթութիւն. — Չէզոք *ciò* ի տեղ, հայցական հոլովով յաճախ կը գործածուի *lo* չէզոք դերանունը։ Օրինակ.

Te *lo* dirò, զայն քեզ պիտի ըսեմ
Io non *lo* posso fare, զայդ չեմ կրնար ընել...

3. Costui, colui կը փոխուին.

իգ. cost–ei, col–ei
յոք. (*ար. և իգ.*) cost–oro, col–oro.

4. Quello (արական), գոյականաբար առնուած՝ միշտ իր ամբողջ ձևով կը գործածուի. ապա թէ ոչ կրնայ կրճատուիլ che յարաբերական դերանունէն և di կամ da ով բանող անունէն առաջ և կ'ըլլայ quel։ Օրինակ.

Questo o *quello* fa lo stesso, այս կամ այն նոյնն է
Solo un punto fu *quel* che ci vinse, միայն մէկ կէտի մէջ [մեզի յաղթեց
Piètole, in *quel di* Mantova, Պիէդոլէ, այն Մանդովացին
Quel da Gubbio, Գուբբիացին.

Իբրև ածական՝ իր ամբողջ ձևը կը պահէ խառն s էն և z էն առաջ, և ձայնաւորի առաջ կ'ապաթարցուի։ Օրինակ.

Quello specchio, այն հայելին
Quello zoticaccio, այն բիրտը
Quel zibaldone, այն խառնուրդը
*Quell'*astro, այն աստղը.

Բաղաձայնէ մ'առաջ որ խառն s չըլլայ՝ կը վերածուի quel։ Օրինակ.

Quel libro, այն գիրքը
Quel sistema, այն ոճը կամ դրութիւնը.

Յոքնակիի մէջ երեք ձև ունի.

ա. — quelli (հազուագէպ, quei) իբրև գոյական։ Օրինակ.

Non sono di *quelli* che afférmano, անոնցմէ չեմ որ կը պնդեն կամ կը հաստատեն.

բ. — quegli իբրև ածական՝ խառն s էն կամ z էն առաջ, ձայնաւորի ու աստուածնկր բառէն առաջ՝ քաղցրաձայնութեան համար.

Օրինակ

Quegli studii, *այն ուսումները*
» amici, » *բարեկամները*
» déi » *աստուածները.*

գ. — quei (que') *իբրև ածական ուրիշ բաղաձայններէ առաջ։* Օրինակ.

Quei libri, *այն գրքերը*
» casi, » *դիպուածները.*

5. *Երրորդ դէմքի էական–ցուցական դերանուան հայցական հոլովի* (il. lo. la. li (gli). le) *տկար ձևերը կը ծառայեն նաև իր ցուցնող ցուցական դերանուանց տեղ (գոյականաբար գործածուելով) համապատասխան սեռով, թուով ու հոլովով։ Օրինակ.*

Vedi tu quell'albero? *կը տեսնե՞ս այն ծառը*
– *lo* vedo (vedo quello), *կը տեսնեմ զայն.*
Mi darai i denari? *ինձ պիտի տա՞ս դրամները*
– te *li* darò (ti darò essi), *զանոնք քեզ պիտի տամ.*
Lo credi tu? (credi tu ciò?), *անոր կը հաւատա՞ս.*

6. *Նոյնպէս, երրորդ դէմքի դերանուան սեռ. և բաց՝ հոլովի տկար ձևը* [ne] *համազօր է նաև սեռականին ու բացառականին* (da, per *և* con *նախադրութեանց հետ*) *իր ցուցնող ցուցական դերանուանց՝ երկու սեռերու և թիւերուն մէջ ևս.*

Ne — *Հանարժէք է ուրեմն*
1. di esso, di questo, di ciò, di questa, di costei, di coloro... *և այլն.*
2. da (*ծագումն*) / con (*նիւթ*) / per (*փոխանակութիւն*) — esso, ciò, questo *և այլն.*

Օրինակ

Lessi il libro, e *ne* lodo l'intendimento (e lodo gl'intendimenti *di esso*), *կարդացի գիրքն ու անոր նպատակը կը գովեմ.*

Vedesti la casa? *տեսա՞ր տունը.* — Ne vengo ora (vengo ora *da quella*), *հիմա անկից կու գամ.*

Gli diedi del denaro, e *ne* ebbi questo libro, (ed ebbi per esso)..., *իրեն դրամ տուի ու անոր փոխարէն այս գիրքն ունեցայ.*

Se *ne* fanno oggetti... (con questo...), *ասով առարկաներ կը շինեն.*

7. Vi *և* ci *կը գործածուին, իբրև ցուցական դերանուանց տկար ձևեր, տրական հոլովի համար. իսկ բացառականի համար* in.

Ci *կամ* Vi — *Հանարժէք է ուրեմն*
1. a ciò, ad esso, a questo, a costei, a quelle, *և այլն.*
2. in ciò, in questa, in coloro, in costei, *և այլն.*

Օրինակ

Io *vi* (*կամ* ci) penso sempre, *ես այս բանիս վրայ կը մտածեմ միշտ.*

L'avevo veduto una volta, e *vi* (*կամ* ci) pensavo sempre, *անգամ մը զայս տեսած էի, ու միշտ ասոր վրայ կը մտածէի.*

Entra in casa e *vi* trova... (e trova in essa), *տուն կը մտնէ ու հոն կը գտնէ...*

Ծանօթութիւն. — Il, lo, la, li (gli), le, ne *միանգամայն հնչմարիտ էական և ստացական դերանուն են.* vi *և* ci *ձևերն աւելի մակբայ կամ դերանուանական մասունք են, և հազիւ երբեք կը գործածուին՝ զանոնք անձի վերադրելով։*

ԲԱՌԱՐԱՆ

La grammática, քերականու-
[թիւնը
il nóme, անունը
il garófano, մեխակը
il cámpo, ագարակը, արտը
l'imperatóre, կայսրը
incivíle, անքաղաքավար, բիրտ
capéllo, մազ
grossoláno, բիրտ, չինական,
[կոշտ
letto, կարդացած
non... ancóra, դեռ ոչ, դեռ չ
che (ար. խգ. եզ. յր.) ո՞ր, ի՞նչ,
[զի՞նչ
generále, զօրավար
conóscere, ճանչնալ.
Dáto, տուած
quale (qual), ո՞րը – յոր. –li,
[ինչպիսի՞ք, որո՞նք
la colazióne, նախաճաշը
il fanciúllo, տղան
béne, լաւ, աղէկ
mále, չար, գէշ
ubbidiénte, հնազանդ, հլու
parla? (Ella), կը խօսի՞ք, կը
[խօսի՞ս
(io) parlo, կը խօսիմ
in italiáno, իտալերէն լեզուով
come si chiama? ինչպէ՞ս կամ
[ի՞նչ կը կոչուի
mercánte, վաճառական
paése, երկիր, ծննդավայր.

ՀՐԱՀԱՆԳ 25.

Questo libro è buono. Quella penna non è buona. Questi temi sono facili. Chi ha comperato qnesta casa? Chi ha perduto quella borsa? Di chi è quell'anello? Questi fanciulli sono ubbidienti, ma quelle ragazze sono incivili. Quegli uómini non sono contenti. Quest'albero è alto. I capelli di quei fanciulli sono troppo lunghi. Che capelli ha (Ella) veduto? Qual'è il palazzo dell'imperatore? Che vino hanno comperato quei signori? Che fiore è questo? È un garofano. Che libri sono codesti? Sono due grammátiche italiane. Quali città e quali villaggi hai veduto in Italia? Come si chiama quel generale? Di qual generale parla Ella? Di quello stolto generale che si è ribellato (ապստամբած).

ՀՐԱՀԱՆԳ 26.

Այս գինին լաւ է։ Այս հրահանգները դժուար են։ Այս վաճառականը դեռ հարուստ չէ (non è ancora ricco)։ Այս տղաքը առաջուց բաւական (assai) աղքատ էին։ Այն աղջկան գլխարկը շատ մեծ է։ Ո՞ր գլխարկ շատ մեծ է։ Այն գլխարկը։ Այս գրքերը կու տամ այն տղոց և այն գրիչները այս կանանց։ Կարդացի՞ք այն գիրքը (որ ձեր ձեռքն էր)։ Ո՛չ դեռ, պարո՛ն, այն նամակը կարդացի (ունիմ կարդացած) զոր դուք տեսաք երէկ երեկոյ։ Այն տանձերը լաւ չեն։ Որո՞նք (տանձերը) լաւ չեն։ Անոնք։ Իտալերէն կը խօսի՞ք, տիկի՛ն։ Այո՛, (ma sì)։ Ի՞նչ կը կոչուի իտալերէն այս ծաղիկը (fiore)։ Այդ ծաղիկը (զոր դու ունիս) մեխակ մ'է։ Անունն ի՞նչ է, (ի՞նչ անուն ունի)։ Այս ծառերը շատ բարձր չեն։ Այս արտը մեծ է։ Ո՞ր ագարակի վրայ կը խօսիս, պարո՛ն։

Խօսակցութիւն

Di chi è questo temperino?
Di chi sono questi guanti?
È di mia sorella.
Sono della signorina Nectarina.
Come si chiama la figlia di quella donna?
Si chiama Veronica.
Conoscete questa pianta?
Sicuro, è un rosaio.
E cotesta?
È un garofano.
Che carta volete?
Voglio questa carta, non quella.
Sono buone queste penne?
Sì, sono buonissime.
Che lettera è codesta?
È la lettera di mia madre.
A chi date questi lapis?
Li do a questo ragazzo.
Si trova dell'oro in questo paese?
Sì, signore, questo paese è ricchissimo di oro.
Che ora è?
È un'ora (è l'una). Sono le sette.

ՏԱՍՆԸՁՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

Ստացական դերանուններ եւ ածականներ

Ստացական ածականները չեն զանազանուիր՝ իտալերէնի մէջ՝ ստացական դերանուններէն։ Երբ ստացականն անուան հետ կը գտնուի՝ ածական է, իսկ եթէ անունը լռութեամբ կը հասկցուի՝ դերանուն է։ Օրինակ.

Ecco qui il *mio* libro, *ահա իմ գիրքս (ած.)*
Dammi anche il *tuo*, per favore, *քուկդ ալ ինձ տուր, եթէ կը հաճիս (դեր.)*
Ecco il *mio*, *ահա իմս (դեր.)*
Se fosse *mio*, *եթէ իմս ըլլար (դեր.)*

Երկուքն ալ ընդհանրապէս իրենցմէ առաջ յօդ կ'առնուն ամէն հոլովներու մէջ (բայց ի կոչականէն)։ Օրինակ.

Եզակի		*Յոգնակի*	
Ար.	*Իգ.*	*Ար.*	*Իգ.*
Il mio	la mia, *իմս*	i miei	le mie, *իմիններս*
il tuo	la tua, *քոյդ*	i tuoi	le tue, *քուկիններդ*
il suo	la sua, *իրենը*	i suoi	le sue, *իրենները*
il nostro	la nostra, *մերինը*	i nostri	le nostre, *մերիններըմ*
il vostro	la vostra, *ձերինը*	i vostri	le vostre, *ձերիններըմ*
il *loro*[1]	la *loro*, *իրենցը*	i *loro*	le *loro*, *իրենցիններըմ*

1. Loro, *միշտ անփոփոխ է նոյն իսկ երբ ստացական ած. է։*

Օրինակ

La mia casa è bella, *իմ տունս գեղեցիկ է*
Le tue camere sono grandi, *քու սենեակներդ մեծ են*
I suoi libri sono istruttivi, *իւր գրքերը հրահանգիչ են.*

Le nostre pere sono dolci, *մեր տանձերը քաղցր են*
Il vostro cane è vecchio, *ձեր շունը ծեր է*
La loro madre è indulgente, *իրենց մայրը ներողամիտ է*
Le loro penne sono bianche, *իրենց փետուրները ճերմակ են*
Un mio cappello, *իմ մէկ գլխարկս.*

Սակայն սովորաբար որոշիչ յօդ չեն առնուր.

ա. – Երբ mio, tuo, suo, nostro, vostro (*բայց չ'* loro) *ազգականուրիւն կամ տիտղոս ցուցնող բառէ մ'առաջ դրուին՝ եզակիի մէջ՝ անփոփոխ ոչ առանց ածականի։ Օրինակ.*

Mio zio è partito, *քեռիս մեկնած է*
Tua madre è morta? *մայրդ մեռած է*
Sua sorella è ingenua, *իր քոյրն անկեղծ է*
Sua (*կամ* Vostra) Eccellenza ha ragione, *Ձեր վսեմափայլութիւնն իրաւունք ունի.*

Սակայն.

La mia *buona* madre, *իմ բարի մայրս*
La mia sorel*lina*, *փոքր քոյրս*
I suoi figli, *իր որդիքը*
La loro madre, *իրենց մայրը.*

Եւ յեռոյ միշտ.

Il (*mio*) babbo, *հայրիկս*
La (*mia*) mamma, *մայրիկս.*

բ. — Երբ ստացական դերանունն իբրև ստորոգելի գործածուի և յոկ ստացում ցոյց տայ։ Օրինակ.

Questo libro è *mio*, այս գիրքն իմն է
La penna è *sua*, գրիչն իրենն է.

Երբ ստաց. ածականը գոյականէն վերջը դրուի (որ իմաստին աւելի ոյժ և փափկութիւն մը կու տայ) պէտք է միշտ յոդ ունել՝ բաց ի կոչականէն։ Ստացական ածականները կրնան նաև, անմիջապէս անորոշ յոդէն կամ թուական ածականէ մը վերջ դրուիլ։ Օրինակ.

La *madre mia*, մայր իմ
Figli miei, որդեակք իմ (կոչական)
Un mio amico, բարեկամիս մէկը
Un vostro cugino, հօրեղբօրորդւոյդ մին
Quattro suoi amici, իր չորս բարեկամները.

Նախադրութեանց քով՝ յոդը զանց կ'ըլլուի։ Օրինակ.

A mio piacere, ըստ իմ կամացս
A suo favore, ի նպաստ իրեն.

Յաճախ ստացական ածականին տեղ՝ կը գործածուի յարաբերական դերանուան տրական հոլովը։ Օրինակ.

Mia madre *gli* è sorella (sua), մայրս իւր քոյրն է
Le sono fratello, (suo) իւր եղբայրն եմ.

Սակայն արձակին մէջ կ'ըսուի։ Օրինակ.

Mi levo il cappello, գլխարկս կը հանեմ
Egli *se* lo mise in tasca, նա զայն իւր գրպանը դրաւ
Egli *se* lo prese, նա զայն իրեն առաւ.

Ծանօթութիւն. — Շատ անգամ *gli* կը դրուի՝ փոխանակ *loro* յարաբերական դերանուան, մանաւանդ երբ վերջինս *ne* մասնիկին քով կը հանդիպի։

Օրինակ

Nessún uomo di giudizio *gli*ene avrebbe dato il parere, ոչ մէկ խելացի մարդ անոր նկատմամբ իր կարծիքը պիտի յայտնէր։

ԲԱՌԱՐԱՆ

Il compágno, ընկերը
il portafóglio, թղթակալը
la valigia, պայուսակը
l'ombréllo, a, հովանոցը
la berrétta, գլխարկը
la chiáve, բանալին
la saccóccia, la tásca, գրպանը
guarito, բժշկուած, առողջացած
antíco, հին
il nipóte, թոռը.
La nipóte, թոռնուհին
la nipotína, թոռնեայն (իգ.)
il nipotíno, թոռնիկը (սր.) եղբօր որդին, քեռորդին
il nónno, պապը, հաւը
la nónna, մամը, հանին
incontráto, հանդիպած
questa mattína, այս առաւու
non è vero? այնպէս չէ՞.

ՀՐԱՀԱՆԳ 27.

Il mio amico è ancora ammalato, ma mio cugino è già guarito. Il tuo buon fratello è a Firenze. Tuo zio Giovanni è partito per Genova. Ha Ella già veduto mia madre oggi? No, signora, non ho ancora veduto la Sua signora madre[1] ma la vedrò certamente questa mattina. Carlo ha perduto il portafoglio e la valigia. Di chi è questa chiave? È tua; la mia l'ho in tasca. Carolina è una amica, non è vero? Venite qua, nipotini miei[2], disse il nonno, ecco il vostro pane e le vostre pere. Questa mattina abbiamo incontrati

1. Signore, signora, տիտղոսները կը դրուին ստացականէն վերջ։
2. Այս ստացականի տեղափոխութիւնը, որ գրեթէ միշտ կը հանդիպի բացագարձութեանց մէջ՝ շատ ոյժ կու տայ խօսքին։

due nostri antichi compagni di scuola. Dov'è la tua berretta? La mia è qui, ma non ho ancora veduto la tua. Si ama i propri figli. Avete ricevuto (delle) nuove da vostro cugino?

ՀՐԱՀԱՆԳ 28.

Քու հօրաքոյրդ Հռովմ մեկնած էր արդէն (per Roma), *երբ ես հոս եկայ։ Դպրոցական հին ընկերներէս մէկն այս առտու մեռած է։ Երէկ երեկոյ քու չորս բարեկամներուդ հանդիպեցար, այնպէս չէ՞։ Այո՛,* (ma sì) *քու հայրդ* (il suo signor padre) *մեզ հետ էր։ Որո՞ւն է այս հովանոցը։ Այդ իմս է, բայց միւսը քու տիկին մօրդ է։ Նա* (իգ.) *զայն կորուսած էր մեր պարտիզին մէջ երէկ երեկոյ. և մենք զայն գտանք այս առտու մեր թղթակալը փնտռելու ժամանակ* (cercando)։ *Մեր բարեկամներէն երկուքը հիւանդացան* (sono stati ammalati) *անցեալ ամիս, իրենց վիճակն ամենածանր էր, բայց այժմ կատարելապէս առողջացած են։ Թոռնիկները՝ իրենց ազնիւ* (eccellente) *մեծ մօր հետ էին։ Մէկն իւր զաւակները կը սիրէ։ Ժամանակը կը փախչի, և իւր կորուստը* (pérdita) *անդարմանելի է* (irreparabile).

Խօսակցութիւն

Dov'è mio fratello?
Dov'è il vostro libro?
Chi ha perduto il suo berretto?
Chi à trovato i nostri quaderni?
Di chi è questa lettera?
Di chi è questo bastone?
Di chi sono questi anelli?
Volete i miei occhiali?
Conoscete una mia amica?
Che ritratto è cotesto?
Da chi avete ricevuto quel bel bastone?

È andato in giardino.
Eccolo qui sulla távola.
Federico ha perduto il suo berretto.
Enrico li à trovati.
È di nostro nonno.
È del nostro buon zio.
Sono della contessa.
No, grazie tante.
Sì, conosco la signora Antaram.
È il mio ritratto.
Mi fu regalato da mia zia.

ՏԱՍՆԸՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Բացարձակ եւ բազմապատկիչ Թուական դերանուններ եւ ածականներ

Բացարձակ Թուականներն են.

Un, uno, una un',	1.	trénta,	30
due,	2.	trentuno,	31
tre,	3.	trentadue,	32
quattro,	4.	quaránta,	40
cinque,	5.	cinquanta,	50
sei,	6.	sessanta,	60
sette,	7.	settanta,	70
otto,	8.	ottanta,	80
nove,	9.	novanta,	90
dieci,	10.	cénto,	100
úndici,	11.	duecénto,	200
dódici,	12.	trecento,	300
trédici,	13.	quattrocento,	400
quattórdici,	14.	cinquecento,	500
quíndici,	15.	mille,	1,000
sédici,	16.	duemila,	2,000
diciassétte,	17.	tremila,	3,000
diciótto,	18.	cinquemila,	5,000
diciannóve,	19.	diecimila,	10,000
venti,	20.	centomila,	100,000
ventuno,	21.	duecentomila,	200,000
ventidue,	22.	un milione,	1,000,000
ventitre,	23.	due milioni,	2,000,000
ventiquáttro,	24.	un miliardo,	1,000,000,000
venticinque	25.	zero,	0

Օրինակ

Cinque fanciulli, *հինգ տղայ*
venti ásini, *քսան էշ*
trentacinque lire, 35 *ֆրանկ*
quarantotto soldati, 48 *զինուոր*
centotre cannoni, 103 *թնդանօթ*
milleottocento anni, 1800 *տարի*
un milione di scudi, 1,000,000 *վահան*, Սկուտ (դրամ).

1. *Բացարձակ թուականաց անուանց հետ համաձայնութեան համար, պէտք է գիտնալ որ* uno *վերջացող թուականաց գոյականն՝ եզակի դնելու է եթէ յետադաս է։ Օրինակ.*

Ventun *libro*, *քսան և մէկ գիրք*
Trentuna *casa*, *երեսուն և մէկ տուն.*

Իսկ եթէ նախադաս է յոգնակի դնելու է։ Օրինակ.

Fiorini quarantuno, *քառասուն և մէկ ֆիորին* (դրամ)
Orecchini sessantuno, *վաթսուն և մէկ գինդ*
Metri cinquantuno, *յիսուն և մէկ մետր։*

2. *Միաւոր և տասնաւոր թուականք երբ միասին պիտի գործածուին՝ սովոր են մեկ բառով կամ միացեալ գրուելու. — հարիւրաւորները կրնան թէ՛ միացեալ գրուիլ և թէ՛ բաժանեալ. — հազարաւորները նմանապէս։ Օրինակ.*

Venticinque imbuti, *քսանըհինգ ձագար*
Dugentoventisei *կամ* dugento ventisei, *երկու հարիւր քսան և վեց*
Tremila ottocento, *երեք հազար ութ հարիւր*
Mille ottocento novantuno, *հազար ութ հարիւր իննսուն և մէկ.*

Il Papa Benedetto XIV morì nel mille novecentoventidue, *Բենեդիկտոս ԺԴ. վախճանեցաւ յամին* 1922
Nel millottocentonovantasette, *յամին* 1897.

3. *Բացարձակ թուականները, ի բաց առեալ* uno-a, *բոլոր՝ միայն յոգնակի կը գործածուին, անփոփոխ պահելով իրենց ձևը՝ երկու սեռերուն համար ևս։ Օրինակ.*

Quattro uomini e *quattro* donne, *չորս մարդ ու չորս կին*
Cento scudi e *cento* lire, *չորս սկուտ և չորս ֆրանկ.*

Դիտելի է սակայն, որ mille *երբ իրմէ առաջ ուրիշ թուական անուն մ՚ունենայ* (երկու, երեք, չորս և այլն *mila*-ի կը փոխուի։ *Օրինակ.*

Cinque*mila* cavalli, *հինգ հազար ձի...*

4. *Թուական դերանուններն ընդհանուր* (*ի բաց առեալ անոնցմէ քանի մը հատին վրայ եղած դիտողութիւններէն*) *կրնան գործածուիլ հաւասարապէս գոյականաբար և ածականաբար։ Օրինակ.*

Tre furono presi subito, *երեքն իսկոյն բռնուեցան* (գոյ.)
Dopo *due* giorni, *երկու օր վերջ* (ած.)
I *mille* di Marsala, *Մարսալայի հազարները* (զինուոր)
Il *quinto* di dieci, *տասին հինգը*
La *terza* parte del nove, *ինին երրորդ մասը*
Tu sarai il *settimo*, *դու եօթներորդը պիտի ըլլաս*
Io avrò il *secondo* posto, *ես երկրորդ կարգը պիտի ըլլամ*
Ora guadagno il *triplo*, *հիմա երեք անգամը կը շահիմ.*

Այս ինչ ժամանակի մէջ եղած կամ ըլլալիք իմաստը բացատրելու համար կը գործածուի nel, nell'anno, *երբեմն նաև* l'anno։

Օրինակ

Morì nel millottocentonovantasette, մեռաւ 1897ին
Questa città fu fondata nell'anno 1050 (l'anno 1050) dell'era nostra, այս քաղաքը հիմնուեցաւ 1050ին մեր (Քրիս.) թուականին.

Անցեալ ժամանակ մը բացատրելու համար կը գործածուի è, sono և աւելի շատ՝ fa (or fanno, or sono)։ Օրինակ.

È un anno che sei qui, տարի մ'է որ հոս ես
Sono (or fanno, or sono) due anni che non ti ho visto, երկու տարի է (կ'ընէ) որ զքեզ չեմ տեսած
È partito un anno fa, տարի մ'է որ մեկնած է
Questa casa fu costrutta due anni fa (or fanno due anni), երկու տարի է որ այս տունը շինուած է.

Մէկու մը տարիքը կը հարցուի հետևեալ կերպով։ Օրինակ.

Quanti anni hai? քանի՞ տարեկան ես
Quanti » avete? քանի՞ տարեկան էք
Quanti » ha (Ella)? քանի՞ տարեկան ես.

Ամսոյն քանիին ըլլալը տեղեկանալու համար կը հարցուի։ Օրինակ.

Quanti ne abbiamo del mese? ամսոյն քանի՞ն է
Ne abbiamo il dieci, տասն է
È il dieci, տասն է
Siamo ai dodici (del mese), ամսոյն տասներկուքն է.

Բազմապատկիչ թուականներ

1. Բազմապատկիչները թուով սահմանափակ են. ի գործածութեան են հետևեալները.

Sèmplice,	մէկ հատ,	մի անգամ
Dùplice կամ doppio կամ dùplo,		երկպատիկ
Tìplice » triplo,		եռապատիկ
Quadrùplice կամ quàdruplo,		քառապատիկ
Quintùplice » quìntuplo,		հնգապատիկ
Sestùplice » sèstuplo,		վեցպատիկ
Settèmplice,		եօթնպատիկ
Dècuplo,		տասնպատիկ
Cèntuplo,		հարիւրապատիկ
Mùltiplo,		բազմապատիկ.

Անոնց մէջ –plice վերջացողները վիպային ածականաբար գործածուած են. միւսները, բիչ անգամ ածականաբար, ստէպ գոյականաբար՝ իրենցմէ առաջ միշտ յօդով մը։ Օրինակ.

La *triplice* alleanza, երեակ դաշնակցութիւնը
Un *doppio* fondo, կրկնատակ
Spenderai il *triplo*, il decuplo, եռապատիկը տասնապատիկը [պիտի ծախսես.

ԲԱՌԱՐԱՆ

L'anéllo, մատանին	Vólta, անգամ
máschio, արու	fánno, կ'ընեն
fémmina, էգ	pagáto, վճարած
náto, ծնած	cósta, կ'արժէ
la térra, հողը.	prodúce, կ'արտադրէ.

ՀՐԱՀԱՆԳ 29.

Ho nove lire in tasca. Mia zia ha sette anelli. La nostra vicina ha cinque figli, quattro maschi ed una femmina. Un anno ha dodici mesi o trecentosessantacinque giorni. Quanti anni ha, Signor Carlo? Ha quarantacinque anni. Quando foste a Parigi? Sono già stato due volte a Parigi, nel 1880 e 1883. Tre volte 16 fanno 48. Ho pagato trecento marchi iersera ed oggi devo pagare duemila fiorini. Quando hai veduto il nostro comune amico Giovanni? L'ho veduto sei anni fa, nel 1924. Quanto fanno 35 volte 27? Fanno 945. In che anno è morto Vittorio Emanuele? Nell'anno 1878. In che anno sei nato tu? Sono nato nel 1878 ed ho adesso cinquantadue anni.

ՀՐԱՀԱՆԳ 30.

Գրպանիս մէջ ունիմ երեսուն մարք և յիսուներկու ֆիորին։ Այս տունը կ'արժէ յիսուներկու հազար ֆրանկ։ Դուք վճարած էք (ունիք) երեք անգամ յիսուն ֆրանկ։ Այսօր ամսուն քանի՞ն է։ Այսօր մարտ մէկ է։ Քանի՞ տարեկան էր պարոն քեռիդ երբ հոս եկաւ (եկած է)։ Տասն և չորս տարուան էր։ Քանի՞ կ'ընէ (fanno) երեսունըվեց և յիսուներեք։ Երեք ամիս կայ որ զքեզ չեմ տեսած, ո՞ւր էիր։ Ես Հռովմ էի Յովսէփինէ քրոջս հետ։ Քանի՞ տարեկան է նա (իգ.)։ Անիկայ ծնած է 1865ին։ Ուրեմն հիմա քանի՞ տարեկան է (տարի ունի)։ Իմ մտածութիւնս բազմապատիկ է։ Հողը տասնապատիկը կ'արտադրէ։

Խօսակցութիւն

Quanti anni avete?	Ho adesso ventiotto anni.
E vostro fratello?	Egli avrà presso a poco trentacinque anni.
Quando è nato vostro fratello?	È nato nell'anno 1876.

E voi, quando siete nato?	Sono nato nel 1878.
Quanto danaro avete ricevuto da casa?	Ho ricevuto 100 franchi e 80 centesimi.
Quanto fa 3 volte 7?	3 volte 7 = 21.
Quanto fa 8 volte 6?	8 volte 6 = 48.
Quanti giorni ha un anno?	Un anno ha 365 giorni e 6 ore.
Quanti mesi ha un anno?	Un anno ha 12 mesi.
Foste ieri alla caccia?	Sì, signore, tutto il giorno.
Avete ucciso molte lepri?	Abbiamo ucciso 60 lepri.
A chi avete dato dei regàli?	A tutti e tre.

ՏԱՍՆԸՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Դասական եւ բաշխական թուական դերանուններ եւ ածականներ

Դասական թուականներն են.

I.	Il primo, *առաջին*
II.	il secondo, *երկրորդ*
III.	il terzo, *երրորդ*
IV.	il quarto, *չորրորդ*
V.	il quinto, *հինգերորդ*
VI.	il sèsto, *վեցերորդ*
VII.	il sèttimo, *եօթներորդ*
VIII.	l'ottávo, *ութերորդ*
IX.	il nòno, *իններորդ*
X.	il dècimo, *տասներորդ*[1]
XI.	undecimo *տասնըմէկերորդ* undicèsimo » decimoprimo »
XII.	duodecimo *տասներկուերորդ* dodicèsimo » decimosecondo »

1. Յաջորդներուն վրայ յօդերը զանց կ'ընեմ։

Che io avessi dormito, որ ես քնացած ըլլայի.

Անորիշ դերբայ

Ներկայ	Անցեալ
Dormíre, քնանալ.	Aver dormíto, քնացած ըլլալ.

Ընդունելոբրիւն

Ներկայ	Անցեալ
Dormiènte, քնացող.	Dormíto, քնացած.

Դերբայ

Ներկայ	Անցեալ
Dormèndo, քնանալով.	Avendo dormíto, քնացած ըլ-[լալով.

Կարեւոր դիտողութիւն

Ire վերջացող բայերուն մեծ մասը, finire..., isc բաղաձայնները կ'առնուն՝ Սահմանական և Ստորադասական եզակի երկք դէմքերուն մէջ և յոքնակի երրորդ դէմքին մէջ։ Ուստի ire վերջացող բայերէն գրեթէ ամէնքն ալ քիչ մ'անկանոն են։ Վերոյիշեալ փոփոխութիւնը կը կրեն նաև Հրամայականին անոնց համապատասխանող դէմքերը։

Օրինակ

Սահմանական Ներկայ

Io finisco, կը լմնցնեմ	Noi finiamo, կը լմնցնենք
tu finisci, կը լմնցնես	voi finite, կը լմնցնէք
egli finisce, կը լմնցնէ.	eglino finiscono, կը լմնցնեն.

Ստորադասական Ներկայ

Che io finisca, որ լմնցնեմ	Che noi finiamo, որ լմնցնենք
che tu finisca, որ լմնցնես	che voi finiate, որ լմնցնէք
che egli finisca, որ լմնցնէ.	che eglino finiscano, որ լմնցնեն.

Հրամայական

— —	Finiamo, լմնցնենք
finisci, լմնցուր	finite, լմնցուցէք
finisca, լմնցնէ (թող).	finiscano, լմնցնեն (թող).

Գ. Լծորդութեան պատկանող կանոնաւոր բայերէն շատ քիչերն ազատ են այս յաւելուածական տառերէն –isc Սահմ. Ներկայի արմատին մէջ. ահա այբուբենական ցանկը՝

Cucire, կարել	Seguire, հետևիլ
dormire, ննջել	sentire, զգալ
fuggire, փախչիլ	servire, ծառայել
partire, մեկնիլ	tossire, հազալ
pentirsi, զղջալ.	vestire, հագուիլ.

հանդերձ իրենց բաղադրութեամբք. (սակայն eseguire կ'ըլլայ eseguisco). դարձեալ լատին. vertère էն երկու բաղադրեալքս, convertire, divertire –isco։

Ծանօթութիւն. — 1. Սակայն՝

Avvertire, իմացնել
sovvertire, տապալել
pervertire, ապականել, աւրել

երկու ձևերն ալ ունին։ Այսպէս նաև յաջորդ բայերը՝ Սահմանական արմատին վրայ մերթ մէկ մերթ միւս ձևն ունին՝ առաւելութեամբ։ Օրինակ.

Aborrire,	խորչիլ, զզուիլ
assorbire,	ծծել, կլլել
bollire,	եռալ
concepire (աւելի –isc)	յղանալ
inghiottire,	կլլել
lambire (աւելի –isc)	լզել
languire,	տկարանալ, հիւծիլ
mentire	ստել
muggire,	բնչել, պոռոչել, մռնչել
nutrire,	սնուցանել
partire,	բաժնել, զատել
plaudire,	ծափահարել
ruggire,	մռնչել
sdrucire,	կարը քակել, բանալ.

Դարձեալ parére ի բաղադրեալները՝ եզակի 2դ. 3դ. դէմքերուն մէջ. apparisci և appari, comparisce և compare կ'ըլլան։

2. Լատին. plère ի բաղադրեալները՝ իտալերէնի մէջ կանոնաւոր ձև մ'ունին Բ.րդ լծորդ. վերաբերող. ինչպէս cómpi–ere, adémpi–ere և այլն. և ուրիշ մը Գ.դ լծորդութեան՝ ինչպէս comp–ire, ademp–ire, որ կ'ըլլան comp*isc*–ademp*isc*–։

ԲԱՌԱՐԱՆ

Servire, ծառայել	Sbrigáre, փութալ, աւարտել
sentíre, լսել, զգալ	i balócchi, խաղալիքները
partíre, մեկնիլ	d'estáte, ամառը
riveríre (–isco), մեծարել	d'invérno, ձմեռը, ձմեռ ժամանակ
restituire (–isco), հատուցանել	c'è, կայ (եզ.)

arrossire (-isco), *ամչնալ*
capire (-isco), *ըմբռնել*
fiorire (-isco), *ծաղկիլ*
russáre, *խորդալ*.
ci sóno), *կան* (*յոր.*)
non... niente, *ոչ... ոչինչ*
nemméno, *և ոչ իսկ, ոչ իսկ*
si ha l'óbbligo, *ստիպուած է*.

ՀՐԱՀԱՆԳ 49.

Io non sento la musica, la senti tu? Io non sento niente. E ieri la sentisti? No, non la sentii nemmeno ieri. Quando partiste da Parigi? Partimmo ieri l'altro. E quando partirete per Napoli? Partiremmo domenica se avessimo sbrigate le nostre faccende, invece partiremo giovedì. Restituisci al tuo amico il danaro che ti ha prestato. Come vuole che gli restituisca quel danaro se non l'ho più? Arrossisci di parlare in tal maniera. Capisci che si ha l'obbligo di pagare i debiti? Capisco benissimo, ma non ho danaro. Servendo il suo paese un uomo serve se stesso. Questa pianta fiorisce d'estate e quell'altra d'inverno.

ՀՐԱՀԱՆԳ 50.

Իտալերէն կը հասկնա՞ս։ Ո՛չ դեռ, պարո՛ն։ Երջանիկ պիտի ըլլամ երբ այս գիրքը հասկնամ։ Եթէ դուք լաւ հասկնայիք այդ գիրքը, լաւ ևս պիտի հասկնայիք իմ խօսքերս, ասիկայ առձեռն (manuale) *խօսակցութիւն մ'է։ Վաղը պիտի մեկնիմ եթէ ժամանակը ներէ։ Բոյսեր կան որ ձմեռը կը ծաղկին։ Կը լսէ՞ք այս աղաղակը։ Կը լսեմ, ձեր բարեկամն է որ քնոյ մէջ* (dormendo) *կը խորդայ։ Դուք բոլոր օրը կը քնանաք փոխանակ աշխատելու, այնպէս չէ՞։ Երիտասարդութեանս ժամանակ ութ ու կէս ժամէն աւելի բնաւ քնացած չեմ, բայց հիմա տասն ժամէն աւելի կը քնանամ։ Եթէ դուք նուազ քնանայիք, ձեր առողջութիւնը լաւագոյն պիտի ըլլար։ Այս տղան մեզ չսիրեր։ Այս տղան չտուաւ դեռ մեզի* (ci) *այն խաղալիքները զորս մենք իրեն փոխ տուինք անցեալ օր* (l'altro giorno)։

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

Lettera di offerta

Stile commerciale (*վաճառականական ոճ*)

Torino, 10 Giugno 1906

Signor Carlo Nessi, Venezia

Ho testè saputo da uno dei soci della casa G. Giuseppe di Lione che voi cercate un commesso, il quale, alla pratica del genere d'affari, che voi trattate, unisca quella del francese e dell'inglese. E siccome io soddisfo a queste diverse condizioni, mi permetto di presentarmi, pel caso che il posto fosse ancora vacante.

I Signori Daniele e Ruben di qui, presso i quali io sono da parecchi anni, vi daranno qualunque informazione sul mio conto. Dal canto mio, vi posso assicurare, che se mi onorerete della vostra confidenza, nulla tralascerò per rendermene degno.

Nella speranza di una risposta favorevole, ho l'onore di porgervi i miei rispettosi saluti.

N. N.

Ho testè saputo, *քիչ առաջ լսեցի*
unire, *միացնել*
degno, *արժանի*
informazione, *տեղեկութիւն*
socio, *ընկեր*.
Soddisfare, *կատարել, գոհացնել*
tralasciare, *թողուլ, զանց ընել*
presentare, *ներկայացնել*
pórgervi, *յայտնել, մատուցանել ձեզի*.

ՔՍԱՆԸՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Դերանուններ

Էական դերանուն

Դերանունները՝ անուան մը տեղ կը դրուին՝ մի և նոյն անունը խօսքին մէջ շատ անգամ չկրկնելու համար. վեց տեսակ են։

1. Էական դերանուն, Pronome personále.
2. Ցուցական » » dimostratívo.
3. Սեպական » » possessívo.
4. Հարցական » » interrogatívo.
5. Յարաբերական » » relatívo.
6. Անորիշ » » indefinito.

Էական դերանուններն երկու տեսակ են, յարակից դերանուններ (congiuntívi), և բացարձակ դերանուններ (assolúti)։

Յարակից դերանուններն թէ եզակին և թէ յոգնակին մէջ միայն տրական և հայցական հոլով ունին։ Օրինակ։

Եզակի

Ար.	Իգ.	Ար.	Իգ.
Տր. Mi, ինձի	Հց. զիս	Տր. Gli, անոր	Տր. Le, անոր
Ti, քեզի	զքեզ	Հց. Lo, (il) զայն	Հց. La, զայն
Si, իրեն	զինք.		

Յոգնակի

Ար.	Իգ.	Ար.	Իգ.
Տր. Ci, մեզի	Հց. զմեզ	Հց. Li, զանոնք	Հց. Le, զանոնք
Vi, ձեզի	» զձեզ		
Si, իրենց	» զիրենք		
Loro, անոնց	» զանոնք.		

Բոլոր այս դերանունները՝ բային սահմանական, բեւական, ստորադասական և ժիստական հրամայականին յառաջ կը դրուին։ Loro բացառութիւն կը կազմէ, և ընդհանրապէս բայէն վերջը կը դրուի։ Օրինակ.

Egli *mi* dà, նա ինձ կու տայ
Io *vi* vedo, ես զձեզ կը տեսնեմ
Egli *ci* darebbe, նա մեզ պիտի տար...
Ch'egli *mi* ami, որ զիս սիրէ
Egli à detto *loro*, նա անոնց ըսած է.

Non *mi* date, մի տաք ինձի
Non *gli* credete, մի հաւատաք անոր
Io *l'*ho chiamato, ես զայն կանչեցի
Voi *gli* avevate scritto, դուք անոր գրած էիք.

Բացարձակ դերանուններն են, io, tu, egli, se, և կը հոլովին հետևեալ կերպով։

Առաջին դէմք

Եզակի	Յոգնակի
Ո. Io, ես	Noi, մենք
Ս. di me, իմ	di noi, մեր
Տ. a me, ինձի (mi)	a noi, մեզի (ci, ne)
Հ. me, զիս (mi)	noi, զմեզ (ci, ne)
Բ. da me, ինձմէ.	da noi, մեզմէ.

Երկրորդ դէմք

Եզակի	*Յոգնակի*
Ո. Tu, *դու*	Voi, *դուք*
Ս. di te, *քո*	di voi, *ձեր*
Տ. a te, *քեզ* (ti)	a voi, *ձեզ* (vi)
Հ. te, *զքեզ* (ti)	voi, *զձեզ* (vi)
Բ. da te, *քեզմէ*.	da voi, *ձեզմէ*.

Երրորդ դէմք (*ար.*)

Եզակի	*Յոգնակի*
Ո. Egli, ei, e', esso, *նա*	Eglino, essi, e' *անոնք*
Ս. di lui, di esso, *անոր*	di loro, di essi, *անոնց* (loro)
Տ. a lui, ad esso, *անոր* (gli)	a loro, ad essi, *անոնց* (loro, gli)
Հ. lui, esso, *զնա* (lo, il)	loro, essi, *զանոնք* (li)
Բ. da lui, da esso, *անորմէ*.	da loro, *անոնցմէ*.

Երրորդ դէմք (*իգ.*)

Եզակի	*Յոգնակի*
Ո. Ella, (la) essa, *նա*	Elleno, (le) esse, loro, *անոնք*
Ս. di lei, di essa, *անոր*	di loro, di esse, *անոնց* (loro)
Տ. a lei, ad essa, *անոր* (le)	a loro, ad esse, *անոնց* (loro, gli)
Հ. lei, essa, *զնա* (la)	loro, esse, *զանոնք*, *զիրենք* (le)
Բ. da lei, da essa, *անորմէ*.	da loro, da esse, *անոնցմէ*.

Երկու սեռերու եւ երկու թիւերու համար

Ո. *Զուռնի*
Ս. di sé, *իրեն*, *իւր*
Տ. a sé, (sé), *իրեն*
Հ. sé, (si), *զինք*
Բ. da sé, *իրմէ*.

Ծանօթութիւն. — Sé (*ինքն*, *իւր*) դերանունը չեչտով կը գրուի, se (*եթէ*) չգրկապէն զանազանելու համար. բայց եթէ sé ին անմիջապէս stesso բառը յաջորդէ՝ չեչտը դանց կ'ըլլայ. օր. a se stesso *ինքն իրեն*.

— Բայերու խնդրառութեանց համեմատ՝ պէտք է հայերէն թարգմանել՝ այս և հետագայ բոլոր դերանուններուն հոլովմանց իմաստները։

Ինչպէս բաւական յառաջ ալ ըսինք, Ella *եզ. երրորդ դէմք իգ. դերանունը՝ կը գործածուի յոգ. երկրորդ դէմքի* voi *ի տեղ՝ իբրև քաղաքավարական ձև, երբ պատուաւոր անձի մը հետ կը խօսուի։ Իսկ ուրիշ պարագաներու մէջ՝ միշտ իւր* Lei, La *սեռ. տր. հայց. և այլն հոլովները կը գործածուին։ Օրինակ.*

Ella come sta? *Ինչպէս էք*
Dove sono i guanti *di Lei*, *ուր են ձեր ձեռնոցները*
Non s'incomodi, *La* prego, *անհանգիստ մի ըլլաք, խնդրեմ*
Andiamo se *Le* piace, *երթանք, եթէ կ'ուզէք*.

Յոգնակի իմաստի մէջ՝ այս դերանունը լռելեայն կ'իմացուի, կամ հետևեալ բացատրութիւնները կը գործածուին, miei signóri, lor signóre, vostra signoría, vossignoría։ *Օրինակ.*

Vedano, *miei signori*, che ho perfettamente ragione, *տեսէք, պարոններ, որ ես բոլորովին իրաւունք ունիմ*.
Lor signore (*իգ. յոգ.*), non possono entrare qui, *տիկիններ, դուք չէք կարող հոս մտնել*.

Երրորդ դէմքի դերանուան տեղ շատ անգամ esso *ալ կը գրուի, որ երկու սեռերն ու երկու թիւերն ալ ունի, այսինքն է հաւասարապէս կրնայ գործածուիլ անձանց և իրաց համար. (մինչդեռ* egli *և* ella, *լաւ հեղինակները կը գործածեն միշտ անձանց համար։*

Օրինակ

Dov'è vostro fratello? *ո՞ւր է ձեր եղբայրը*
egli (*esso*) è quì, *հոս է (նա)*
Ed il vostro libro? *և ձեր գիրքը*
Esso è in giardino, *պարտիզին մէջն է.*

Այս ձևերը, me, a me, te, a te և այլն կը գործածուին երբ դերանունը կը բաժնուի բայէն, կամ երբ բային անհրաժեշտ կարևոր է որոշեալ դերանունը. և սոնք միշտ նախադրութեամբ մը կը կառավարուին։ Օրինակ.

Lo diédero *a me*, *զայն ինձ տուին*
Ella guarda *me*, *նա ինձ կը նայի*
Parlo *con te*, *քեզ հետ կը խօսիմ.*

Mi, ti և այլն ձևերը բայէն յառաջ կը դրուին՝ Սահմանական, Թեական, Ստորադասական և Ժամանակաւ հրամայական հետ։ Բայէն վերջը կը դրուին և անոր հետ միանալով մեկ բառ կը կազմեն՝ հաստատական հրամայական, անորիշ դերբայի, անփոփոխ դերբայի (gerundio) և անցեալ դերբայի հետ։ Օրինակ.

Egli *mi* dà un libro, *անիկայ ինձ գիրք մը կու տայ*
Io *ti* vidi laggiù, *զքեզ վարը տեսայ*
Giulio *gli* diede uno schiáffo, *Յուլիոս անոր ապտակ մը զարկաւ*
Loro ordinai di partire, *իրենց հրամայեցի որ մեկնին.*
Ella *ci* parlerà di voi, *անիկայ մեզի ձեր վրայօք պիտի խօսի*
Io *vi* darei ragione se l'aveste, *ձեզ իրաւունք պիտի տայի եթէ ունենայիք*
Voglio che *mi* diate ragione, *կ'ուզեմ որ ինձ իրաւունք տաք*
Non *mi* dica questo, *ասիկայ ինձ մի՛ ըսեր.*

Non parlar*mi* più così, *մէկ մ'ալ ինձ հետ այսպէս չի խօսիս*
Ho bisogno di veder*vi*, *պէտք ունիմ զձեզ տեսնելու*
Ubbidisci*mi* subito, *հնազանդէ՛ ինձ իսկոյն*
Vedendo*mi* fuggì, *զիս տեսնելուն պէս փախաւ.*

ԲԱՌԱՐԱՆ

La ragióne, *իրաւունքը*
il poveréllo, *աղքատիկը*
il sóldo, *դրամը, թոշակը (զինուորաց)*
dei sóldi, *դրամներ*
guardáre, *նշմարել, տեսնել*
si sovviéne, *կը յիշէ*
spiegáre, *բացատրել, պարզել*
ricordársi, *յիշել*
la lavandáia, *լուացարար (կին)*
raccontáre, *պատմել*
mendicánte, *մուրացիկ.*
Léggere, *կարդալ*
rispósto, *պատասխանած*
rispóndere, *պատասխանել*
símile, *նման*
soltánto, *միայն*
piáce, *կ'ախորժի, կը սիրէ*
la camícia, *շապիկը*
sostenére, *պաշտպանել, վերբռնել*
la biancheria, *ճերմակեղէնը*
prónto, *պատրաստ*
insístere, *պնդել.*

ՀՐԱՀԱՆԳ 51.

Egli parla di me. Giovanni pensa a te. Essi parlano di voi. Voi parlate di loro. Sono venuto con lui. Ella non si sovviene più di noi. Non parlo di lui, parlo di lei. Le avete domandato il libro? No ancora, le ho dato soltanto la penna ed il temperino. Gli hai spiegato bene le regole della grammatica. Gli ho spiegato le regole e domani gli spiegherò il tema. Ecco dei poverelli, date loro un po' di pane. Abbiamo loro già dato dei soldi. Non mi guardi così, la prego. Non mi raccontar più una cosa simile, perchè non la crederei. Ho bisogno di parlarvi; ditemi a che ora vi troverò? Entrino, miei signori, tutto è pronto. Lei ha ragione.

ՀՐԱՀԱՆԳ 52.

Եղբայրս ու ես իրեն հետ մեկնեցանք։ Դու քոյրդ իրեն ըսած է որ ինք (իգ.) շատ պէտք ունի ձեզ հետ խօսելու։ Ըսէ իրեն որ գիս պիտի գտնէ այս երեկոյ թատրոնին մէջ։ Դու իրեն տուած ես անօգուտ գիրք մը։ Մեզի պատասխանեց որ զայն հաճոյքով պիտի կարդայ, վասն զի այն տեսակ գրքերը ինք շատ կը սիրէ։ Ես ձեր լուացարարը (կին) տեսայ, ինձ խօսեցաւ ձեր նոր շապկին վրայ և կը պնդէ որ դու (եզ. 3րդ. դէմք)-բոլոր ճերմակեղէններդ ղրկեր ես։ Այդ տեսակ բան մի ըսեր ինձ, քեզ չեմ հաւատար։ Տես, պարոն, այս մուրացիկն ու անոր քիչ մը դրամ տուր։ Արդէն կէս (0,50) ֆրանկ տուի անոր։ Եւ այս աղքատ կինը, ասոր բան մը չե՞ս տար։ Իրեն ալ հաց և ճերմակեղէն տուի (ունիմ տուած)։ Նա կը յիշէ միշտ զքեզ և զանիկայ։

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

Lettera di domanda

Stimato Signore,

Le chiedo mille scuse, per la libertà che mi prendo di rammentarle che Ella mi aveva promesso la restituzione delle mie duecento lire per la fine del mese scorso.

Suppongo che, qualche circostanza eccezionale Le abbia impedito di mantenere la data parola, perchè non posso credere che Ella abbia dimenticato quanto Le ho detto, allorquando Le diedi quella somma. Anch'io ho i miei impegni, e sarei davvero spiacente se mi vedessi costretto a fare brutta figura unicamente per avere voluto giovare gli amici.

Favorisca perciò indicarmi in modo preciso quando potrà darmi quel danaro, affinchè io sappia come regolarmi negli affari miei. Mi creda suo devotissimo.

Piacenza, 21 Maggio 1904 N. N.

Stimato signore, Յարգելի պարոն
scorso, անցեալ
impedire, արգելուլ
giovare, օգնել
favorisca, շնորհք ըրէ՛
rammentare, յիշեցնել
impegni, պարտք
costretto, ստիպուած
promesso, խոստացած
suppongo, կ'ենթադրեմ.
Mantenere, պահել (խօսքը)
allorquando, երբ, այն ատեն՝ [երբ
che io sappia, որ ես գիտնամ
spiacente, անհաճոյ, ծանր
davvero, իրաւցնէ
fare brutta figura, պզտիկ մնալ, [ամօթահար ըլլալ
restituzione, հատուցումն, ետ [դարձնելը.

ՔՍԱՆԸԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն Իական դերանուններու

Երբ երկու էական դեր. մին սեռի իգդիր՝ միւսը բնուրեան իգդիր՝ մի և նոյն բային հետ գործածուած են, mi, ti, ci, vi ձևերը կը փոխուին me, te, ce, ve և gli և սովորաբար[1] բայէն յառաջ կը դրուին։ Իսկ gli դերանունը՝ il, lo, la և այլն դերանուններուն հետ կրնայ միանալ՝ մէջտեղ e գիր մը դնելով, և այս պարագայիս մէջ կը գործածուի հաւասարապէս երկու սեռերու համար ալ։ Օրինակ.

Essi *me lo* dissero ieri, անոնք զայն ինձ երէկ ըսին
Te la sei meritata, դու սեռը արժանացած ես
Te lo diedero ad intendere, զայն քեզ հասկցուցին
Ve li presenterò, զանոնք ձեզ պիտի ներկայացնեմ.

---

1. Ըսինք սովորաբար, վասն զի հրամայականի, (ի բաց առեալ եզ. և յոգ. երրորդ դէմքերն ու բացառականը) անորիշ դերբայի, դերբայի և ընդունելութեան մէջ՝ բայէն հաքը կը դրուին։

Glielo scrissi prima di voi, ձեզմէ յառաջ զայն իրեն գրեցի
Io non *gli* dissi nulla, անոր բան մը չըսի
Non posso dir*glielo*, չեմ կրնար զասիկայ անոր ըսել.

Ne մասնիկը որ ըստ տեղւոյն կը նշանակէ անկէ, անոր վրայ, ասկէ, ասոնց... կրնայ միացուիլ էական դերանունանց և բայերուն հետ։ Օրինակ.

Me *ne* mostrò alcuni, անկէ քանի մը հատ ինձ ցցուց
Glie*ne* parlerò volentieri, իրեն հետ անոնց վրայօր յօժարու-
[թեամբ պիտի խօսիմ
Bisogna parlarve*ne*, mio caro, պէտք է անոնց վրայ ձեզ խօ-
[սիլ, սիրելիս
Rendime*ne* cinque, անկէ հինգ հատ ինձ վերադարձուր
Io non potrò darve*ne*, ասկէ չեմ կրնար տալ ձեզ.

Ne շատ անգամ զարդի համար, այսինքն է, աւելադրութեամբ ալ կը գործածուի՝ ականջի քաղցրալուր նկատուելով։ Օրինակ.

Di questi ce *ne* sono tanti, ասոնցմէ շատ կան
Non ce n(')ò, անկէ չունիմ.

Բանաստեղծութեանց մէջ ne յաճախ ci ի տեղ կը գործածուի։ Օրինակ.

Ne dicono gli empii pagani (Tasso), ամբարիշտ հեթանոս-
ները մեզ կ'ըսեն.

Vi որ կը նշանակէ, ձեզ, զձեզ, հոս, հոն. և ci, մեզ, զմեզ, հոս, հոն, կը գործածուին տեղական մակբայներու տեղ. ասոնց կատարեալ ձևն է quici, quivi որոնք շատ անգամ փոխադարձ իրարու տեղ կը գործածուին։

Օրինակ

Vi prometto che *vi* penserò, } ձեզ կը խոստանամ որ հոն
Vi prometto che *ci* penserò, } (զձեզ) պիտի մտածեմ
Vi ritornerete subito, } շուտով հոս պիտի վերադառնաք
Ci ritornerete subito, }
Siete stato altre volte in questo palazzo? ուրիշ անգամ այս
[պալատը եկա՞ծ էք
No, non *ci* sono stato mai, ոչ, հոս բնաւ եկած չեմ.

Սակայն լաւ է՝ անդրադարձ բայերուն յոք. առաջին դէմքին հետ vi գործածել, և երկրորդ դէմքին հետ ci, որպէս զի անախորժ ձայներ չկազմուի, և vi միշտ ci էն յառաջ կը դրուի։ Օրինակ.

Vi ci recheremo domani, (փոխանակ ci, ci) վաղը հոն պիտի
երթանք.
Vi *ci* recherete stasera, (փոխանակ vi, vi) այս երեկոյ հոն
պիտի երթաք.

Essere, լլլալ, parere, երևնալ, sembrare, թուիլ, բայերուն հետ մերթ desso, dessa, դերանունը կը գործածուի որ կը նշանակէ ինքն, նոյն։ Օրինակ.

È proprio *dessa*, vi dico, բուն ինքն է, կ'ըսեմ ձեզ
Tu non mi sembri più *desso*, դու այլ ևս ինձ նոյնը չես երևիր.

Lo դերանուան տեղ շատ անգամ il դերանունը կը գործածուի՝ բաղաձայն գրով սկսած բայերէն յառաջ (ի բաց առեալ z և խառն s)։ Այս ձևը շատ կը տեսնուի Թոսկան լեզուի մէջ։ Օրինակ.

Assai volte in vano *il* chiamò, շատ անգամ պարապ տեղը
[զայն կանչեց
S'io *il* desiderassi, եթէ ես անոր բաղձայի.

Թէ որ il դերանունը mi, ti, ci, vi, si, gli դերանուններէն յառաջ հանդիպի՝ il ին վրայ ապաթարձ կը դրուի, կամ i գիրը գեղչուելով մէկ բառ կը կազմուի։ Ուստի կ'ըսուի me'l, te'l, glie'l, ce'l, ve'l, se'l, կամ mel, tel, gliel, cel, vel, sel։ Օրինակ.

Egli mel (կամ me'l) dice, նա զայն ինձ կ'ըսէ, փոխանակ me lo dice.

Ve'l dico, che è cosa impossibile, ձեզ կ'ըսեմ որ այդ բանն անկարելի է.

Իսկ երբ il էն առաջ non մակբայն հանդիպի, վերոյիշեալ փոփոխութիւնները տեղի կ'ունենան և միանգամայն non ի վերջին n կը կորսուի։ Օրինակ.

Più no'l կամ nol fece (փոխանակ non il), այլ ևս չըրաւ զանիկայ

Più nol riconobbe, այլ ևս չճանչցաւ զանիկայ

Nol so (փոխանակ non lo so), զայն չեմ գիտեր.

Լական դերանունից վրայ պէտք է աւելցնել se անդրադարձ դերանունը, որ թէ եզ. յոգնակի է և թէ ար. իգ.

Di sè, իրեն վրայ
a sè, իրեն վրայ
sè (կամ si), ինք զինք.

Օրինակ

Chi non pensa che *a se* è egoista, ով որ միայն ինքն իրեն վրայ կը մտածէ, անձնասէր է.

Non bisogna sempre parlar *di se*, պէտք չէ որ մարդս միշտ ինքն իրեն վրայ խօսի.

Non fa che vantarsi, ուրիշ բան չըներ բայց եթէ ինքզինք գովել.

ԲԱՌԱՐԱՆ

La verità, ճշմարտութիւնը
gli occhiáli, ակնոցները
il salúto, ողջոյնը
la salúte, առողջութիւնը
la storiélla, համառօտ պատմութիւնը
salutáre, ողջունել, բարևել
tenére, պահել, բռնել
speráre, յուսալ
prestare, փոխ տալ
pochino, շատ քիչ.
Io pósso, կրնամ (ես)
mésso, գրուած, գրած
la nuóva, la notízia, նորութիւնը, նոր լուրը
aspettáre, սպասել
per favóre, ի շնորհս, եթէ կը հաճիք
incontráre, հանդիպիլ
orbéne, արդ, ուստի
stanco, յոգնած
fatica, աշխատութիւն
storiella, պզտիկ պատմութիւն, սուտ պատմութիւն.

ՀՐԱՀԱՆԳ 53.

Se Ella ha il mio libro, me lo dia. Non posso dartelo adesso, ma te lo darò presto. Hai letto la lettera? Non posso leggerla, non ho gli occhiali. Te la leggerò io. Chi vi ha raccontato questa storiella? Il nostro maestro ce l'ha raccontato. Ha essa la mia penna? No, te l'ho già restituita. Mi porti il mio fazzoletto, l'ho di bisogno. Glielo porto subito; aspetti ancora un momento, per favore. Sono proprio contentissimo di trovarti in buona salute. Fate i miei saluti a Giuseppe e ditegli che mi mandi quel libro che gli ho chiesto. Appena me lo avrà mandato, te lo presterò per un mese. Quando vi andrete? Datemene cinque e tenetevene tre. Nessuno lo loda ed egli si loda da se. Come sta lei (ինչպէս ես)? Sarà stanco lei oggi dopo tante fatiche? Un pochino; e Lei (և դուք); no?

ՀՐԱՀԱՆԳ 54.

Իտալերէնի տեսակս ինձ տուած ես։ Ո՛չ, դեռ, պարոն, վաղը պիտի տամ (զայն քեզ[1]*)։ Հօրեղբօրաղջկանդ Մարիամին հանդիպեցայ և իրեն խոստացայ որ զայն նաև իրեն փոխ կու տամ։ Անոր (զայն) փոխ տուէք և շատ գոհ պիտի ըլլայ (այս բանիս վրայ)։ Իսկ ձեր գրիչները ո՞ւր գրած էք։ Անոնք սեղանին վրայ են, երէկ իրիկուն հոն գրի։ Հիմա հոն չեն։ Այն ժամանակ ձերիններէն երկու հատ փոխ տուէք, վաղը կու տամ*[2]*։ Քեզի խոստացայ որ բոլոր ճշմարտութիւնն ըսեմ, այնպէս չէ՞։ Այս առտու ես իրեն հանդիպեցայ և կ'ուզէի հետը խօսիլ, բայց բարև չի տուաւ։ Արիութիւն չունեցայ (չհամարձակեցայ) իրեն իմացնելու այս նորութիւնը։ Դուք պէտք էք զայն իրեն իմացնել։ Լաւ, իրեն հետ վաղը կը խօսիմ անոր վրայ։ Խօսէ՛ անոր վրայ, խնդրեմ* (ne prego)։ *Կը յուսամ որ կը հանդիպիմ դեռ անոր։*

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

La ghianda e la zucca

Un contadino se ne stava sdraiato all'ombra d'una quercia ed ora si guardava attorno, ora guardava in alto. Intanto egli diceva fra sè: «Perchè mai sulla quercia, tanta elevata, spuntano le ghiande che sono frutti così piccini, mentre sopra un debole fusto come quello della zucca, matura un sì grosso frutto? S'io fossi Dio, farei crescere sulle piante più elevate i frutti più grossi, e sulle meno alte i più piccini».

Non aveva finito di dire, che una ghianda si staccò dal ramo e gli venne a cadere proprio sul naso. Il contadino a

1. Ըստ վերոգրեալ կանոնաց և օրինակաց պէտք եղած տեղերը լրացնել կրկին դերանունները։
2. Ապառնին յաճախ սահմանականի ձևով պէտք է թարգմանել հայերէն. օր. – vi dirò, ձեզ կ'ըսեմ փոխանակ (պիտի)։

quel colpo inatteso, gettò un grido pel dolore e disse: «Buon per me che m'è caduta addosso una ghianda! Se fosse stata una zucca, il colpo mi avrebbe certamente rotto la testa».

Sdraiato, *ընկողմանած*, *պառկած*
la zucca, *դդումը*
il fusto, *ցօղունը*, *բունը*
créscere, *աճիլ*, *մեծնալ*
staccarsi, *փրթիլ*, *բաժնուիլ*
addosso, *թիկունք կամ մէկուսը վրայ*
gettare, *նետել*, *արձակել* (*ձայն*)
piante, *տունկեր*, *բոյսեր*.
La quercia, *կաղնին*
la ghianda, *խոզկաղինը*
maturare, *հասունցնել*
piccino, *փոքր*
inatteso, *անակնկալ*, *յանկարծակի*
rotto, *կոտրած*, *ջախջախած*
certamente, *ստուգիւ*, *անտարակոյս*
elevata, *բարձր*.

ՔՍԱՆԸՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Հարցական եւ բացագանչական դերանուններ եւ ածականներ

1. *Հարցական դերանուն կը կոչուին անոնք՝ որ իրենց մէջ կը կեղրոնացնեն հարցական նախադասութեան մը հարցումը. կամ թէ իրենց մէջ կ'ամփոփեն, զօրութեամբ, նոյն ինքն հարցական բոլոր նախադասութիւնը։ Օրինակ.*

Chi mi darà la voce e le parole? *ո՞վ ինձի պիտի տայ ձայն ու խօսք*

Che ti fa ciò? *ի՞նչ կ'ընէ քեզ այս բանս*

In *qual* parte del cielo? *երկնից ո՞ր մասին մէջ.*

2. *Հարցական դերանունները մաս մը միշտ իրենց գոյականաբար կը գործածուին, մաս մ'ալ մերթ գոյականաբար, մերթ ածականաբար։ Ահա պատկերը.*

1. – Միշտ գոյական.	ա. անձի. chi? ով բ. իրի. che cosa? ի՞նչ բան.
2. – Մերթ գոյական. մեծ ածական, մերթ անձի, մերթ իրի.	che? ի՞նչ, ի՞նչ բան quale, –i? ո՞րը, որո՞նք quanto, –a, –i, –e? ո՞րչափ.

Դիտողութիւն. – 1. Գոյական դերանունը, che cosa? կը գործածուի նաև իբրև ածականի մը, անորոշ իմաստով. և այն ժամանակ, քերականաբար և հանճարեղութեան տեսակետով կը նկատուի իբրև արական դերանուն, թէև իմաստով չեզոք ըլլայ։ Օրինակ.

Che cosa è accaduto? ի՞նչ պատահած է.

Ընտանեկան գործածութեան և ոճին մէջ մերթ cosa? ևս կը յապաւուի։

2. Che? գոյականաբար գործածուած՝ che cosa? ի իմաստ ունի. իսկ ածականաբար գործածուած՝ կը նշանակէ quale? Օրինակ.

Che fai? (այսինքն է, che cosa?) ի՞նչ կ'ընես
che animo fu il tuo? (այսինքն է, qual animo? ի՞նչ քաջութիւն եղաւ քուկդ.

3. Che, quale և quanto ևս պարզապէս բացագանչական են, առաջին երկուքը՝ եթէ ածականաբար գործածուած են, երրորդը՝ մերթ իբրև ածական, կամ իբրև գոյական։ Օրինակ.

Che notte orribile! ի՞նչ սոսկալի գիշեր
che tempo magnifico! ի՞նչ հրաշալի օդ
che (կամ quanta!) gente c'era, ի՞նչ (կամ ո՞րչափ) բազմութիւն
Quante sciagure! ո՞րչափ դժբաղդութիւնք [կար
quanto ho sofferto! ո՞րչափ կրած, նեղուած եմ
qual morte tragica! ի՞նչ եղերական մահ
qual raggio brilla di speme! ի՞նչ յուսոյ ճառագայթ կը նշողէ.

4. Հարցական նախադասութիւններն երկու տեսակ են.

ա. – Գլխաւոր, կամ ուղղակի
բ. – Կախեալ, կամ անուղղակի.

ա. Ուղղակի հարցականներն այն նախադասութիւններն են որ հարցում մ'ուղղակի կազմուրեամբ կ'ընեն՝ ո՛ և է բան մը գիտնալու համար։ Օրինակ.

Perchè turbarmi l'anima? ինչո՞ւ սիրտս կը խռովես.

բ. Անուղղակի հարցականներն այն նախադասութիւններն են որ կամ անուղղակի կազմուրեամբ հարցում մը կ'արտայայտեն՝ չգիտցած բան մ'իմանալու համար կամ անստուգութիւն մը, տարակոյս մը՝ որ մտքին մէջ է։ Օրինակ.

Vi domando *che cosa abbiate fatto*, ձեզ կը հարցնեմ թէ ինչ ըրած կրնաք ըլլալ.
Mi chiese subito *perchè non gli avessi scritto*, իսկոյն ինծի հարցուց, թէ ինչո՞ւ իրեն գրած չէի.

Ուզելով այս անուղղակի հարցումներն՝ համապատասխան ուղղակի հարցմանց փոխել, հետևեալ տարբերութիւնները կ'ունենանք։ Օրինակ.

Vi domando: «che cosa avete fatto?», ի՞նչ ըրիք
Mi chiese subito: «perchè non mi hai scritto?», ինչո՞ւ ինծի [չգրեցիր.

5. Գալով այս երեք դերանուններու հոլովմանց, դիտելի է.

ա. Chi կը գործածուի միայն իբրև եզակի արական, և խոտոր հոլովմանց մէջ կրնայ cui ձևն առնուլ. (Chi ti chiama? ով զքեզ կը կանչէ — A cui parli tu? որո՞ւն կը խօսիս դու)։

բ. Che, նաև ածականաբար գործածուած, սեռով և թուով անփոփոխ է. (Che modi son questi? ի՞նչ կերպեր են սոոնք)։

գ. Quale և quanto, անուանց պէս կը հոլովին. այսպէս նաև tanto։

Անձանց համար	Իրաց համար
Ո. Chi? ո՞վ	Ո. Che? ի՞նչ բան կամ ի՞նչ
Ս. di chi? որո՞ւն	Ս. di che? ի՞նչ բանի
Տ. a chi? որո՞ւն	Տ. a che? ի՞նչ բանի
Հ. chi? զո՞վ	Հ. che? ի՞նչ բանը, զի՞նչ
Բ. da chi? որմէ՞.	Բ. da che? ի՞նչ բանէ.

Եզակի	Յոգնակի
Ո. Quále? ո՞րը	Ս. Quáli? որո՞նք
Ս. di quale? որո՞ւն	Ս. di quali? որո՞նց
Տ. a quale? որո՞ւն	Տ. a quali? որո՞նց
Հ. quale? ո՞րը	Հ. quali? զորո՞նք
Բ. da quale? որմէ՞.	Բ. da quali? որոնցմէ՞.

Օրինակ

Che fate? ի՞նչ կ'ընէք (իր)
Chi dice? ո՞վ կ'ըսէ (անձ)

In *che cosa* ho potuto dispiacervi? ի՞նչ բանի մէջ զքեզ տհաճեցուցի.

Cosa direi? Direi che siete senza cuore, ի՞նչ պիտի ըսէի, պիտի ըսէի որ սիրտ չունիս կամ անգութ ես.

Quale, մի և նոյն տեսակէն անձ կամ իր մ'ընտրելու կը ծառայէ։ Օրինակ.

Quale di questi libri preferite? այս գրքերէն ո՞րը կը գերադասէք.

A quale dei due dareste ragione? երկուքէն որո՞ւն իրաւունք կուտայիք.

Di quale vi siete lamentato? որո՞ւն վրայ գանգատեցաք.

Di chi, essere բային հետ կը նշանակէ ստացում մը։ Օրինակ.

Di chi è questo coltello? որո՞ւ է այս դանակը.

Պէտք չէ բնաւ շփոթիլ chi հարցականը՝ che յաբաբերական դերանուան հետ. ինչպէս չըսուիր l'uomo chi... la donna chi... բայց կ'ըսուի։ Օրինակ.

Rimettetevi *a chi* intende la cosa, թողուցէք որ գործը հասկցողն ընէ.

Tutt'e due si vólsero a chi ne sapeva più di loro, երկուքն ալ անոր դիմեցին (դարձան), որ իրենցմէ աւելի գիտէր։

ԲԱՌԱՐԱՆ

Il tramónto, արևմուտքը
il ritrátto, կենդանագիրը
il passéggio, շրջագայութիւնը, [պտոյտը
sérvo, ծառայ
apríre, բանալ
chiúdere, փակել, գոցել
ingannáre, խաբել
Réggio, Ռէճճիոյ.
l'Ariósto, Արիոստոյ
aiutáre, օգնել
ringraziáre, շնորհակալ ըլլալ
sígaro, ծխագլան
l'úva, խաղողը
offérto, ընծայած, նուիրած
andar a passéggio, շրջագայութեան ելնել, պտոյտի երթալ.

ՀՐԱՀԱՆԳ 55.

Aprite queste finestre, per favore, e chiudete quelle. La tua lettera, quella di tua sorella e quelle che i tuoi cugini mi scrivevano da Firenze sono andate perdute. Cotesti è mio zio e quegli è mia nipote. Quelli che ti hanno detto ciò si

sono ingannati. Quale di questi due gattini vi piace di più? Di chi è questa bella casa? E di chi volete che sia? È la nostra. Chi è costui? È il servo del nostro vicino. Chi fà il suo dovere è sempre amato e stimato. Che intendete di dire con ciò? Costei vuol sempre aver ragione ed ha quasi sempre torto. Che cosa fate dopo il tramonto del sole? Cosa faccio? Vado a passeggio. Che dite? Non vi capisco. Hai ricevuto ciò che ti abbiamo mandato? Non ancora, non so nemmeno che cosa mi abbiate mandato, nè con qual mezzo.

ՀՐԱՀԱՆԳ 56.

Արիոստոյ և Տասսոյ մեծ բանաստեղծներ եղան, վերջինս (questi) Սորրէնտոյ ծնած է, և միւսը (quegli) Ռէճճիոյի մէջ։ Մենք տեսանք ձեր և կոմսին ծառաները (եզ.) (e quello del conte)։ Ո՛վ է այն (մարդը)։ Կը փափաքիմ որ դուք ընդունիք գիրք մը նման անոր զոր անցեալ շաբաթ կարդացիք։ Անոնք որ քեզի այս բանս ըսին, ուզեցին զքեզ խաբել։ Հասկցա՞ր ինչ որ այս երիտասարդը քեզի ըսաւ։ Որո՞ւ ըսիք զասիկայ։ Որո՞ւ հետ կը խօսիք։ Ի՞նչ կ'ընէք հոն։ Ինչ կ'ընե՞մ։ Ի՞նչ բանի մէջ կրնամ քեզ օգնել։ Որո՞ւ համար են -այն ծխագլանները։ Քեզի համար են, եթէ կ'ուզես։ Շնորհակալ եմ (le ringrazio), պարո՛ն։ Իրա՞ւ կ'ըսես (è giusto? certo?)։ Անիկայ իմս չէ, քրոջս է (անիկայ)։ Անիկայ ինձ նուիրեց իւր պատկերը և իւր որդւոյնը։

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

I tre caratteri

Volendo Enrico IV far conoscere in un momento il carattere dei suoi ministri ad un ambasciatore straniero, li fece chiamare separatamente l'uno dopo l'altro, e disse loro: «Ecco un trave che minaccia rovina». Villeroi, senza neppure alzare gli occhi, consigliò di farlo cambiare lì per lì. Jeannin, dopo aver guardato con attenzione, confessò che non

ne scorgeva il difetto; ma per non correre nessun pericolo, credeva che fosse prudente il far vedere il trave a persone dell'arte. Sully venne per l'ultimo, il quale interrogato alla sua volta, rispose asciutto: «Sire, chi ha potuto cagionarvi tale timore? Questo trave durerà più di voi e di me».

Villeroi era timido, Jeannin titubante, Sully sicuro del fatto suo.

Il carattere, բնաւորութիւնը
lì per lì, իսկոյն, շուտով
il pericolo, վտանգը
durare, տևել, տոկալ
difetto, թերութիւն
cagionare, պատճառել.
Il trave, գերան, հեծան
scórgere, նշմարել, տեսնել
asciutto, չոր, ցամաք
interrogare, հարցնել
prudente, խոհեմ
titubante, երկմիտ, տարակուսող.

ՔՍԱՆԸԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Յարաբերական դերանուններ

Իտալերէնի մէջ երկու ընդհանուր յարաբերական դերանուն կայ, che և cui, և մէկ մասնական, quale, որոնք հետևեալ կերպով կը հոլովին։

Եզակի և Յոգ. Արական և Իգ.

Ո. Che, որ
Ս. (di che), di cui, որուն
Տ. (a che), a cui, cui, որուն
Հ. Che, cui, զոր
Բ. (da che), da cui, որմէ
Գ. (per che), per cui, (con che) con cui, որով.

Եզակի	Յոգնակի
Ար. Իգ.	Ար. Իգ.
Ո. Il, la quale, որը	I, le quali, որոնք
Ս. del, della quale, որուն	dei, delle quali, որոնց
Տ. al, alla quale, որուն	ai, alle quali, որոնց
Հ. il, la quale, զոր	i, le quali, զորս
Բ. dal, dalla quale, որմէ.	dai, dalle quali, որոնցմէ.

Che, գոյականներու հետ կը գործածուի իբրև անուն բայի և իբրև խնդիր, առանց թուոյ և սեռի խարութեան։ Օրինակ.

L'uomo che cammina, մարդը որ կը քալէ
L'uomo che vedete, մարդը զոր կը տեսնէք
Le donne che parlano, կիներն որ կը խօսին
Le donne che ascoltate, կիներն որոնց կը լսէք.

Cui, կը նշանակէ՝ որուն և սովէպ միասին կը գործածուի a, di, da, per, su, in նախադրութիւններու հետ։ Մերթ փոխանակ ասոնց՝ ove, dove և donde անփոփոխ ձևերը կարելի է գործածել։ Օրինակ.

La casa *in cui* (ove, dove) stavo, տունը՝ որուն մէջ կը կենայի (բնակէի).
Il punto *da cui* (donde) parto, տեղը՝ ուսկից կը մեկնիմ
Il fanciullo *di cui* parlate è mio cugino, տղան՝ որուն վրայ կը խօսիք՝ հօրեղբօրորդիս է.
La bambina (*a*) *cui* faceste tanti rimpróveri è sua sorella, աղջիկը զոր այնչափ կը յանդիմանես՝ իւր քոյրն է.
Al cui padre, որուն հայրը.

Դարձեալ, փոխանակ che, cui և quale փոփոխուող դերանուններու սեռ. տր. բաց. և գործ. հոլովներուն՝ պարբերութեան մէջ կարելի է onde, donde (ուսկից) անփոփոխ դերանունները գործածել։

Օրինակ

La difficoltà onde mi parlate (= di cui), դժուարութիւնը՝ որուն վրայ ինծի կը խօսիք.
Il luogo onde tu vieni (dal quale), այն տեղը՝ ուսկից դուն կու գաս.

Ամբի հազուադէպ։ Օրինակ.

I mezzi onde potrò raggiungere (= con i quali), միջոցները՝ որոնցմով պիտի կարենամ յաջողիլ.
Le ragioni onde non fu possibile (= per le quali), պատճառները՝ որոնց համար կարելի չեղաւ.

Quale, յարաբ. դերանունը զանազան իմաստներով կը գործածուի։

1. Quale, ուղղակի և որոշ իմաստ մը կը բացատրէ և կը նշանակէ որ, ու միշտ յօդով կը բանի։ Օրինակ.

Le donne *le quali* uscirono, կիները՝ որոնք դուրս ելան.
Ecco un amico *dal quale* non posso staccarmi, ահաւասիկ բարեկամ մը, ուսկից չեմ կրնար բաժնուիլ.

2. Quale, յաճախ կը գլուի նաև come, իբրև նախադրութեան տեղ։ Օրինակ.

Il presidente del consiglio, come (quale) ministro dell'interno, խորհրդոյ նախագահը, իբրև ներքին (գործոց) պաշտօնեայ.

3. Quale, երբ կը կրկնուի պարբերութեան մէջ, կը նշանակէ, ոմն, մէկը... միւսը, ոմանք... ուրիշները։

Օրինակ

Quale era buono quale cattivo, *ոմն լաւ էր, ոմն գէշ.*

4. *Բանաստեղծութեանց մէջ յաճախ կը գտնուի* onde *ուսկից, փոխանակ* di cui, del quale, da cui: *Օրինակ.*

Que' begli occhi ond'escono saétte, *այն գեղեցիկ աչքերը որ սլաքներ կ'արձակեն, կամ ուսկից նետեր կը տեղան.*

Chi, 1. *կը նշանակէ ով որ: Օրինակ.*

Chi parla sémina, chi ascolta miéte, *ով որ կը խօսի՝ կը սերմանէ, ով որ կը լսէ՝ կը հնձէ.*

Chi troppo abbraccia nulla stringe, *ով որ շատ բանի ձեռք կը զարնէ՝ բան չի շահիր.*

2. Chi... chi, *կը նշանակէ ոմն... ոմն. ոմանք... ուրիշները: Օրինակ.*

Chi piangeva, *chi* gridava: era uno spavento generale, *ոմն կուլար, ոմն կը պոռար, ընդհանուր արհաւիրք մ'էր.*

ԲԱՌԱՐԱՆ

La cuóca, *խոհարարուհին*
il cibo, *կերակուրը*
il favóre, *նպաստը, շնորհքը*
far un favóre, *հաճոյք կամ [շնորհք մ'ընել*
il mónte, *լեռը*
menáre, *տանիլ*
condúrre, *առաջնորդել*
guaríre (-isco), *բժշկել.*
Indirízzo, *հասցէ (նամակի)*
inconsolábile, *անմխիթար*
il nástro, *ժապաւէնը, երիզը*
il piátto, *պնակը, (ուտեստ, կերակուր)*
ricuperáre, *վերստին ստանալ, [շահիլ, գտնել*
essere premiáto, *վարձատրուիլ*
discéndere, *իջնել.*

ՀՐԱՀԱՆԳ 57.

Quel che si dice non è sempre quel che si pensa. Ecco l'uomo che ci ha condotti alla stazione. Dov'è la donna che vende ciliege? Ecco là il monte sul quale noi siamo stati ieri. Emilia ha perduto il nastro che le aveva dato sua zia. Il piatto di cui parlate, non l'ho mai mangiato. Il signore a cui ho dato la lettera, non ha detto niente. Gli allievi i cui genitori arriveranno oggi sono molto contenti. La lettera di tuo zio, la quale mi fu portata da un amico, mi fece un gran piacere. È questa la casa che avete comperata? No, è quell'altra laggiù dalla quale esce quel vecchio signore. La stanza nella quale lavoro è assai fredda. La ringrazio di tutto ciò che Ella fa per me e per la mia famiglia. Ho sentito che il vostro lavoro fu premiato all'Esposizione Universale, il che mi ha arrecato un gran piacere. I nostri amici sono (così) fedeli come i loro.

ՀՐԱՀԱՆԳ 58.

Ստարականն որ կորուսած է բոլոր իւր դրամը՝ Անգղիացի մ'է: Երիտասարդն որ այս առտու կը շրջագայէր մեր պարտիզին մէջ՝ իմ եղբայրս էր: Ինչպէս, այն պարոնը զոր տեսայ, երկու տարիէ ի վեր ձեր քեռիին քո՞ղն էր: Ճամբորդն որուն վրայ ինձ խօսեցար՝ անոր հետ մեկնեցաւ: Կինն որուն այն հոգ-մահարը տուիր՝ հիւանդ է: Ոմանք ինձ իրաւունք կու տային, ուրիշները զիս յանցաւոր կը համարէին: Սպասելով չեմ կրնար վերստին ստանալ իմ դրամս, այս էր որ (il che, il quale) *զիս մեծ շփոթութեան մը մէջ կը գնէր: Շնորհք մ'ըրէ ինձ, բժշկի մը հասցէն տուր, որ կարող ըլլայ* (che sia capace) *զիս բժշկել: Կերակուրներն որոնց վրայ կը խօսիք՝ մեր ճաշակին* (gusto) *չեն գար: Երկիրը* (paese) *ուսկից կու գամ, ընտանիքը՝ որոնց (քով) կ'իջնամ՝ ինձի ի նպաստ կը խօսին: Բոլոր լսածներդ պատմեցէ՞ր: Պատմեցի ինչ որ յիշեցի (միտքս եկաւ):*

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

Il pescatore

Un pescatore aveva preso nell'Arno un luccio di straordinaria grossezza, e siccome sapeva che il Granduca era grande amatore di cose rare, volle portare a lui la sua preda. Se ne andò dunque al palazzo; ma il guardaportone non voleva lasciarlo a passare, a meno che non cedesse a lui la metà di ciò che avrebbe ricevuto in compenso. Il nostr'uomo promise ed entrò.

Il Granduca restò assai meravigliato della gran mole del pesce, e disse al suo tesoriere: «Date cento ducati a quest'uomo». Ma il pescatore inchinandosi rispettosamente: «Altezza, disse, se mi è lecito domandarvi una grazia, ordinate che invece di quel danaro, mi si diano cento bastonate».

— «Che vuol dir ciò» chiese con meraviglia il Granduca, ed il pescatore narrò quanto gli era occorso coll'avaro guardaportone. Per la qual cosa sdegnato, il principe disse: «Cento e cento fanno duecento: tu riceverai i tuoi cento ducati e le cento bastonate saranno per lui in pena della sua cupidigia».

Il luccio, *գայլաձուկն*
la gran mole, *զանգուածը, քանակը*
occorso, *հանդիպած*
meravigliato, *զարմացած*
straordinario, *տարօրինակ*
in compenso, *ի վարձատրութիւն.*
Il guardaportone, *դռնապանը*
inchinarsi, *խոնարհիլ, յարգանք ընել*
la cupidigia, *ցանկութիւնը*
rispettosamente, *յարգանօք*
pescatore, *ձկնորս*
narrò, *պատմեց*
quanto, *ինչ որ, որչափ.*

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Կրաւորական բայեր

1. *Կրաւորական լծորդութիւնը կը կազմուի* essere *օժանդակ բային միութեամբ՝ լծորդուող բայի անցեալ դերբային հետ, ամէն ժամանակի և եղանակի հետ։ Օրինակ.*

Ներգործական ձև.		*Կրաւորական ձև.*
Lodo, *կը գովեմ*	*Սահմ. Ներկ.*	Sono lodato, *գովուած եմ*
lodava, *կը գովէի*	» *Անկ.*	era » » *էի*
scriverà, *պիտի գրէ*	» *Ապառ.*	sarà scritto, *պիտի գրուի*
nutrii, *սնուցի*	» *Կատար.*	fui nutrito, *սնուցուեցայ*
abbiamo ferito, *վիրաւորեցինք*	» *Ն. Բաղ.*	siamo stati feriti, *վիրաւորուեցանք*
respingessi, *որ մերժէի*	*Պտոր. Անկ.*	fossi respinto, *մերժուած ըլլայի*
abbia lodato, *որ գովեմ*	» *Ն. Բաղ.*	sia stato lodato, *որ գովուիմ, գովուած ըլլայ*
lèggere, *կարդալ*	*Անհրաժեշտ*	essere letto, *կարդացուիլ*
amando, *սիրելով*	*Դերբայ*	essendo amato, *սիրուելով.*

2. *Բայի պարզ ժամանակներուն մէջ (Ներկայ, Անկատար, Կատարեալ և Ապառնի)* essere *օժանդակին տեղ կրնայ փոխանակուիլ* venire *գալ. (սակայն ո՛չ նաև Հրամայականին մէջ)։ Օրինակ.*

Սահմ. Ներկայ.	Sono nutrito *կամ*		vengo nutrito, *կը սնանիմ*
» *Կատ.*	fui allevato	»	venni allevato, *սնայ*
Պտոր. Անկ.	fossi preso	»	venissi preso, *որ բռնուէի*
Թուական Ներկ.	sarei amato	»	verrei amato, *կը սիրուէի.*

Օրինակ

L'uscio *è* chiuso, դուռը գոցուած է, կամ գոց է
L'uscio *viene* chiuso, դուռը կը գոցուի
Mi *è* detto, ինձ ըսուած է
Mi *vien* detto, ինձ ըսուած է, ինձ կ'ըսուի.

3. Կրաւորական ձևի եզ. 3րդ. և յբ. 3րդ. դէմքերը կրնան արտայայտուիլ նաև si դերանունով, նախադաս (կամ վերադիր՝) համապատասխան ներգործական ձևին։ Օրինակ.

Questo metodo *si apprezza* da molti (= è apprezzato), այս ոճը շատերէն կը գնահատուի.

Questi libri si lodano (= vengono lodati), այս գրքերը կը գովուին.

Domani si parlerà di me (= sarà parlato), վաղը իմ վրաս պիտի խօսուի.

Ծանօթութիւն. — Այս եզ. 3րդ. դէմքի si դերանունը ձևը՝ կը զբաղուի նաև անցողական և չեզոք բայերուն հետ։ Օրինակ.

Per me si va, ինձմով կ'երթցուի
così si sta meglio, այսպէս լաւ է.

բայց այն ժամանակ՝ կրաւորականէն աւելի ներգործական կը նկատուի՝ անորոշ անուն բայիով։

Պարզ ժամանակներ. Անորոշ

Essere lodato, գովուած ըլլալ, *essere lodata*. -*i*, e.

Սահմանական Ներկայ

Io sono lodato, -a, կը գովուիմ կամ գովուած եմ
tu sei lodato, -a, կը գովուիս
egli è lodato, կը գովուի
ella è lodata, կը գովուի.

Noi siamo lodati, -e, կը գովուինք կամ գովուած ենք
voi siete lodati, -e, կը գովուիք
essi sono lodati, կը գովուին
esse sono lodate, կը գովուին.

Անկատար

Io era lodato, -a, կը գովուէի.

Կատարեալ

Io fui lodato, -a, գովուած եղայ, գովուեցայ.

Ապառնի

Io sarò lodato, -a, գովուած պիտի ըլլամ, պիտի գովուիմ.

Թեական Եղ. Ներկայ

Io sarei lodato, -a, գովուած պիտի ըլլայի կամ կ'ըլլայի.

Հրամայական

Sii lodato, -a, գովուէ, (գովուած եղիր)
non essere lodato, -a, մի՛ գովուիր, չի գովուիս
siamo lodati, -e, թող գովուինք, գովուած ըլլանք
siate lodati, -e, գովուեցէք, գովուած եղէք.

Ստորադասական Ներկայ

Ch'io sia lodato, -a, որ գովուիմ.

Անկատար

Ch'io fossi lodato, -a, որ գովուէի.

Անցեալ դերբայ

Stato, -a, -i, -e, lodato, -a, -i, -e, գովուած.

Դերբայ

Essendo lodato, -a, -i, -e, գովուած ըլլալով.

Բաղադրեալ Ժամանակներ

Անորիշ Անցեալ

Essere stato, -a, -i, -e, lodato, -a, -i, -e, գովուած ըլլալ [կամ գովուիլ.

Սահմանական Յարակատար

Io sono { stato lodato, stata lodata, } գովուած եմ.

Դերակատար

Io era { stato lodato, stata lodata, } գովուած էի.

Անցեալ կատարեալ

Io fui { stato lodato, stata lodata, } գովուած եղայ, գովուեցայ.

Ապառնի

Io sarò { stato lodato, stata lodata, } գովուած պիտի ըլլամ, պիտի գովուիմ.

Թեական Անցեալ

Io sarèi stato lodato, գովուած կ'ըլլայի... պիտի գովուէի.

Ստորադասական Եղանակ Յարակատար

Ch'io sia stato lodato, որ գովուած ըլլամ.

Դերակատար

Ch'io fossi stato lodato, որ գովուած ըլլայի.

Դերբայ

Եզակի. Essendo, { stato lodato, stata lodata, } գովուած ըլլալով.

Յոգ. Essendo, { stati lodati, state lodate, } գովուած ըլլալով.

ԲԱՌԱՐԱՆ

Maéstro, վարժապետ
studióso, փութաջան, ուսումնասէր
atténto, ուշադիր, մտադիր
tedésco, գերմանացի
battáglia, պատերազմ, մարտ
puntualménte, ճշգրիտեամբ
sciaboláta, սուրի հարուած
collégio, դպրոց, ուսումնարան.
Ucciso, սպաննուած, սպաննած
celebérrimo, ամենաերևելի
compositóre, երաժիշտ, նուագարարդար
virtuóso, առաքինի
osserváre, պահել
ferito, վիրաւորուած, վիրաւորած
stimáre, յարգել
ricompensársi, վարձատրուիլ.

ՀՐԱՀԱՆԳ 59.

Mio figlio Teodoro è amato e lodato da tutti i suoi maestri, perchè egli è studioso e attento. Gustavo Adolfo, re di Svezia, fu ucciso alla battaglia di Lutzen. Mozart, celeberrimo compositore tedesco, morì molto giovane nella città di Vienna. Se siete virtuosi, sarete amati e stimati da tutti. Abbiate cura che le leggi siano osservate puntualmente. Dalle mie finestre si vedono due chiese. Un soldato venne ferito da una sciabolata.

ՀՐԱՀԱՆԳ 60.

Ինձ ըսուեցաւ որ քու եղբայրդ հիւանդ էր։ Ցնողքէս սիրուած եմ։ Այս տղան դպրոցէն ետ դրկուած էր։ Այս ուսումնարանին մէջ 6ին կ'ելնեն (si alzano)։ *Վերջին պատերազմին մէջ 50 զինուոր սպաննուեցան և 20 հոգի վիրաւորուեցան։ Զօրավարն* (capitano) *ալ վիրաւորուած է։ Կարծեմ թէ ոչ* (di no)։ *Կ'ըսուի թէ Իտալիոյ թագաւորը Թուրին մեկնած է։ Զինուորները վարձատրուեցան թագաւորէն։*

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

È passato il tempo in cui Berta filava

Berta aveva filato un sottilissimo filo e l'aveva portato al mercato di Mantova per venderlo. Ma non trovando compratori che volessero pagarle quanto essa chiedeva, pensò di farne dono ad Enrico IV di Germania che appunto si trovava in quella città.

«Ti ringrazio, o abile Berta, le disse l'imperatore e per mostrarti quanto apprezzo il tuo dono, anch'io voglio farti un regalo». E le comperò tanto terreno quanto ne poteva abbracciare il suo filo. Così Berta per la generosità del principe divenne ricca.

L'imperatore partì e fu di ritorno dopo sei mesi: alcune fanciulle invidiose vennero allora ad offrirgli un filo ancor più sottile di quello di Berta. Ma il principe disse loro: «Me ne duole, o fanciulle, ma non posso contraccambiarvi con altri doni, perchè durante la mia assenza son divenuto povero anch'io». Pur troppo è passato il tempo che Berta filava.

Sottíle, *նուրբ, բարակ*
il regalo, *պարգևը*
apprezzo, *կը գնահատեմ.*
Appunto, *ճիշդ*
me ne duole, *կը ցաւիմ*
offrírgli, *ընծայել անոր.*

ԵՐԵՍՈՒՆԸՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՍ

Չէզոք բայեր. (Verbi neutri)

Չէզոք բայերը կը ցուցնեն գործ մը կամ վիճակ մը որ ուրիշի վրայ չանցնիր կամ ազդեցութիւն մը չըներ, այլ միայն անուն բայիին մէջ կը մնայ։ Իրենց բաղադրեալ ժամանակները կը կազմուին՝ երբեմն avere *երբեմն* essere *օժանդակ բայերով։*

Զուտ չէզոք բայերը՝ essere *կ'առնուն. ինչպէս* sono andato, *գացած եմ կամ գնացի.* è caduto *ինկած է. Բացառութիւն կը կազմեն միայն,* dormire *քնանալ.* pranzare *կամ* desinare *ճաշել,* passeggiare *շրջագայիլ,* sonnecchiare *մրափիլ,* starnutare *փռընգտալ։*

Ահաւասիկ գործածական չէզոք բայերու այբուբենական ցուցակ մը.

Essere *-ով*	Avere *-ով*
Accórrere, *վազել*	Aderíre, *միանալ, մէկուն կողմը յարիլ*
andáre, *երթալ*	approdáre, *ցամաք ելնել*
arriváre, *հասնիլ*	aspiráre, *փափաքիլ*
avvenire, *ըլլալ, պատահել*	Balláre, *պարել*
Bastáre, *բաւել*	Camminére, *քալել, շրջիլ*
bisognáre, *պէտք ըլլալ*	cedére, *տեղի տալ, զիջանիլ*
Cadére, *իյնալ*	cenáre, *ճաշել, ընթրել*
comparíre, *երևնալ*	cessáre, *դադրիլ*
convenire, *պատշաճիլ* (avere[1])	convenire, *պատշաճիլ*
córrere, *վազել* (avere)	

1. *Այն բայերն որոնց առջև փակագծի մէջ կը գտնուին* avere *կամ* essere *կը նշանակեն թէ ըստ խմաստին երկուքովն ալ կը բանին։*

Essere -ով

costáre, արժել
créscere, աճիլ, (avere)
Discéndere, իջնել
divenire, ըլլալ
Entráre, մտնել
Fuggíre, փախչել (avere)
Geláre, սառիլ
giúngere, հասնիլ (avere)
Interveníre, պատահել
invecchiáre, ծերանալ
Marcíre, փտիլ, թարախոտիլ
morire, մեռնիլ (avere)
Náscere, ծնանիլ
Parére, երևնալ
passáre, անցնիլ (avere)
piacére, սիրել, ախորժիլ (avere)
Rimanére, մնալ
risanáre, առողջանալ
ritornáre, եկաւ դառնալ (avere)
Salíre, վեր ելնել (avere)
saltáre, ցատքել (վեր վեր) (avere)
scappáre, փախչիլ
scadére, իյնալ (պաշտօնէն...)
scéndere, իջնել
scórrere, վազել, սահիլ
spiráre, հոգին աւանդել
Uscíre, դուրս ելնել
Veníre, գալ
vívere, ապրիլ.

Avere -ով

créscere, աճիլ
Danzáre, պար բռնել
degeneráre, (նաև essere) օտարանալ, տարասեռիլ
dimoráre, բնակիլ
dormíre, քնանալ
Fuggíre, փախչիլ
Giúngere, հասնիլ
godére, վայելել
Impallidíre, ժժգունիլ
incontráre, հանդիպիլ
invecchiáre, ծերանալ
Mangiáre, ուտել
Naufragáre, նաւաբեկիլ, նաւակոծիլ
nuotáre, լողալ
Passáre, անցնիլ, մոռնալ
piángere, լալ
Ridíre, դարձեալ ըսել, կրկնել
ritornáre, եկաւ դառնալ
Saltáre, ցատքել (վեր)
seguíre, հետևիլ, եկեղեցի երթալ
soggiacére, ընկճիլ (ծանրութեան տակ)
sognáre, երազել
sonnecchiáre, մրափել
starnutáre, փռընգտալ
suonáre, զարնել, հնչել (գործիք մը, ժամը)

Avere -ով

Tacére, լռել
tossíre, հազալ
Viaggiáre, ճամբորդել
voláre, թռչիլ (essere).

Այս բայերէն շատերը՝ որ երկու օժանդակով ալ կը լծորդուին, ասով միայն կը զանազանին որ avere ով գործածուողները կը պահանջեն խնդիր մը՝ ընդհանրապէս անորիշ դերբայ, և գրեթէ ներգործական բայի ոյժ կ'ունենան. մինչդեռ essere ովները խնդիր չեն առնուր։ Օրինակ.

Ha cessato d'importunarmi, այլ ևս զիս չի ձանձրացներ (խնդիրով). — Բայց. — La guerra è cessata (առանց խնդիրի) պատերազմը դադրած է։

Suonare հնչել (ժամը), essere կ'ուզէ. օր. Sono suonate le 3, ժամը 3 զարկած է։ Իբրև անցողական կամ ներգործական բայ, avere ով կը խոնարհի. օր. Chi ha suonato le campane? ո՞վ զարկաւ զանգակները։

Այս բայերէն շատերուն մէջ avere և essereի գործածութիւնը ըստ կամս է։ Այժմեան լեզուի մէջ, այն բայերը որ եղանակը կամ օդոյ բարեխառնութիւնը կը բացատրեն՝ առաւելութեամբ մը՝ essere կ'առնուն. օր. È piovuto, անձրևած է. è nevicato, ձիւնած է. և այլն։

ԲԱՌԱՐԱՆ

Grída, աղաղակ, գոչիւն
odiérno, այս օրուան, մեր օրերուն
arrossíre, կարմրիլ
spióne, լրտես
odiáto, ատուած, ատած
pervérso, գէշ, գարշելի.
Impoveriti, աղքատացած
scoppiáre, ճայթիլ
scoppiáre di risa, բարձրաձայն ծիծաղիլ
scátola, տուփ
duránte, ժամանակ (այս ինչ... մէջ
fiúme, գետ.

ՀՐԱՀԱՆԳ 61.

Tutti erano accorsi a quelle grida. Sono tempi passati, amico, caro mio; abbiamo invecchiato ed il mondo con noi. Si dice che molti Romani odierni siano impoveriti. Quando domandai di voi, mi si disse che eravate uscito già da un'ora. Perchè avete arrossito? Non è ancora cessata la pioggia? Il giudice scoppiò dalle risa, allorchè il così detto spióne venne condotto in sua presenza. Finalmente le due scátole sono arrivate. La vostra condotta non è piaciuta a nessuno. Vi è piaciuto la nuova ópera, Signora? Siamo giunti alla fine del luogo di cui vi ho parlato. Perchè si sono odiati tanto questi nemici? Questi signori si sono scritte molte lettere durante la loro separazione.

ՀՐԱՀԱՆԳ 62.

Քաղքին (ար.) մօտեցած ենք (ci siamo): Ի՞նչ կ'ըսուի Ոիմ-տորի տիկնոջ վրայ: Կը խօսուի՞ դեռ պատերազմի վրայ: Ի՞նչ լուր կայ (che ne è) բարեկամիդ վրայ (del tuo) որ հայրենի-քէն փախած է: Անտարակոյս ցամաք պիտի մօտեցած ըլլայինք (approdati) եթէ օդը զէշ չըլլար: Ինչո՞ւ այնչափ վազեցիք (siete corso): Զինուորները գետը անցած էին: Իւր պատասխանը գիտ չատ տհաճեցուց (mi è dispiaciuto): Այս մարդը 84 տարի ապրե-ցաւ (է): Նուաճուեցանք, այո՛, բայց մինչև վերջը (fino agli estremi) զմեզ պաշտպանեցինք: Ինչո՞ւ ժժգունած էք: Անհաւասիկ տեղը, ուր նաւը նաւաբեկած էր երկու ամիս առաջ (due mesi fa): Ո՞ր տան մէջ բնակեցաք անցեալ տարի: Բոլոր օրը չրջե-ցայ: Անձրե՞ւ եկած է: Ո՛չ, ձիւնած է:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

Presenza di spirito

Ad un medico assai valente era stata affidata la direzione di un manicomio. Or avvenne che un giorno, discorrendo coi pazzi, secondo il suo costume, domandò loro se avessero

qualche lagnanza a muovergli. Gli risposero che erano contenti di tutto, tranne della zuppa che era sempre troppo magra.

Il buon medico li rassicurò che vi avrebbe prontamente rimediato, e corse difilato dal cuoco per fargliene solenne rimprovero. Appena uscito il medico, i pazzi concertarono fra di loro di impinguar la zuppa gettando il buon medico stesso nella caldaia; ed appena questi fu di ritorno, gli dissero senza reticenze il loro feroce divisamento.

Senza punto lasciarsi sgomentare dal pericolo di essere cotto a lesso, rispose loro: «Il vostro progetto è ottimo; son piuttosto grasso e giovane ancora, quindi farò un buon brodo; ma così col vestito come sono, i miei abiti darebbero cattivo gusto alla zuppa. Andrò dunque a svestirmi, e quando sarò bel nudo mi getterò da me stesso nella caldaia».

I pazzi trovarono la cosa assai giusta, ed il medico, uscito da quel pericolo, se la diede a gambe, e non fece mai più ritorno.

Il manicomio, խենթանոցը	La lagnanza, տրտունջը
a muóvergli, իրեն ընելու	difilato, ուղղակի
impinguare, պարարտացնել	la caldaia, կաթսան, սանը
il divisamento, որոշողութիւնը	se la diede a gambe, փախաւ
il brodo, մսի ջուրը	sgomentare, վախնալ, սարսա-[փիլ
valente, ճարտար.	tranne, բաց ի.

Հարցումն

Che cos' era stato affidato ad un medico assai valente?
Di che si lagnarono un giorno i pazzi?
Qual promessa fece loro il medico?
Appena egli fu uscito, che idea ebbero i pazzi?
Che rispose il medico senza sgomentarsi?
Come si salvò da quel pericolo?

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Անդրադարձ Բայեր

(Verbi reflessi կամ Pronomináli)

